Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ԲՈԳԴԱՆ ԳԵՄԲԱՐՍԿԻ

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՇԽԱՐՀԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲՈԳԴԱՆ ԳԵՄԲԱՐՍԿԻ

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՇԽԱՐՀԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ — 1990

Գ 429
ԳՄԴ 63.3(2Հ)+84.4Ռ

Կազմեց, խմբագրեց, ծանոթագրեց, վերջաբանը գրեց Համլետ Կարճիկյանը

Գեմբարսկի, Բ. Ա.
Գ429 Նամակներ աշխարհին /Կազմ. ծանոթագր., խմբ. և վերջաբանը Հ. Կարճիկյանը, Երևանի պետ. համալս.— Եր.: Երևանի համալս. հրատ., 1990.— 150 էջ.

Լեհ հրապարակախոս, հակաֆաշիստ գործիչ, թարգմանիչ, գրող Բոգդան Գեմբարսկու «Նամակներ աշխարհին» ժողովածուն ամփոփում է նրա մի շարք հակաթուրքական հոդվածները՝ Հայոց արդար դատի պաշտպանությամբ: Հանդես գալով 60—70-ական թթ., Գեմբարսկին մեծ կրքով դատապարտեց 1915 թ. ցեղասպանությունը, աշխարհի անտարբերությունը հայ ժողովրդի բռնադատված ճակատագրի հանդեպ և բարոյա-իրավաբանական գործոններով ապացուցեց, որ հայ ժողովրդի իրավունքները պետք է վերականգնվեն իր խլված հայրենիքի որոշակի սահմանների վրա:

Կազմողի խնդրանքով գրքի իրեն հասանելիք հոնորարը փոխանցվում է «Ամարաս» բարեգործական միությանը:

Գ 0503020918 / 704(02)—90 ԳՄԴ 63.3(2Հ)+84.4Ռ

ISBN 5-8084-0162-8

© Գեմբարսկի, Բ. Ա., 1990

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ Բ. ԳԵՄԲԱՐՍԿՈՒՆ*

Սիրելի Գեմբարսկի:

Ժողովրդի պատմության մեջ մնալը մեծ փառք է: Երջանիկ են այն արվեստագետները, մտածողներն ու գործիչները, որոնք հիշվում են ժողովրդի կողմից, դառնում են նրա սիրված անուններից մեկը: Առավել մեծ է, երբ այդպիսի մի մարդու սիրում է մեկ ուրիշ, մի այլ ժողովուրդ: Դա խոսում է նրա մարդկայնության, մարդասիրության, արդարամտության մասին:

Մենք սիրում ենք Ձեզ, սիրում ենք, որովհետև Դուք մասնակցեցիք մեր բախտի, մեր ճակատագրի պայքարին, պայքար, որ դեռ երկար է շարունակվելու:

Ես հիացմունքով եմ տալիս Ձեր անունը՝ որպես Մեծ Մարդու, արդարամիտ լեհի, լեհ, որը իրավունք ունի լեհ կոչվել հենց նրա համար, որ իրեն երբեք օտար չէ մի այլ ազգի վիշտը, դժբախտ վիճակը:

Հեռու հեռվից համբուրում եմ Ձեզ, իմ լավ, իմ քաջ լեհ քարեկամ: Դու նման ես քո հպարտ, ազատասեր ժողովրդին: Ողջունում եմ քո ժողովրդին: Թող աշխարհում արդարություն լինի, այնպիսի արդարություն, ինչպիսին երազում ես դու իմ ժողովրդի համար:

Երևան, 1962թ., հունիսի երեք

---

* Տպագրվել է «Երեկոյան Երևան» թերթի 1989 թ. դեկտեմբերի 15-ի համարում՝ Անահիտ Տեր-Ղազարյանի հրապարակմամբ

Դեմոնստրացիա վերջին տասնամյակում

ՆԱՄԱԿ ԻՄ ՀԻՆ ԹՈՒՐՔ ԾԱՆՈԹԻՆ*

Նամակդ ինձ համար մի հաճելի անակնկալ էր: Հետ սովորեցինք մենք արդեն ձեր երկրի հետ ունեցած նամակագրությունից, քանի որ քո հայրենակիցները մինչև օրս սիրով չէին պատասխանում Լեհաստանից ստացված նամակներին, թեև կարող է պատահել նաև, որ նամակները բոլոր դեպքերում չէ, որ հասել են ձեզ: Այժմ գուցե աստիճանաբար փոփոխություն նկատվի դեպի լավը և հայրենիքդ դադարի ասիական այն երկու-երեք երկրներից մեկը լինելուց, որոնք Լեհաստանին առհասարակ վատ աչքով են նայում:

Վերջին նամակումդ գոհունակություն ես հայտնում այն առթիվ, որ 1960 թվականը միանգամից այնքան գաղութների ազատագրման տարի եղավ, թեև քո երկիրը երբեք գաղութ չի եղել բառիս բուն իմաստով, իսկ նեգրերը որպես այդպիսիք առանձնապես չեն հետաքրքրում քեզ: Նամակիդ վերջում առանձնապես ուրախանում ես, որ Լեհաստանը հետ է ստացել իր հնագույն հողերը Արևմուտքում, սակայն մոռանում ես ասել, որ լեհերն էլ քեզ քիչ են հետաքրքրում:

Մի ժամանակ, շատ տարիներ առաջ, դու այցելեցիր մեր երկիրը: Երկուսս էլ այն ժամանակ բավական երիտասարդ էինք և շատ հետաքրքրասեր. քեզ հետաքրքրում էր Լեհաստանը, ինձ՝ մեզ համար էկզոտիկ քո ժողովուրդը, որի բախտը նախախնամության կարգով շատ տարիներ առաջ այնպես խաչաձևվեց մերի հետ, և այդ՝ ի վնաս երկուսիս: Սովորաբար հենց այնպես է լինում, երբ երկու պետություն միաժամանակ որպես պատվար են ճանաչվում երկու իրարամերժ կրոնների և 240 տարվա փոխադարձ սպանություններից հետո հավասարակշռվում են 0—0 հարաբերությամբ՝ ի անկեղծ ուրախու-

---

* Տպագրվել է «Ավանգարդ» թերթի 1989 թ. դեկտեմբերի 13-ի համարում՝ Հ. Կարճիկյանի հրապարակմամբ:

թյուն հարևանների, որոնց համար մեր ընդհանուր ուժերով կրակից մերկ ձեռքերով շագանակներ էինք հանում:

Համենայն դեպս, երկուսս էլ բավականաչափ պատմական հիմքեր ունեինք՝ մեկս մյուսի երկրով փոխադարձաբար հետաքրքրվելու: Ինչ վերաբերում է ինձ, ես լրացուցիչ մի տեսանկյունով ևս հետաքրքրվում էի քո հայրենիքով. ուղղակի անհաղթահարելի անհրաժեշտություն էի զգում նայելու աչքերին մի մարդու, որը պետք է պատասխանատվություն զգար մարդկանց գործունեության մեջ կատարված ամենասարսափելի ոճրագործության համար: Ժամանակակից աղքատիկ լեզվով (իսկ դա տեղի ունեցավ համաշխարհային երկրորդ պատերազմից առաջ) այսօր, ավաղ, արդեն գիտենք, թե ինչ է նրա անունը:

Մենք ծանոթացանք 1936 թվականին: Անմիջապես սկսվեց մեզ ամենից ավելի հետաքրքրող վճռական խոսակցությունը: Ես երկար ուսումնասիրում էի քեզ և պետք է խոստովանեմ, որ առաջին շփումը քեզ հետ ինձ վրա գործեց ամենալավ տպավորություն: Դու շատ գեղեցիկ երիտասարդ էիր՝ արժանի ներկայացուցիչը քո ժողովրդի, որը չէ որ հանդիսանում է Մերձավոր Արևելքի ամենագեղեցիկ ազգը՝ իսլամական Հոռոմի ժողովուրդը: Դրան պետք է ավելացնել և այն, որ դու սրամիտ էիր, խելացի և ընկերական: Մի խոսքով, օժտված էիր այն բոլոր դրական հատկություններով, որոնց շնորհիվ հաղթահարվում են կանանց սրտերը և նվաճվում է տղամարդկանց մշտական բարեկամությունը:

Մինչև օրս էլ հիշում եմ, թե ինչպես գունատվեցիր, երբ առաջին անգամ հարցրի ԱՅՆ բանի մասին, և մատիտը ձեռքիդ սկսեցիր ճշտել իմ հարցը՝ դիմելով անվերջ աճող թվերի այնուկի օգնությանը: Դու ջղաձգորեն թղթի վրա նորանոր քառակուսիներ էիր նկարում և չէիր համարձակվում աչքերիս նայել: Իսկ հետո փնթփնթացիր, որ երբ այդ ամենը կատարվել է, դու դեռևս շատ փոքր ես եղել: Պարզ է, որ ինչ-որ կցկտուր բաներ հասել էին քո ականջին, բայց երբեք չէիր երևակայում, թե ԱՅԴ ԲԱՆԸ հենց ԱՅԴՊԵՍ է տեղի ունեցել, և այդ րոպեին դեռ ի վիճակի չէիր ինձ պատասխանելու, որովհետև պետք է այդ ամենի մասին խորհեիր և հասկանայիր:

Դրանից հետո այլևս չհանդիպեցի քեզ: Ամենից ավելի

հավանականն այն է, որ խուսափում էիր ինձնից ընդհուպ մինչև Լեհաստանից մեկնելուդ օրը:

Այդ խոսակցությունից անցել է ամբողջ 25 տարի: Կխոստովանես, անշուշտ, որ դա այնպիսի մի ժամանակահատված է, որ լի ու լի բավական է ամբողջ խնդրի մասին մտածելու և նրանից տղամարդու եզրակացության հանգելու: Մանավանդ որ քո ժողովուրդը չի մասնակցել ոչ մի պատերազմի և չի կրել այնպիսի հասարակական վերափոխություններ, ինչպիսիք Լեհաստանը, մի հանգամանք, որ որոշ չափով արդարացնում է իմ սեփական թուլությունը:

Համենայն դեպս, քո նամակում ամենաչնչին հիշատակություն անգամ չկա այդ նշանավոր խոսակցության մասին, կարծես թե նա ընդհանրապես տեղի չի ունեցել: Տողերիդ արանքում կարդացի, որ հիանալի հիշում ես, թե ինչի մասին էինք խոսում այն ժամանակ, և, որ ոճրագործություն անվանելով Այխմանի անօրինակ գործունեությունը՝ գիտակցաբար խոստովանում ես իմ առաջ: Չէ որ դու լավ գիտես, որ Այխմանը եղել է ձեր ուշիմ աշակերտը միայն, և այն, ինչ որ նա անում էր 1942—1944 թթ. հրեաների նկատմամբ, կրկնողությունն էր ավելի մեծ չափով նույն բանի, ինչ որ քո հայրենակիցները գործել են հայերի նկատմամբ դեռևս 1915 թվականին: Իսկ դա եղել է, խնդրում եմ հիշել, մարդկային գործունեության մեջ առաջին ծրագրված «աշխատանքի» կազմակերպում՝ գիտական հիմքի վրա հենված, ամբողջ ժողովրդի ոչնչացում: Այդ մինչև մանրուքները մտածված կոտորածը բացարձակապես ոչ մի ընդհանրություն չունի ինչ-որ Աբդուլ Համիդի անկազմակերպ գործողությունների հետ 1895—96 թթ., երբ հայերի դեմ էին ուղղվել քրդերի վայրի հորդաներն ու հասարակության տականքները, հասնելով միանգամայն համեստ «արդյունքների»՝ ինչ-որ երեք միլիոն սպանվածներ:

1915 թվականի կոտորածի ժամանակ, որը շարունակվեց հաջորդ հինգ տարիների ընթացքում, ընդհուպ մինչև հայերի դիմադրության բոլոր կետերի վերացումը, կետեր, որոնք գտնվում էին Կիլիկիայում, Անատոլիայում, Վանա լճի շրջակայքում, Սիրիայում, ռուսական Ադրբեջանում և Ղարսի մարզում, այս կոտորածի ընթացքում զոհվեցին ընդհանուր թվով երեք միլիոն հայեր, որը կազմում էր ամբողջ ժողովրդի 60 տոկոսը: Այդ համապարփակ ջարդից խուսափեցին միայն նրանք, ով-

քեր գտնվում էին ձեր իշխանության սահմաններից դուրս: Վերադառնալով ներկայիս և հաշվի առնելով քանակական վիճակը 1911 թվականին, ինչպես և նրանց բնական աճի տոկոսը վերջին 50 տարիների ընթացքում, ընթացիկ 1961 թվականին նրանք պետք է հասնեին 10 միլիոնի, իսկ իրականում հազիվ չորս միլիոն են:

Ուրեմն, սպանելով մի մարդու, սպանում են նրա դեռևս չծնված սերունդներին հարյուրավոր և հազարավոր տարիների հեռանկարում: Եվ հենց այդ շահագրգռություններն ունեին նախ և առաջ կոտորածի կազմակերպողները: 1915—1920 թթ. երեք միլիոն սպանվածները 40 տարվա ընթացքում կդառնային վեց միլիոն չծնվածներ: Մոտ երկու միլիոն հայ զոհվեց այդ արշավանքի հենց առաջին տարում, 1915 թվականին, երբ այն ժամանակվա ձեր ներքին գործերի մինիստր Թալեաթ Բեյը պաշտոնապես հայտարարեց, թե «չկա հայկական հարց, քանի որ չկա նաև հայ», դա Հիտլերի հանձարեղ նախորդն էր: Այխմանի նախորդը կամ հայերի անմիջական կոտորողը իր հերթին եղել է գեներալիսիմուս Էնվեր փաշան, որը, ի միջի այլոց, իր կյանքով պարտական էր հայերին: (Ռուսական շրջապատումից նրան ազատել են ձեր բանակի հայկական գընդերը՝ ի սեփական դժբախտություն): Թալեաթ Բեյը և Էնվեր փաշան երկուսն էլ արժանի պատիժ ստացան, թեև չափազանց մեղմ՝ առաջինն սպանվեց Բեռլինում հայ ուսանողի գընդակից (1921 թ.), մյուսը՝ ռուսական պարեկի գնդակից (1932 թ.):

Նշավակման արժանի երրորդ ջարդարարը, ավաղ, ձեր ինտելիգենցիան է, որը ինքնակամ օժանդակեց ոճրագործների կազմակերպած ազգամոլ հալածանքին այն ժամանակ, երբ հասարակ ժողովուրդը, մուսուլման հոգևորականությունը և իրենք, ազնվական տոհմերը կամ բոլորովին չեն մասնակցել կոտորածին, կամ նույնիսկ փորձեր էին անում հայերին փրկելու: Չգիտեմ, թե ամբողջ համաշխարհային գրականության մեջ կգտնվի՞ արդյոք ավելի ցնցող տեսարան, քան Ֆրանց Վերֆելի պատմածը մի քանի ծեր թուրքերի մասին, որոնք գաղտագողի բարձրանում էին Մուսա լեռան վրա պաշարված հայերի մոտ, որպեսզի նրանց մի քիչ ուտելիք հասցնեն: Գեթ այդ փաստի համար կարելի է ընդմիշտ սիրել ձեր ժողովրդին, որին այդպես անպատվեց ձեր սեփական ինտելիգենցիան հայկական կոտորածի ողբերգական տարիներին:

Ցավոք սրտի, ձեռքիս տակ չունեմ ստույգ թվեր, որ մի ժամանակ հավաքում էի ձեզ համար: Այդ խնդրին վերաբերող իմ բոլոր նշումները այրվեցին Վարշավայի ապստամբության կրակների մեջ, ապստամբություն, որը մի հերթական օղակը հանդիսացավ այն խելահեղ կոտորածների, որոնց զոհը դարձան հայերը, լեհերը, հրեաները, ռուսները, հնդիկները՝ Հընդկաստանում և մուսուլմանական Հընդկաստանում: Ստիպված եմ միայն տալ այս փաստերի չոր ու ցամաք թվարկումը, որոնք մոռացվել են հասարակության կողմից:

1915 թվի հայերի կոտորածը, ինչպես և հրեաների մեծամասնության կոտորածը Այխմանի կողմից, իրենց հիմքում կոտորածի բնույթ չունեին, նրանք ներկայացնում էին «ոստիկանական կարգադրությունների» հրամաններ, որոնց արդյունքները հասցրին միլիոնների անխուսափելի սոսկալի մահվան: Ըստ մեզ քաջ հայտնի սխեմաների, նախ և առաջ իշխանության կողմից հրաման էր արձակվում, որի համաձայն բոլոր հայերը պարտավոր էին թողնել տվյալ վայրը սովորաբար երկու ժամվա ընթացքում՝ նոր բնակավայր հասնելու համար: Թույլատրվում էր հետը վերցնել միայն ձեռքի ուղեբեռ, թողնելով ամբողջ ունեցվածքը նոր՝ մուսուլմանական բնակիչներին: Խիստ արգելվում էր օգտվել տրանսպորտի որևէ միջոցից: Ոչ մի բացառություն չէր արվում ծերերի, հիվանդների, երեխաների ու նույնիսկ հղի կանանց համար: Հետիոտն երթը, Անատոլիայի ամառվա կիզիչ արևի տակ, ուղեկցում էին հրացաններով ու մտրակներով զինված ոստիկանները: Եթե մուսուլման սրտացավ գյուղացիներից մեկը փորձում էր ջուր տալ հայերին, անմիջապես մտրակների հարվածներ էր ստանում կամ սպանվում տեղն ու տեղը: Եթե գերյալներից մեկն ու մեկը ընկնում էր ուժասպառ (որ պատահում էր ամեն վայրկյան, այդ մահվան երթի հենց սկզբից), ոստիկանները սպանում էին նրան կամ հարվածում կոշիկներով: Երթի հետևից քարշ էին գալիս չեչենների ու թափառաշրջիկների հրոսակախմբերը, որոնք լկտի ծաղր ու ծանակով մերկացնում էին դիակները ոստիկանների լուռ համաձայնությամբ ու թույլտվությամբ, խլում, փախցնում էին երիտասարդ կանանց ու աղջիկներին՝ հենց որ նրանցից մեկն ընկնում էր կամ մի քայլ ետ էր մնում

ընդհանուր երթից: Բազում բռնաբարություններից հետո նահատակում էին նրանց ամենալկտի ձևերով: Եվ դա ի միջի այլոց կատարվում էր ցաղոնի հրահանգի համաձայն, որը տրվում էր ոստիկաններին և որի իմաստն աքսորյալներին ճանապարհին մեռցնելն էր:

Այդ սահավոր երթի ճանապարհին, երբ մի երկու օրից սյունաշարը նվազեց կիսով չափ, նրանից առանձնացրին տղամարդկանց, որոնց քշեցին ռազմական ճանապարհներ կառուցելու, ըստ որում, յուրաքանչյուր «աշխատանքային բաժանմունք» հանձնարարություն էր ստանում կառուցելու ճանապարհի երկու կիլոմետր երկարությամբ հատված: Հանձնարարությունը կատարելուց հետո բոլոր «աշխատողներին» սպանում էին:

Կանանց, երեխաներին ու ծերերին քշում էին ավելի հեռու, մինչև բնաջնջման ճամփաները, որոնք տեղադրված էին Միջագետքի անապատում: Վերֆելը մեջ է բերում թուրք սպայի խոսքերը, որ այցելել էր ձերբակալվածներին. «Դրանք արդեն մարդիկ չէին, այլ ուրվականներ... մարդանման կապիկների ուրվականներ, որոնք վախճանվում են աստիճանաբար, ուտում են խոտ, ոռնում քաղցից: Կանայք իմ ձիու գոմաբղի մեջ վարսակի չմարսված հատիկներ են փնտրում»:

Օրական մահացությունը անցնում էր տասը հազարից: Տարբերվո՞ւմ է դա մազաչափ անգամ հիտլերյան մահվան ճամբարներից: Գուցե միայն նրանով, որ այդ ճամբարների հսկող ոստիկաններն իրավունք ունեին բռնաբարելու ձերբակալված կանանց ու աղջիկներին, քանի դեռ նրանք մարդկային կերպարանք ունեին: Հավանաբար, այդ տեսակետից նրանք զերծ էին ռասայական որևէ նախապաշարմունքից:

Տեղահանումն ընդգրկեց այդ տարաբախտ ժողովրդին պատկանող բոլոր անձանց՝ բուլղարական սահմանից մինչև պարսկականը: Այն հայը, որը հանդիպում էր համակենտրոնացման ճամբարից, «աշխատանքային բաժանմունքից» կամ երթից դուրս, սպանվում էր տեղն ու տեղը: Գնդակահարություն էր սպասվում այդպիսիներին տեղ տվողին: Կասկածելու դեպքում ստուգում էին՝ այս մարդը թլպատված է, թե՝ ոչ: Միշտ այնպես, ինչպես հիտլերյան օկուպացիայի ժամանակ, այն տարբերությամբ, որ ձեզ մոտ սպանում էին հենց նրանց, ովքեր թլպատված չէին:

Հայկական գնդերի զինվորները, որոնք այնպես դյուցազնաբար կռվում էին Էնվեր փաշայի կյանքի համար, հենց նրա հրամանով բաժանվեցին ընդհանուր բանվորական դրուժինաների, ըստ որում, ինչպես գիտենք արդեն, նրանցից ամեն մեկը պետք է կատարեր միայն մեկ, սակայն առավել ուժասպառանող հանձնարարություն: Հանձնարարությունը կատարելուց հետո ամբողջ դրուժինան ոչնչացվում էր նահատակող վաշտի կողմից:

Ստամբուլն այն ժամանակ դեռևս հայկական ու հունական կուլտուրայի համաշխարհային կենտրոն էր ոչ պակաս, քան թուրքական կուլտուրայի: Ըստ էության դա երեք ժողովուրդների քաղաք էր, ըստ որում՝ հայկական կուլտուրական միջավայրը գերազանցում էր մնացածներին երկու հարկով: Այստեղ մի ժամանակ ստեղծագործում էին Դուրյանը և Պեշիկթաշլյանը՝ արևմտահայ ամենամեծ բանաստեղծները, քրիստոնեական Արևելքի Բայրոնն ու Շելլին: Եվ նրանց հետևից գնում էր բանաստեղծների, հիանալի նովելիստների, դրամաների ակնառու հեղինակների մի ամբողջ աստղաճույլ: Ով որ այդ կաճառից ապրեց մինչև 1915 թվականը, իր մահկանացուն կնքեց այդ թվականին:

Այն ժամանակ նահատակության ճանապարհին, բանտերում կամ համակենտրոնացման ճամբարներում զոհվեցին Գրիգոր Զոհրապը, Երվանդ Սմբատեշհանելյանը (Երուխան), Ռուբեն Զարդարյանը և տասնյակ այլ հանրածանոթ գրողներ, արտիստներ, երաժիշտներ: Հանձարեղ կոմպոզիտոր ու ժողովրդական երգեր հավաքող Կոմիտասը հրաշքով կենդանի մնաց, սակայն ընդմիշտ կորցրեց բանականությունը: Մահացավ Փարիզի հոգեբուժական հիվանդանոցում 1935 թ., 20 տարվա խելագարությունից հետո:

Արշավանքի շարունակությունը կրում էր բոլորովին այլ բնույթ. սկսվեց անողոք կոտորածը այն բոլոր հայերի, որոնք որևէ առիթով խուսափել էին աքսորից: Ամենից առաջ դա վերաբերում էր նրանց, ովքեր դիմացել էին դիմադրության այն սակավաթիվ կետերում, որտեղ պաշարված հայերին երբեմն օգնություն էր հասնում ֆրանսիացիներից, անգլիացիներից կամ ռուսներից: Այդպես էր Կիլիկիայում կամ Վանա լճի մոտ:

Կերենսկու հեղափոխությունից հետո, երբ ռուսական ռազմաճակատը ճեղքվեց, կոտորածը հրդեհի պես տարածվեց նոր

տերիտորիայի վրա, որը մինչև այդ գտնվում էր նման աքսորների սահմաններից դուրս. նախ և առաջ՝ Ադրբեջան և Ռուսահայաստան: Ձեր զորքերը առաջ էին շարժվում իսպառ կոտորելու հայկական գյուղերի բնակիչներին, իսկ լեռնային գետակներից անցնելու համար դիակներից կամուրջներ էին դիզում թնդանոթների անիվների տակ: Դրան հաջորդեց Բաքվի սարսափելի կոտորածը և անհավասար պայքարը դաշնակների դեմ, որը գործնական շարունակությունն էր 1915 թվականի արշավի:

Երևանի վերջին գրավումը ռուսական զորքերի կողմից (1920 թ. աշնանը) իսկապես ձեզնից փրկեց հայկական հողի վերջին մնացորդը, բայց միաժամանակ առանց մի կրակոցի ձեզ տրվեց Ռուսական Հայաստանի կեսը (Ղարսի մարզը) Արարատի նախալեռնաստանի հետ, որը փաստորեն երբեք ձեզ չի պատկանել:

Այդ ժամանակ առիթ ունեցաք կլորացնելու տանջամահ արված հայերի այն սարսափելի թիվը (3.000.000), որի մասին գրել էի վերը: Փակագծում ասեմ, որ այդ վերջին տերիտորիալ գրավումները քիչ օգուտ բերին ձեզ: Մոտավորապես երկու տարի առաջ անցնում էի այժմյան հայ-թուրքական սահմանի երկարությամբ, և այդ ճանապարհորդության ամբողջ երկու ժամվա ընթացքում չնկատեցի ձեր կողմում ոչ մի կենդանի էակ: Խիտ բնակեցված երկիրը դուք վերափոխել եք կատարյալ անապատի՝ մեռյալ ու քստմնելի, ինչպես մոռացված ու անարգված մի գերեզմանատուն: Թե՞ նրա համար կոտորեցիք այդ երկրի իրավական բնակիչներին, որ հակառակ աստվածային ու մարդկային օրենքների անվանեք այն «Թուրքիա» ու հրկիզեք:

***

Ներիր, որ ձանձրացրի քեզ մի քանի տասնյակ տարիներ առաջ տեղի ունեցած դեպքերի նկարագրությամբ, մանավանդ որ այստեղ բերված փաստերի մեծ մասը պետք է քեզ հայտնի լինի գոնե Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպից կամ 25 տարի սրանից առաջ իմ հաղորդածից: Բայց երևի կխոստովանես, որ 3.000.000 սպանվածների ու 6.000.000 չծնվածների պատկառելի թիվը լիուլի բավական է մի անգամ ևս նվիրելու նրան քո թանկագին ժամանակի մի հատվածը:

Բայց ինչի՞ համար եմ ասում այս ամենը, եթե ինձ չի կարող արդարացնել գոնե տարեդարձի առիթը: Չէ՞ որ սոսկալի խայտառակության սարսափելի հոբելյանը միայն չորս տարի հետո է լինելու, այսինքն 1965 թվականին: Կաշխատեմ, ուրեմն, հերթով պատասխանել քո այդ հարցին ևս, իսկ պատասխանս կլինի հենց նամակիս ամենակարևոր մասը:

Ամենայն հավանականությամբ գիտես, որ 20-րդ դարը չի սկսվել 1901 թ. հունվարյան առաջին գիշերը, այլ միայն մի քանի տարի հետո, այսինքն՝ 1914 թվականի ամռանը, ինչպես որ 19-րդ դարը սկսվեց միայն Վաթերլոյի ճակատամարտից հետո, 1815 թվականին: Տարեթվերի այսպիսի տեղափոխությունը բխում է այն պարզ փաստից, որ պատմության ընթացքը չի կարող ճշգրտորեն մտնել օրացուցային շրջանակների մեջ:

Ամեն դար ունի իր ստույգ դեմքը: 20-րդ դարը նախորդներից տարբերվում է նրանով, որ հանդիսանում է ամենամեծ ոճրագործությունների և ամենամեծ փոխհատուցումների դար: 20-րդ դարի ամենամեծ ոճրագործությունները մարդասպանություններն են, այսինքն՝ ամբողջ ժողովուրդների տանջամահ անելու փորձերը, որոնք, բարեբախտաբար, մինչև այժմ երբեք չեն պսակվել 100 տոկոսանոց հաջողությամբ:

Այդպիսի ոճրագործության առաջին փորձը, որը իրականացվեց 60 տոկոսով, կատարվեց նոր դարի առաջին տարին լրիվ բոլորելուց առաջ, այսինքն՝ 1915 թվականի ամառվա սկզբին: Դա կոչվում էր «Հայկական հարցի վերջնական լուծում»: Նույնական «Հրեական հարցի վերջնական լուծում» փորձեցին իրականացնել (և, ավաղ, մեծ չափով իրականացրին) հիտլերյան գերմանացիները: Լեհական և ռուսական (գուցե նաև ընդհանրապես սլավոնական) հարցի «վերջնական լուծումը», անտարակույս, մտնում էր հիտլերյան ծրագրի մեջ և հավանաբար իրականացվում էր արդեն համակենտրոնացման ճամբարներում ու բանտերում, ինչպես նաև գնդակահարությունների հրապարակներում: Գիտեմ, որ լեհերից, ֆրանսիացիներից, նույնիսկ անգլիացիներից ու ամերիկացիներից ոմանք այդ նույն ժամանակ միանգամայն լուրջ կերպով մտածում էին «Գերմանական հարցի լուծման մասին», որը նմանապես հանցավոր միտք էր, թեև այն ժամանակ հոգեբանորեն

գոնե հասկանալի: Միաժամանակ ուկրաինական նացիոնալիստները «լուծում էին լեհական հարցը» Վոլինում և ապըստամբում Վարշավայում, իսկ խորվաթները Խորվաթիայում «լուծում էին սերբական հարցը»:

Եվ մի՞թե հնդիկների ու մուսուլմանների սարսափելի կոտորածները, որոնք բռնկեցին Հնդկաստանի ու Պակիստանի ազատագրության հենց սկզբին, նույնպես «վերջնական լուծումների» միամիտ փորձեր չէին կամ ժողովրդասպանություն: Չէ որ ամենադժվարին բանը մարդկային հասարակության մեջ պարտադիր ճանաչված բարոյական կանոնների խախտումն է, որից հետո արդեն գործն ավելի հեշտ է ընթանում, մինչև որ, վերջապես թվում է միանգամայն նորմալ:

Առաջին հասարակությունը, որ բռնեց այդ սայթաքուն ճանապարհը, ավաղ, քո ժողովուրդն էր, մի հանգամանք, որը նվազագույնս չի փոքրացնում ոչ հիտլերյան սոսկալի ոճիրները, ոչ էլ ոճիրները կատարողների պատասխանատվությունը: Նամանավանդ որ նրանք հավանաբար այնքան էլ չգիտեին ձեր հայկական արշավանքի մասին, որովհետև ի հակադրություն ձեզ՝ գերմանական էնվերները եղել են նախ և առաջ կիսաինտելիգենտներ: Ուղղակի օդն արդեն բավականին թունավորված էր փոխադարձ ատելությամբ, որը տարածվել էր ինչպես ժանտախտը, ժահահոտությունը՝ հայտնի չէ, թե որտեղից, գուցե հենց չթաղված հայերի դիակներից:

Համենայն դեպս, այն պահին, երբ առաջին անգամ հաղորդում էի քեզ այս մասին, ամենևին չէի պատկերացնում, թե իմ սեփական հայրենիքը երբևէ կդառնա ոչ պակաս ահեղ իրադարձությունների ասպարեզ, քան նրանց, որոնց մասին այն ժամանակ խոսում էինք, չէի պատկերացնում, որ ոճիրների շղթան դեռևս շուտ չի կտրվի:

Սակայն 20-րդ դարը միաժամանակ պատմության մեջ ամենամեծ փոխհատուցումների դարն է: Դու ինքդ ուշադրություն ես դարձնում դրա վրա քո նամակում, թեև այդ անվանումը՝ փոխհատուցում, չես գործածել: Մի՞թե հենց գաղութային ժողովուրդների մեծամասնության ազատագրության փաստը՝ և այն էլ առանց մի կրակոցի, քեզ չի ներկայանում իբրև պատմական հրաշք, որը անցյալի պատմության մեջ բացարձակապես իր նմանը չունի:

Իսկ մեր արևմտյան հողերը ետ վերադարձնե՞լը, հողեր, որոնց վրա լեհական տարրը հազարավոր տարիների ընթացքում ոչնչացվում էր առանց զարհուրելի կոտորածի ենթարկվելու, բայց նույնքան արդյունավետ: Մի՞թե դա ահեղ նախագգուշացում չէ բոլոր նրանց համար, ովքեր կարծում են, թե բավական է ոչնչացնել մարդկանց, որպեսզի հնարավոր լինի ընդմիշտ զավթել նրանց հողը: Նյուրնբերգի և հարյուրավոր այլ դատավարություններում թեև դատապարտվեցին ռազմական ոճրագործների գեթ մի մասը, սակայն դրանք փոխհատուցման նշանավոր գործողություններ են:

Դրան զուգահեռ, հետզհետե ավելի սովորական էր դառնում կոլեկտիվ մեղքի հասկացությունը, որը ոչ մի չափով նույնը չէ, ինչ որ կոլեկտիվի պատասխանատվությունը: Մեծ փոխհատուցման երևույթը միշտ այդպես է ընթանում այն երկրներում, որոնք հետպատերազմյան աշխարհում ամենակարևոր դերակատարներն են: Ռուսները աքսորից հետ վերադարձրին Հյուսիսային Կովկասի քո հայրենակիցներին ու հետնորդներին՝ բալկարներին, կարաչայցիներին, չեչեններին, ինգուշներին: Հարավ-աֆրիկյան Միությունը դուրս արվեց բրիտանական համագործակցությունից ի պատիվ նեգրերի նկատմամբ գործադրած իր հալածանքների: Միայն փոքրաթիվ երկրներ մինչև այժմ չեն գիտակցել, որ 20-րդ դարը բեկում է ապրում, և որ մեծ ոճիրների ժամանակաշրջանին սկսում է փոխարինել մեծ հատուցումների ժամանակաշրջանը, հատուցումներ, որոնք անկախ քաղաքատնտեսական բնույթի պատճառներից, կամավորության որոշ գծեր ունեն: Անկախ ամեն ինչից, այս փաստերի մեջ կա մի ինչ-որ բան այն անկեղծ փափագից, այն տենչից, որ պաշտոնապես կատարված անիրավությունները որևէ կերպ փոխհատուցվեն:

Բացառված չէ, ի միջի այլոց, այն հնարավորությունը, որ քաղաքական պատասխանատու գործիչները, գործելով հասարակական կարծիքի ճնշման տակ, չեն գիտակցում նույնիսկ, թե որքան զորեղ է գործում այդ հասարակական կարծիքը զուտ բարոյական ազդակների ճնշմամբ:

Սակայն որոշ հասարակություններ դեռևս շարունակում են խուսափել իրականությունից այն համոզմունքով, թե հասարակական կարծիքը չի կարող իրենց դիպչել: Հարավ-աֆրիկյանները համոզված են, թե սևն առաջիկայում էլ ծառայելու է սպիտակին: Պորտուգալացիները միամտորեն հավատում են այն

բանին, թե իրենց գաղութատիրական կայսրությունը անվնաս կմնա, չնայած որ ամբողջ հին աշխարհը փուլ է գալիս: Եվ դուք էլ ձեր հերթին ենթադրում եք, թե քանի որ նահատակները ինչ-որ երկրի բնակիչների 60 տոկոսն են, իսկ մնացածները ցրվել են աշխարհով մեկ, ուրեմն այդպիսի երկիրը դադարել է գաղութ լինելուց և կարելի է ուղղակի նրան համարել սեփական տերիտորիայի մի բաղադրիչ մասը՝ որպես **յուրահատուկ մի պարգև ժողովրդասպանության համար:**

Սակայն թույլ տվեք հարցնել. ինչո՞ւ հայերին նահատակելը պիտի պարգևի արժանանա, երբ լեհերին ու հրեաներին նույն ձևով նահատակելը պաշտոնապես ճանաչված է իբրև մարդկության դեմ գործած ոճիր: Թե՞ այդ դժբախտ հայերը ինչ-որ բանով վատ են մեզանից ու հրեաներից:

Գիտեմ, որ այս նամակս քեզ չի հասնի թեկուզ և այն հասարակ պատճառով, որ դու չես կարդում լեհական մամուլը: Լավագույն դեպքում ձեր զեկուցողներից մեկը մկրատով կկտրի այն թերթից ու տակը կգրի՝ «թշնամական պրոպագանդա», ըստ որում, դա անմտություն է, քանի որ ես կամ և եղել եմ միշտ ձեր ժողովրդի անկեղծ բարեկամը և, որ ամենակարևորն է, մինչև օրս էլ չեմ կորցրել հավատս նրա նկատմամբ և հենց դրա համար է միայն, որ գրում եմ այս զայրագին, տխուր նամակը:

Միայն թե այս վայրկյանին նա արդեն հասցեագրված է ոչ քեզ, քանի որ դու չարդարացրիր քեզ վրա դրած հույսերս՝ քո մեջ բավական ուժ ու խիզախություն գտնելու, որպեսզի քո հայրենիքում ձայն բարձրացնեիր ի պաշտպանություն նահատակված ժողովրդի: Դրա համար էլ այս նամակը հասցեագրում եմ նրանց, ովքեր ձեր ժողովրդի ճշմարիտ խիղճն են հանդիսանում, նրա գրականագետներին, արտիստներին ու ուսուցիչներին, համաշխարհային համբավ վայելող թուրք գիտնականներին, երիտասարդության դաստիարակներին ու բարեկամներին:

Գիտեմ, որ լավագույն դեպքում ձեզ կհասնեն միայն հոդվածիս արձագանքները, որոնք այստեղ-այնտեղ կկրկնվեն համաշխարհային մամուլում կամ, գուցե ձեզ հասնի իմ հոդվածի բովանդակությունը ռեֆերատված ձեր եվրոպական բարեկամների նամակներում:

Դա շատ քիչ է, անշուշտ, սակայն արդյունքները կարող

են լինել շատ պտղաբեր: Պատահում է, որ լույսի մի չնչին փայլակ, որպես ազդանշան (այն, որ աշխարհը, հակառակ թվացող մոռացության, դեռևս հիշում է հայկական խնդիրը), կարող է պատճառ դառնալ՝ վառելու շատ այլ լուսատուներ, որոնք այնքան պայծառ կլինեն, որ դուք ևս կնկատեք նրանց:

Ես հենց դրանով էլ շահագրգռված եմ: Այսուհետև դուք ինքներդ ձեր հասարակության առջև պիտի դատապաշտպան դառնաք դեռ մինչև օրս էլ աշխարհով մեկ ցրված, այսինքն միկրոսկոպիկ (Խորհրդային Հայաստանի սահմաններից դուրս) հայերի համար:

Հենց ա՛յն պատճառով, որ ձեր հայրերը խլեցին նրանց ոտքի տակից հայրենի հողը՝ 3.000.000 կյանքով հանդերձ:

Ես ոչ թուրք եմ և ոչ էլ հայ, ուստի և իմ կոչումը չեմ համարում նշել կոնկրետ ձևերը փոխհատուցման, որի իրավունքը ունեն հայերը ձեր նկատմամբ: Սակայն գիտեմ, որ մեր ներկա պատմական ժամանակաշրջանում՝ նեղյալ ժողովուրդների ու զավթած երկրների ինքնակամ ազատագրման ժամանակաշրջանում, այդ խնդիրը առանց այն էլ պիտի ծառանա:

Բայց հենց ձեզ համար ավելի շահեկան կլինի, եթե ինքներդ լինեք ձեզ դատապարտողն ու ձեր դատավորը, փոխանակ լինելու միայն... դատապարտված:

Չեմ կարողանում հասկանալ ձեր մինչայժմյան անտարբերությունը այն ոճրագործության նկատմամբ, որ 46 տարի է, ինչ ծանրացել է ձեզ վրա: Չեմ հասկանում, թե ինչպես այս պայմաններում կարող է ապրել մի ժողովուրդ, պիրել իր հայրենիքը, ծիծաղել և ուրախանալ, կարդալ հումանիստական գրքեր, այցելել արտասահման և հյուրընկալել օտարերկրացիներին: Կարծում եմ, որ ուղիղ այդպիսի տեսք կունենար գերմանական հասարակությունը, եթե Հիտլերը հաղթանակեր երկրորդ համաշխարհային պատերազմում: Սակայն այդ դեպքում ողջ աշխարհը խենթացած կլիներ: Իսկ դուք, հակառակ ամեն ինչի, ապրում եք նորմալ աշխարհում:

Մի ժամանակ, պատերազմից առաջ, կարդացել եմ բուլղարական մի գրողի նովելը այն մասին, թե ինչպես բուլղար ավազակները մոր աչքի առաջ նահատակել են մի թուրք մանուկի: Ինչո՞ւ այդ բուլղարացին խիզախություն ունեցավ գրելու ինչ-որ անհայտ փաստի մասին՝ բիծ գցելով իր հարազատ ժողովրդի վրա, մինչդեռ ձեր նովելիստների համար 3.000.000

հայերի սպանության հարցը ընդմիշտ քողարկված է մնում ամոթալի լռությամբ, եթե ոչ բացարձակ արհամարհանքով, ինչո՞ւ:

Ուղղակի չեմ կարողանում երևակայել, որ ձեր լեզվով լույս տեսնի որևէ հայկական Աննա Ֆրանկի հուշատետրը, չնայած որ այն սոսկալի տարիներին սպանեցիք առնվազն մեկ միլիոն չափահաս աղջիկների ու դեռատի կանանց, որոնք այն ժամանակվա Արևելքի համար բավականաչափ կիրթ էին: Նույնիսկ Ֆրանց Վերֆելի կլասիկ գիրքը, որքան ինձ հայտնի է, ձեզ մոտ արգելված գրականության ցուցակում է գտնվում:

Չէ որ այն բարոյական խթանները, որոնք ստիպում են եվրոպական հասարակություններին խուսափել գաղութների ազատագրման և հին վիրավորանքների փոխհատուցման փաստից, չեն կարող խորթ լինել նաև ձեզ:

Եվ հենց այդ պատճառով այն ցավալի խնդիրը, որ նամակիս նյութն է, ինձ համար իր մեջ պարունակում է ինչ-որ անլուծելի հոգեբանական մի խնդիր, որի վրա ապարդյուն տանջվում եմ տարիներ ի վեր: Եվ հավատացնում եմ ձեզ, որ ես մենակ ու մեկուսի չեմ: Իմ անհանգստությանը համամիտ են բոլոր նրանք, ովքեր անտարբեր չեն ձեր ազնիվ ժողովրդի պատվի ու բարի անվան հանդեպ:

ԲԱՑ ՆԱՄԱԿ* ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՆ ՈՒ ՏԱՆԻՆ

ՆՅՈՒ ՅՈՐՔ

Ձերդ մեծություն:

Սույն նամակը հասցեագրում եմ Ձեզ ոչ միայն նրա համար, որ Դուք միավորված ժողովուրդների առաջին ներկայացուցիչն եք, այլ նախ և առաջ այն պատճառով, որ բարձր եմ գնահատում ձեզ որպես մարդու: Եվ հենց մարդու այդ անմիջական զրույցը մարդու հետ թույլ է տալիս ինձ անկեղծորեն արտահայտել այն ամենը, ինչ ես մտածում եմ մեր բավական դաժան հարյուրամյակի պատմության ամենացավալի ու ամենախայտառակ հարցի շուրջը: Հիսուն տարիներից ի վեր այդ հարցը տանջում է ամբողջ մարդկության խիղճը... և ժամանակն է, վերջապես, որ նա արդար լուծում ստանա:

Խոսքս վերաբերում է 1915 թվականի հայկական ողբերգական կոտորածին, որի տարելիցը նշում ենք այս օրերին, ինչպես նաև այդ ոճրագործության հետևանքների երկար շարանին, որի պատճառով ամբողջ Տաճկահայաստանը այսօր դարձել է աշխարհիս ամենակուլտուրական ժողովուրդներից մեկի գերեզմանոցը, իսկ հրաշքով փրկվածների ժառանգները պանդուխտ են օտար երկրներում:

Սակայն, որպեսզի այս նամակում իմ շոշափած հարցը միանգամից ճիշտ հողի վրա դրվի, պիտի ավելացնեմ, որ ինքս հայ չեմ, և որ նամակս թելադրված չէ գոյություն ունեցող կառավարություններից որևէ մեկի կողմից. ավելի շուտ դա ամբողջ մարդկության խղճի արտահայտությունն է, այն խղճի, որ չի կարող հանգիստ գտնել՝ անտեսելով հայ ժողովրդի 60 տո-

* Տպագրվել է «Երեկոյան Երևան» թերթի 1989 թ. նոյեմբերի 27-ի համարում՝ Հ. Կարճիկյանի հրապարակմամբ:

կոսի ոչնչացման ու նրա պատմական տերիտորիայի 90 տոկոսի կորստի փաստերը:

Այս նամակը նաև թուրք ժողովրդի և թուրք կառավարության դեմ ինչ-որ թշնամական մի ակտ չէ: Ընդհակառակը: Ես դաստիարակվել եմ թուրք ժողովրդի նկատմամբ բարեկամության ու հարգանքի ոգով (իմ նախնիներից մեկը 1855 թվի պատերազմում մարտնչել է նրանց կողմից): Այդ զգացումներս առավել ևս խորացրեց արևելագիտական բարձրագույն ուսումը, որի շնորհիվ անձնական սերտ կապերով կապվեցի թուրք ուսանող երիտասարդության հետ, որին անկեղծորեն սիրում էի ընկերասիրության, ներքին բարձր կուլտուրայի և գեղեցկության համար:

Սակայն, ավա՜ղ, կան անձնական համակրանքից ու կապերից վեր կանգնած հարցեր:

Եվ, խնդրում եմ հավատաք ինձ, Ձերդ Մեծություն, որ եթե ես ոչ թե լեհ, այլ հենց թուրք լինեի, նույնպես չէի տատանվի հանձնելու Ձեզ հետևանքներով հղի այս նամակը:

Արդեն հիշել եմ, որ ուսանող ժամանակս առաջին անգամ հանդիպեցի թուրք ժողովրդի ներկայացուցիչների հետ: Եվ, թերևս, հենց այդ մարդկանց նկատմամբ այդպիսի անկեղծ համակրանքի ու հարգանքի զգացումն էր, որ հնարավորություն չէր տալիս լռեցնելու իմ մեջ այն միտքը, թե արդյոք այդ հմայիչ մարդիկ հավանություն տալի՞ս են այն ամենին, որ նրանց հայրերը թույլ տվեցին իրենց հայ քրիստոնյա համաքաղաքացիների նկատմամբ՝ Ստամբուլում և Տաճկահայաստանում, Կարսում ու Արդահանում, Կիլիկիայում ու Սիրիայում, ժամանակավորապես գրավված Բաքվում ու ամենուրեք, ուր մուտք էր գործել թուրք զինվորը: Եվ, պատահած առիթներից օգտվելով, տալիս էի նրանց այդ հարցը: Իսկ նրանք հայացքները հառում էին գետնին...

Հենց դրա համար էլ հարգում էի, որ ամաչում էին: Ավա՜ղ, հետո, ըստ երևույթին, դադարեցին ամաչելուց, որովհետև, երբ 1961-ին թուրք մտավորականներին կոչ հղեցի այդ հարցի վերաբերյալ (այդ կոչը ամբողջ աշխարհը շրջեց և, իմիջիայլոց, Ամերիկայում հրատարակվել է առանձին գրքույկով՝ «Նամակ իմ հին թուրք ծանոթին» վերնագրով), ոչ մի թուրք չարձագանքեց իմ կոչին: Նույնիսկ կոմունիստ Նազիմ Հիքմեթը հարկ համարեց լռել: Ըստ երևույթին գերադասել էր մոռանալ: Իսկ ես ամոթ եմ զգում իր և իր հայրենակիցների փոխարեն, որոնց պատանեկությանս տարիներին ճանաչում էի իբրև ասպետական և անթերի ժողովուրդ: Այնուամենայնիվ, ես հավատում եմ, որ մեռնելուցս առաջ դեռ կվերականգնվի նախկին հարգանքս թուրքերի նկատմամբ և հավատս՝ նրանց արդարամտության հանդեպ: Եվ այս ամբողջ խնդիրը, որ բարձրացնում եմ սույն նամակով, թելադրված է, իմիջիայլոց, Թուրքիայի պատիվը փրկելու անզուսպ ձգտումով, ա՛յն պատիվը, որ երկրի ժամանակավոր տիրակալները՝ երիտասարդ թուրքերը, ստոյգաբար գետնին գցեցին:

Չէ՞ որ հրեաների ու Արևելյան Եվրոպայի նվաճված ժողովուրդների կոտորածը՝ կատարված գերմանական կայսրության երրորդ կառավարության կողմից, գուցե ամենանողկալին էր 20-րդ դարում, բայց բնավ ոչ միակն իր տեսակի մեջ: Դրան նախորդեց այն մյուսը, և գուցե ավելի սարսափելին, քանի որ հայ ժողովրդի իսպառ բնաջնջման այդ փորձը, որն անցկացվում էր նույնքան հետևողականորեն ու նույնքան սառնասրտորեն, ինչքան և երրորդ կայսրության ոճիրը, միանգամայն անպատիժ մնաց: Իսկ եթե դա լիովին վրիպել է աշխարհի ուշադրությունից, ապա ավելի վատ այդ աշխարհի համար, քանի որ դրանով անկատելիորեն մթնոլորտ ստեղծվեց ապագա ոճիրների համար, գուցեև համաշխարհային մասշտաբով:

... Ստույգ լինելու համար ստորև շատ սեղմ ու ամփոփ շարադրում եմ այդ ողբերգական դեպքերի պատմությունը:

Մասսայական մարդասպանությունը բուն Անատոլիայում, համենայն դեպս, իր առաջին փուլում սկսվել է ոստիկանական ակտով: Բոլոր քաղաքներում հայտարարություններ երևացին, որոնցով հայ բնակչությանն առաջարկվում էր միայն ձեռքի բեռով, որոշված ժամին հավաքվել հրապարակներում՝ դեպի նոր բնակավայրեր ուղևորվելու համար: Հայերի տներն ու ամբողջ ունեցվածքը պետք է մնային «նոր բնակիչներին՝ մուսուլմաններին»: Հրապարակները նախօրոք շրջապատվում էին հրացաններով ու մտրակներով զինված ոստիկաններով: Այդտեղից էր սկսվում մահվան անվերջանալի երթը Սիրիական անապատի ուղղությամբ, անատոլիական ամառվա դժոխքի միջով: Քաղցած ու ծարավ, մտրակների ու հրացանների խզակոթերի հարվածների տակ առաջ էին ընթանում մարդկային

ստվերների անծայր շարանները... Ընկնողը մեռնում էր թուրք ոստիկանների կոշիկների տակ կամ սպանվում հրացանի խլակոթով: Շարքերից դուրս էին քաշվում ամենագեղեցիկ կանայք ու բազմաթիվ բռնաբարություններից հետո ոչնչացվում:

Այնուհետև առանձնացվում էին բոլոր տղամարդիկ ու չափահաս պատանիները և քշվում ռազմաճանապարհներ կառուցելու, իսկ ճանապարհի որոշ հատվածը կառուցելուց հետո սպանվում էին: Թուրքական բանակի հայկական գնդերի զինվորներին զինաթափ արին, որից հետո նրանց գնդակահարեցին իրենց իսկ ընկերները՝ թուրք զինվորները: Այն տեղերում, ուր բացի հայերից բնակվում էին մուսուլմանական ազգային փոքրամասնություններ՝ քրդեր, չեչեններ, այսինքն՝ նախ և առաջ Տաճկահայաստանում, ոստիկանները նեղություն չէին կրում, այլ հայերի դեմ էին գրգռում քրդերին կամ չեչեններին, որպեսզի սրանք թուրք սպաների հսկողությամբ անխնա կոտորեին տեղացի հայերին: Տվյալ գյուղը կամ գյուղաքաղաքը շրջապատվում էր զորքով, մոտակա բարձունքներին կամ բլուրներին տեղադրվում էին թնդանոթներ, և այդպիսի հրետանային նախապատրաստություններից հետո ոհմակը խուժում էր փողոցները և սպանում բոլոր բնակիչներին, մեծ մասամբ ուղղակի դանակով: Ճշմարտության դեմ չմեղանչելու համար պիտի նշեմ, որ ոչ միշտ և ոչ բոլոր քրդերն էին համաձայնվում և մասնակից լինում այդ ստոր գործողություններին, իսկ ոմանք, ինչպես նաև բազմաթիվ թուրք գյուղացիներ, նույնիսկ փորձում էին հնարավորին չափ փրկել հայերին:

Դեպի Սիրիական անապատը քշվող կանանց վիճակն է՛լ ավելի սոսկալի էր: Նրանց իրենց երեխաների հետ բախտի քմահաճույքին թողեցին՝ փակելով մահվան այդ քարավանները Տեր-Զորի և Մեսքենեի միջև:

(Նամակում այնուհետև հետևում են անգլերեն մեջբերումներ Վերֆելի գրքից— Մ. Գ.)*:

Այդ ողբերգության շարունակությունը, հավանաբար, հայտնի է Ձեզ, Ձերդ Մեծություն: Դիմադրության շատ քիչ կետերում միայն հայերին օգնության հասան ֆրանսիական, անգլիական կամ ռուսական ուժերը, բայց 1917 թ. ճեղքելով ռուսական ռազմաճակատը՝ թուրքերը խուժեցին ռուսական Հայաստանի և Ադրբեջանի հողերը՝ իսպառ կոտորելով հայկական գյուղերի բնակիչներին, «իսկ լեռնային գետերն անցնելիս» մարդկանց դիակները նետում էին անիվների տակ,— նշում է լեհ գրող Ստեֆան Ժերմսկին այն ժամանակ գրած իր գրքերից մեկում՝ «Գարնանամուտ» վեպում:

Այնուհետև սկսվեց հայկական փոքրիկ պետության (որն ստեղծվեց այդ ժամանակամիջոցում) անհավասար և անհույս պայքարը դեռևս հզոր Թուրքիայի դեմ:

ԱՄՆ-ի Սենատը, հակառակ պրեզիդենտ Վիլսոնի ընդունած դիրքի և հակառակ ամերիկյան ժողովրդի մեծամասնության կամքի, ոչ միայն մերժեց որևէ օգնություն հասցնել հոգևարք ապրող պետությանը, այլ նույնիսկ չէր ուզում ճանաչել այն: Մեծ Բրիտանիան սկզբնական շրջանում մտադիր էր Հայաստանը դարձնել հակախորհրդային բաստիոն, բայց երբ Դենիկինի սպիտակ բանակը ներս խուժեց Ռուսաստանի խորքերը, նա հայտարարեց, որ Հայաստանն իրեն այլևս պետք չէ: Ֆրանսիան նույնպես շուտափույթ դուրս բերեց իր զորքերը Կիլիկիայից՝ թողնելով հրաշքով կենդանի մնացած հայերին գազազած թուրքերի կամքին:

Ու դրանից հետո ամբողջ քաղաքակիրթ աշխարհն արդեն անտարբեր էր դիտում Ասիայի ամենակուլտուրական ժողովուրդներից մեկի սոսկալի հոգևարքը, մի ժողովրդի, որի պատմությունը գալիս է Բաբելոնի ու Ասորեստանի ժամանակներից, իսկ նրա կուլտուրական ազդեցությունը զգացվում է ամբողջ Մերձավոր Արևելքում:

(Մեջբերում անգլերեն— Մ. Գ.):

Ամբողջ երկրագունդն ընդգրկող ձեր հսկայական գործունեության մեջ Դուք, Ձերդ մեծություն, բազմիցս զբաղվել եք անկախության ձգտող գաղութային ժողովուրդների հարցով: Եվ Ձեր ու ՄԱԿ-ի նախորդ գլխավոր քարտուղարի արժեքավոր աջակցության շնորհիվ այդ ժողովուրդները հերթով ազատագրվում էին: Իսկ ի՞նչ կասեիք, հարգելի պարոն, որևէ գաղութի մայր երկրի մասին, որն այդպիսի ձգտումներին ի պատասխան այնտեղ ուղարկեր մինչև ատամները զինված զորք և պարբերաբար տակն ու վրա աներ այդ երկրի ամեն մի անկյունը՝ սպանելով նրա բոլոր բնակիչներին՝ տղամարդկանց, կանանց, ծերերին ու մանուկներին, իսկ այդ զարհուրելի ակտն ավարտելուց հետո լպիրշորեն հայտարարել, թե տվյալ գա-

* Թարգմանչուհի՝ Մարիա Գրոխոլսկա:

ղութի անկախության հարցն այլևս հրատապ չէ, քանի որ նրա բնակիչները ոչնչացված են: Թող այդ ոճրագործ կառավարությունը գոնե կարողանար իրեն արդարացնել նրանով, թե «գաղութի ժողովուրդը կատաղեցրել է իրեն անկախության հանդուգն ձգտումներով», իսկ ի՞նչ կասեիք, պարոն, այնպիսի կառավարության մասին, որն իսպառ կոտորեց իր կողմից ոչընչով չպրովոկացված երկու միլիոն բնակիչներին, ուղղակի «ավանսով», որպեսզի հետագայում երբեք չկարողանան անկախության ձգտել: Այդ կառավարության նկատմամբ Դուք, ամենայն հավանականությամբ, կանեիք այնպիսի հետևություն, որը կհամապատասխաներ Նյուրնբերգի Միջազգային դատարանի որոշումներին, որոնցով մարդասպանությունը դիտվեց որպես ոճրագործություն ամբողջ մարդկության դեմ և որի համար սահմանվեց խիստ պատիժ: Այդ որոշումները, որքան ինձ հայտնի է, ստացան միջազգային օրենքի ուժ և մնում են ուժի մեջ:

Երիտթուրքական կառավարության՝ հայ ժողովրդի նկատմամբ 1915-ին, այսինքն՝ սրանից ուղիղ հիսուն տարի առաջ, գործած ոճիրը, վերևում իմ ներկայացրած մարդասպանության երկրորդ տարբերակի բոլոր գծերը կատարված էին ավանսով և բացարձակապես պրովոկացված չէին: Միակ պատճառաբանությունն այն էր, որ Թուրքիան այն ժամանակ պատերազմ էր մղում Ռուսաստանի դեմ և կարծում էր, թե հայերը բարյացակամ են ռուսների նկատմամբ, որպես դավանակիցների, թեպետ այդ ենթադրությունն անգամ փաստաթղթերով ապացուցված չի եղել:

Թուրքական բանակի հայկական գնդերը կռվում էին քաջաբար և նույնիսկ շրջապատումից ազատեցին գլխավոր հրամանատար Էնվեր փաշային, որը քիչ անց ձեռնարկեց հայերի իսպառ բնաջնջումը, լինելով դրա գլխավոր գաղափարախոսն ու կազմակերպիչը:

Վերևում արդեն գրել եմ, որ հայերին կոտորում էին ոչ միայն Թուրքիայի գաղութ Արևմտյան Հայաստանում, այլ Օսմանյան կայսրության ամբողջ տարածության վրա, ինչպես այն ժամանակվա մայրաքաղաք Կոստանդնուպոլսում: Կոտորում էին նրանց, որպես այլադավան և ազգային փոքրամասնություն. մի բան, որ Նյուրնբերգի Միջազգային դատարանի որոշումների լույսով կարելի է դիտել իբրև ամեն մի մարդասպանության տիպիկ գործ:

Այսօր Թուրքիան ինչպե՞ս կարող է առաջ քաշել իր համար Կիպրոսի իրավունքների պահանջը, երբ ինքն ազգային փոքրամասնությունների խնդիրները լուծում էր հրացանի կամ դաշույնի օգնությամբ: 1915—1920 թվականների ռազմարշավը հայերի հերթական ինքներորդ կոտորածն էր, հաշված 1877-ից: Նույն ժամանակամիջոցում և ավելի ուշ, ժամանակ առ ժամանակ կատարվում էին հույների, քրդերի, ասորիների ու արաբների (1915) կոտորածներ, իսկ 1876 թ.՝ բուլղարների հանրահայտ ջարդը: Եվ միշտ այնպես էր դասավորվում, որ բազմաթիվ թուրքեր դատապարտում էին այդ կոտորածը, միայն թե նրանք, որ դատապարտում էին, իշխանություն չունեին, իսկ ովքեր իշխանություն ունեին, սպանում էին:

Ինչպես Ձեզ հայտնի է, Ձերդ Մեծություն, միջազգային տրիբունալի որոշումներին բնորոշ է, իմիջիայլոց, որ նրանք պարտադիր են ոչ միայն ներկայի ու ապագայի համար, այլև անցյալի: Այդ որոշումներում դատապարտված հիտլերյան ռեժիմի բոլոր ոճիրները տեղի են ունեցել դատարանի առաջին նիստից առաջ, այնուամենայնիվ, հենց այդ որոշումների հիման վրա բանտարկվեցին ու պատիժ կրեցին երրորդ կայսրության մարդասպան ապարատի գլխավոր կազմակերպիչները: Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետությունը միակ պետությունն է կարծես, որ համարում է, թե պատերազմից հետո անցած 20 տարին ազատում են ռազմական հանցագործներին պատասխանատվությունից՝ պատժից: Մինչդեռ աշխարհիս մյուս գրեթե բոլոր պետությունները պնդում են, որ այդպիսի ոճիրները վաղեմության պատճառով անպատիժ չպիտի մնան: Եվ նույնիսկ Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության կառավարությունը, որ տարբեր պատճառներով այս հարցերում հատկապես կաշկանդված է ներքին-քաղաքական տեսակետից, հրաժարվում է միայն առանձին ոճրագործների անհատապես հետապնդելուց, բայց չի վիճում կատարված ոճրի համար փոխհատուցման դեմ, որքանով որ սկզբունքորեն դա հնարավոր լիներ:

Իսկ տվյալ դեպքում խոսքս վերաբերում է հատկապես հայ ժողովրդին փոխհատուցելուն: 1915-ի կոտորածը կազմակերպողներից քչերն են մինչև այժմ ապրում, իսկ նրանք, որ

դեռ ապրում են, այն ողբերգական ժամանակներում շատ-շատ եղել են երկրորդական, փոքր մարդիկ: Մնում է միայն ափսոսալ, որ թուրքերն իրենք ժամանակին չպատժեցին իրենց ոճրագործներին: Այսօր արդեն կոնկրետ անհատներին կոնկրետ պատիժ սահմանելու համար ուշ է: Մնում է միայն թուրք պետության ու ժողովրդի, որպես ամբողջության, պատասխանատվությունը հիսուն տարի առաջ կատարված եղեռնի համար, ու մեկ էլ կարելի է փոխհատուցման այնպիսի ձև գտնել, որ տուժած կողմը համարեր բավարար... եթե առհասարակ կա մի հատուցում երեք միլիոն կոտորածների և ամենաքիչը կրկնակի հայ ժողովրդի չծնված զավակների դիմաց, որոնք թուրքերի ձեռքից մահ են գտել դեռևս սաղմնավորվելուց առաջ:

Այդ փոխհատուցման միակ ձևը, որի մասին արժե խոսել, այն է՝ իսկական ժառանգներին, այսինքն՝ աշխարհով մեկ ցրված հայերին, վերադարձնել իրենց նախնիների հողերը, որոնց սահմանները պետք է որոշվեն փոխադարձ համաձայնությամբ:

Հիմնավորում.

Թուրքերը իրավունք չունեն օգտվելու հայկական հողերից, քանի որ տիրացան դրանց փաստորեն մարդասպանության ճանապարհով, այսինքն՝ մարդկայնության դեմ ոճիր գործելով: Այն փաստը, որ մինչև հիմա նրանք օգտվում են այդ հողերից, սարսափելիորեն հակասում է արդարության տարրական հիմունքներին. չէ՞ որ դա պարգև է՝ մարդասպանության համար:

Այսօր թուրքական Հայաստանի հարցին միջազգային իրավունքը կարող է մոտենալ **երկու տեսանկյունից**, նայած այդ խնդիրը կդրվի **կոտորված մարդկանց թվի՞, թե՞ թուրքերի կողմից հայ հողերի անօրեն օգտագործման** տեսակետից:

Բայց երկու հայեցակետն էլ, ի վերջո, հանգեցնում են միևնույն եզրակացության:

Առաջին տեսակետից. այդ հարցը ես վերևում արդեն ձևակերպեցի Նյուրնբերգի Միջազգային դատարանի որոշումների հիման վրա: Այդ որոշումների լույսով Թուրքիան պարտավոր է փոխհատուցել կատարված մարդասպանության դիմաց, իսկ ապօրինաբար սեփականացված հողը վերադարձնել իսկական տերերի ժառանգներին, այսինքն՝ աշխարհով մեկ սփռված հայ գաղթականներին:

Այդ խնդիրը պետք է դիտվի մի տեսանկյունից ևս, թուրքական Հայաստանի տերիտորիան օսմանյան կայսրության տիպիկ գաղութ էր և շարունակում է մնալ որպես այդպիսին: Այդ գաղութի ժողովրդին ոչնչացնելու փաստը ոչ միայն չի խոսում հօգուտ Թուրքիայի սուվերենության այդ տերիտորիայում, այլև առավել մեծ հարցականի տակ է դնում այն: Կոտորածի զոհերի պանդուխտ ժառանգները հայրենիքից հեռու են մնում ոչ թե նրա համար, որ այդպես են ցանկանում, այլ ստիպված են այդպես վարվելու: Սակայն անկախ նրանից, թե բախտն ուր է գցել իրենց, նրանք պահանջում են ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի կողմից 1960 թ. դեկտեմբերի 14-ի հրոչակված գաղութակալության ամբողջական վերացում: Պահանջվող տերիտորիան պետք է ապահով լինի շնորհիվ միջազգային զինված ուժերի, իսկ հետագայում, ամբողջ աշխարհի հայերի ներգաղթից հետո, նա պիտի վերածվի Արևմտահայ անկախ պետության:

Ինչպես տեսնում ենք, հայոց հարցը երկու տեսակետից էլ հանգում է միևնույն վերջնական եզրակացության. Արևմտյան Հայաստանի սուվերենությունը հայկական հարցի միակ տրամաբանական լուծումն է, ինչպես Նյուրնբերգի դատարանի որոշումների, այնպես էլ ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 1960 թվականի դեկտեմբերի 14-ի (և 1961 թ. նոյեմբերի 27-ի) գաղութակալության իսպառ վերացման դեկլարացիայի լույսով:

Կան, իմիջիայլոց, նաև այլ փաստարկումներ հօգուտ Հայաստանի ազատագրման: Առաջին հերթին հիշատակեմ Սևրի միջազգային համաձայնագիրը, որի տակ դրված են եվրոպական պետությունների մեծ մասի ստորագրությունները (իսկ ավելի ուշ նման համաձայնությունները նրանց կողմից ընդունվում էին արդեն որպես ի գիտություն): Հետո գալիս են լուրջ վերապահումներ Ղարսի մարզի և Արդահանի, Արարատի ստորոտի հետ միասին, հակառակ այդ հողերի բնակիչ ժողովրդի կամքի և այն ժամանակվա հայկական կառավարության կամքի, Թուրքիային միացնելու օրինականության մասին:

Կանխատեսում եմ, որ իմ թեզերին Թուրքիան կհակադրի հետևյալ պատճառաբանությունները.

1) Մի հայկական պետություն (այսինքն՝ Խորհրդային

Հայաստանը) գոյություն ունի արդեն, ապա ուրեմն կարիք չկա ստեղծելու երկրորդ հայկական պետությունը:

2) Հայ պանդուխտների թիվը այնքան մեծ չէ, և դա իրավունք չի տալիս նրանց խոսելու ամբողջ ժողովրդի անունից, ինչպես նաև իրավունք վերապահելու իրենց այդ նշանակալից տերիտորիայի համար:

Թույլ եմ տալիս նախօրոք պատասխանելու այդ երկու առարկություններին:

1) Հայկական ԽՍՀ-ն փոքր, ոչ բերքատու լեռնային երկիր է (28,8 քառ. կմ., այսինքն՝ 11,500 անգլիական քառ. մղոն), որը ի վիճակի չէ տեղավորելու ավելի շատ բնակիչների, քան ներկայումս ունի (1,9 մլն., որից մոտ 1,5 միլիոն հայ):

2) Ամբողջ աշխարհում չկա մի հայ, որը չփափագեր պատմական հայոց հողերի ազատագրումը: Դա հավասարապես վերաբերում է թե՛ Հայաստանի Խորհրդային Հանրապետությունում ապրող հայերին, թե՛ ԽՍՀՄ-ի այլ հանրապետություններում ապրող հայերին, ինչպես և ԽՍՀՄ սահմաններից դուրս բնակություն հաստատած հայերին: Այդ տեսակետից ամբողջ հայության ձգտումը միասնական է: Որպես ապացույց կարող եմ ցույց տալ մոտ հազար նամակ աշխարհիս գրեթե բոլոր հայկական բնակավայրերից:

Վերևում գրել եմ արդեն, որ եթե 1915—20 թթ. թուրքերի կատարած մարդասպանությունները չլինեին, հայերի ընդհանուր թիվը (առաջին աշխարհամարտի ժամանակ նրանք մոտ 5 միլիոն էին) 50 տարում կկրկնապատկվեր: Ձնված 6 միլիոնը որպես թուրքերի մարդասպանության երկրորդ արդյունք ավելի քան բավական է պարզաբանելու համար այն փաստը որ հայ պանդուխտների թիվն այսօր շատ մեծ չէ: Այնուամենայնիվ, այժմ ապրում են երկու և կեսից-երեք միլիոն հայություն, իսկ նրանց պահանջած տերիտորիան (եթե թուրքերը համաձայնվեն խաղաղ ճանապարհով լուծելու այդ հարցը) սահմանագծվում է եռանկյան մեջ. ելք դեպի ծովը, դեպի Վանը և դեպի Իրան. դա պատմական Հայաստանի, ինչպես նաև Սևրի համաձայնագրում նշված տերիտորիայի հազիվ աննշան մասն է միայն: Ընդամենը դա կազմում է հազիվ 50 հազար քառ. կմ. (կամ մոտ 20 հազար անգլիական քառ. մղոն) 2—3 միլիոն բնակչի համար, այսինքն՝ մոտավորապես 50—60 հոգի 1 քառ. կմ.-ի վրա: Համեմատած քիչ բնակեցված և վատ իրացված հողերի հետ՝ այդ խտությունը կարելի է մեծ համարել, որովհետև մի քանի անգամ դա գերազանցում է այդ նույն տերիտորիայի ներկայիս խտությանը (1950 թ. Վանի վիլայեթը ամբողջ Թուրքիայում ամենափոքր խտությունն է ունեցել՝ 1 քառ. կմ.-ում 8 հոգի, այսօր էլ, հավանաբար, նույնն է):

Հայոց հարցի վերջնական լուծման առաջարկություններին անցնելուց առաջ թույլ կտամ ինձ անելու մի երկու լրացուցիչ դիտողություն: Հաճելի է դա թուրք կառավարությանը, թե՝ ոչ, բայց Արևմտյան Հայաստանը անպայման վերաշինվելու է: Հնարավոր չէ ետ դարձնել պատմության ընթացքը, ինչպես հնարավոր չէ այլևս աշխարհի առաջ գաղտնի պահել սարսափելի ոճրագործությունը: Իսկ գաղութակալության վերացման տարիների մթնոլորտն ինքը հայերին վերապահում է Ասիայի և մանավանդ Աֆրիկայի ազատագրվող ժողովուրդների քաղաքական օժանդակությունը, այն ազգերի, որոնք շատ զգայուն են ժողովուրդների միջև հարաբերությունների բարոյականության հարցում: Այդ պետությունները ծայրահեղ անհրաժեշտության դեպքում կկարողանային միջազգային շատ տհաճություններ պատճառել Թուրքիային՝ նրան մեղադրյալի դրության մեջ դնելու նպատակով:

Բայց նման ծայրահեղությունները բնավ չեն մտնում տրվյալ նամակի հեղինակի մտադրությունների մեջ: Չէ՞ որ ես հավատում եմ, որ հայոց հարցը կարելի է լուծել այլ ճանապարհով՝ երկու կողմերի համար էլ շատ շահավետ, փոխադարձ զիջումների ճանապարհով: Առաջին փորձը այս ուղղությամբ իմ կողմից թուրք մտավորականներին դիմելն էր, այսինքն՝ վերևում արդեն հիշատակված «Նամակ իմ հին թուրք ծանոթին» հրապարակումը, որի մեջ այդ ամբողջ խնդիրը հանձնում էի իրենց՝ թուրքերի խղճին: Այդ իմ նամակը հրապարակական արձագանք գտավ ամբողջ աշխարհի հայաբնակ վայրերում, մինչդեռ թուրքերը լռությամբ անցան նրա կողքով: Երկրորդ փորձը Ձերդ մեծությանը հասցեագրված սույն նամակն է՝ կոնկրետ խնդրանքով, որ Դուք բարեհաճեք այն տրամադրել Թուրքիայի ներկայացուցչին, որպեսզի նա իր կառավարությանը ներկայացնի նամակումս զետեղված թեզերը և հետո տեղեկացնի Ձեզ, թե արդյոք թուրքական կառավարությունը հակվա՞ծ է այդ թեմայի շուրջ էական բանակցություններ վարելու:

Հակառակ, որ հայերը սարսափելիորեն տուժած կողմ են և բնավ էլ պարտավոր չեն որևէ ծախս հոգալու՝ Թուրքիայի կողմից հանիրավի հափշտակված իրենց հողերը ետ ստանալիս, սակայն լիազորված եմ զգում հայտարարելու, որ փոխըմբռնման հասնելու դեպքում հայերը պատրաստ են Թուրքիային վճարելու հողի և այլ անշարժ արժեքների դիմաց:

Սպասում ենք կոնկրետ առաջարկությունների այս խընդրում:

Անվիճելի է մի բան՝ տերիտորիալ լիակատար սուվերենությունը: Արևմտյան Հայաստանը մտադիր չէ ոչ Թուրքիայից քաղաքական որևէ կախման մեջ մնալու, ոչ Խորհրդային Միության կազմի մեջ մտնելու: Նա չի մտնելու նաև ոչ Խորհրդային Միության դեմ ուղղված և ոչ էլ Թուրքիայի կամ նրա դաշնակիցների դեմ գործող որևէ բլոկի մեջ:

Այնուհետև փոխըմբռնման դեպքում հայերի տերիտորիալ պահանջները սահմանափակվելու են բառացիորեն նվազագույնով: Իրենց պահանջած տարածությունը հավասար է մոտ 50 հազար քառ. կմ. (մոտ 20 հազար անգլիական քառ. մղոն), այնպես որ նոր պետությանը ապահովի անկախության համար անհրաժեշտ բոլոր հիմնական երաշխիքները, և ուրիշ ոչինչ: Ապա, ուրեմն, նա պետք է ունենա թեկուզ սիմվոլիկ ելք դեպի ծովը, ինչպես և հայ ժողովրդի նկատմամբ բարեկամաբար տրամադրված Իրանի լայն աջակցությունը: Չունենալով դրանցից մեկը կամ մյուսը, նա կախման մեջ կընկնի Թուրքիայից կամ Խորհրդային Միությունից, վերջինս, որպես արտաքին շատ բարդ քաղաքականություն ունեցող մեծ տերություն, միշտ չէ, որ կկարողանա աջակից լինել հայկական արևմտյան պետությանը: Վերոհիշյալ նկատառումներով Արևմտյան Հայաստանը պիտի ընդհանուր սահման ունենա այնպիսի մի պետության հետ, որ բարյացակամ լինի իր նկատմամբ, և թույլ տա նրան իր տերիտորիայի միջով կապ պահպանել ամբողջ աշխարհի հետ, մանավանդ՝ Ասիայի:

Անցնում եմ, Ձերդ Մեծություն, հայերի կողմից պահանջվող տերիտորիայի ստույգ նկարագրությանը: Այդ տերիտորիան, որից հայերը ոչ մի դեպքում հրաժարվել չեն կարող, Թուրքիան պետք է բարեհաճի ճանաչել որպես բացարձակ մինիմում: Այդ տերիտորիայի սիրտը կազմում են այն հողերը, որոնք 1914-ից առաջ պատկանել են ցարական Ռուսաստանին (առանց Արդվինի շրջանի, որ հայերը չեն ակնկալում): Այնուհետև, սկսած այնտեղից, ուր Ռուսաստանի հին սահմանը կտրում է Ճորոխ գետը, մոտավորապես հարավային լայնության 41 աստիճան 8 րոպե բարձրության վրա և ընդհուպ մինչև ծովը պահանջվող տերիտորիայի հյուսիսային սահմանը շարունակ կանցներ զուգահեռականի երկայնքով մոտ 110 կմ. (մոտ 70 անգլ. մղոն): Այսպիսով, Թուրքիային կմնար Արդվինի ամբողջ մարզը, ինչպես նաև ծովափի մեծ կտորը Արդահանով ու Ստինայով:

Իսկ Արևմտյան Հայաստանը կստանար ծովափնյա նեղ մի շերտ, մոտ 25 կմ. (15—16 անգլ. մղոն) լայնությամբ, երկու փոքր գետերի գետաբերանների միջև Ռիզեի կոչվող մի բնակավայրով, որից արևմուտք վերոհիշյալ փոքր գետի գետաբերանի մոտ նոր պետության արևմտյան սահմանը կանցներ թեք, մինչև Պաղիլեր գյուղաքաղաքը, Թուրքիային թողնելով այդ հանգուցային կետը Էրզրումի հետ: Այնուհետև, 40-րդ զուգահեռականի երկայնքով կհասներ ցարական Ռուսաստանի և Թուրքիայի սահմանին, այնտեղ, ուր այդ սահմանը կընտրում է 43-րդ միջօրեականը, նոր սահմանը կտրուկ կթեքվեր հարավ ու շարունակ գնալով այդ միջօրեականով, կհասներ Վանա լիճը, հետո կանցներ այդ լճով մինչև Հայոց Ձոր գետի գետաբերանը (Հայոց Ձոր հայկական անունն է, թուրքականը չգիտեմ— Բ. Գ.), որը լճի հարավ-արևելյան մասում է և վերջապես այդ գետով կթեքվեր արևելյան ուղղությամբ ու այդ միակ հատվածում կհասներ Սևր տանող ճանապարհին, որն իրեն կհասցներ Իրանի սահմանը:

Հիմնավորում.

ա) թվում է, թե կարիք չկա հիմնավորել վաղեմի Ռուսական Հայաստանի տերիտորիան (որը մի քանի անգամ Թուրքիայի սակարկության առարկա է եղել) հայերին հանձնելու անհրաժեշտությունը, որպես մի տերիտորիա, որ ժամանակին, Հայաստանի և Խորհրդային Ռուսաստանի համար ողբերգական պահին, անիրավացիորեն հանձնվել է Թուրքիային:

բ) Վանա լճի և Իրանի սահմանի միջև եղած ուղղանկյունը հայերին հանձնելը թելադրվում է բացարձակ անհրաժեշտությամբ: Իրանի հետ հարևանության անհրաժեշտության մասին վերևում արդեն խոսեցի, իսկ Վանա լիճը խորհրդանշական է **Հայ ժողովրդի** համար՝ չէ՞ որ այստեղ էր նրա օրրանը:

Այդ հողերի տնտեսական նշանակությունը Թուրքիայի համար գրեթե հավասար է 0-ի: Հայերի պես հրաշալի հողագործները միայն կարող են այդ հողերը դարձնել իսկական պիտանի հողագործության համար:

գ) Ռեզե ծովափնյա փոքրիկ քաղաքը (15 հազար բնակիչ) իբրև տնտեսապես բարձիթողի արված ծովափնյա նեղ շերտ, Արևմտյան Հայաստանի համար բացառապես սիմվոլիկ նշանակություն կունենա, քանի որ այդ բնակատեղին բացարձակապես ոչնչով չի միանում թիկունքի հետ, չհաշված միակ բանուկ խճուղին, որը գնում է հարավ, այսինքն՝ դեպի այն հողերը, որոնք կմնային Թուրքիայի ձեռքին: Հետագայում միայն, եթե բարձր լեռների միջև կառուցվեն ստորանցքեր դեպի երկրի խորքը տանող երկաթգծի ու խճուղու համար, և եթե ստեղծվեն նավահանգստային հարմարանքներ (իսկ այժմ դրանք դեռ չկան), նոր Ռեզե քաղաքը նոր պետության համար կկարողանա դառնալ դարպաս դեպի աշխարհը:

դ) Մերձափնյա նեղ գոտին՝ նախկին Ռուսական Հայաստանի Ղարսի մարզի հետ միացնող տարածությունն անցնում է Էրզրումից հարավ-արևելք ընկնող տնտեսապես թույլ զարգացած և քիչ բնակեցված տեղերով:

ե) Անդրծովյան տերիտորիան (Արևմտյան Հայաստանից դուրս) Թուրքիային թողնելը ոչնչով չի փոխի ներկա դրությունը, քանի որ ինչպես այսօր, այնպես էլ հետագայում նա կկարողանա հարաբերություններ պահպանել սրա հետ մերձափնյա նավարկությամբ. չէ՞ որ այստեղ չկան ճանապարհներ ու երկաթգծեր:

Ամփոփելով շարադրածս, կարող եմ հաստատել, որ մինչև 1914 թիվը Թուրքիային պատկանած այդ հողերը, այսինքն՝ գագաթով դեպի ծովն ուղղված եռանկյունին և Վանա լճից արևելք ընկած ուղղանկյունը ներկայումս Թուրքիայի համար տնտեսական գրեթե ոչ մի արժեք չունեն: Մինչդեռ 1920 թվին Հայաստանից վերցրած հողերը (թեև համեմատաբար ավելի բերքատու) այսօր, ինչպես սեփական աչքով տեսա և համոզվեցի, բոլորովին ամայի են ու ավեր:

Հանձնելով Ձերդ Մեծությանը ամբողջ մարդկության համար մեծագույն կշիռ ունեցող այս խնդիրը, հավատում եմ, որ դա բեկման պահ կդառնա հայ ժողովրդի պատմության համար:

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՆ ՍԱՐՎԱՊԱԼԻ ՌԱԴՀԱԿՐԻՇՆԱՆԻՆ*

Ձե՛րդ գերազանցություն:

Իր գոյության տասնութ տարիների ընթացքում Անկախ Հնդկաստանը մեծագույն հեղինակություն է ձեռք բերել ամբողջ աշխարհում, որը ծվատվում է փոխադարձ ատելությունից ու փոխվստահության բացակայությունից: Հենց այդ պատճառով էլ համարձակվում եմ այդ հարգարժան երկրի գերագույն ղեկավարին դիմել մի գործով, որն արդեն վաղուց կորցրել է քաղաքական բնույթը և վերաճել համամարդկային ընդգրկման բարոյական պրոբլեմի: Նկատի ունեմ 20-րդ դարի առաջին խոշոր ցեղասպանությունը, որն ուղիղ հիսուն տարի առաջ (1915 թ. գարնանից մինչև 1920-ի վերջը) հայ ժողովրդի ընկատմամբ իրականացրեց երիտթուրքերի կառավարությունը, երբ ոչնչացվեց ամբողջ ազգի վաթսուն տոկոսը (մոտավորապես երեք միլիոն մարդ), իսկ փրկվածները սփռվեցին աշխարհով մեկ:

Որպեսզի խնդրո առարկան միանգամից դրվի պատշաճ մակարդակի վրա, պետք է նշեմ, որ ես հայ չեմ, և այս նամակն արտահայտում է ոչ թե որևէ տերության շահերը, այլ ամբողջ մարդկության խիղճը, որը չի կարող հաշտվել կատարված հանցագործության և նրա ողբերգական հետևանքների հետ:

Միջազգային դատարանը Նյուրնբերգում ցեղասպանությունը դիտեց որպես ամբողջ մարդկության հանդեպ հանցագործություն և դրա համար սահմանեց ամենադաժան պատժաչափերը: Որքան ինձ հայտնի է, այդ որոշումը որպես օրենք հաստատուն տեղ է գտել միջազգային իրավունքի մեջ, օժտված է հետադարձ ներգործությամբ, այսինքն՝ հավասարապես

* Տպագրվել է «Գրական թերթ»-ի 1990 թ. հունվարի 26-ի համարում՝ Հ. Կարճիկյանի հրապարակմամբ:

տարածվում է և՛ այդ որոշումը հրապարակելուց հետո, և՛ մինչև այն կատարված հանցագործությունների վրա: Չէ որ լեհերի ու հրեաների, ինչպես և Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների մյուս բնակչության նկատմամբ նացիստների ոճրագործություններն իրագործվել են մինչև միջազգային դատարանի կողմից **ցեղասպանություն** հասկացության սահմանումը, որի հիման վրա բանտարկվել ու մահապատժի են ենթարկվել երրորդ ռայխի զինվորական գլխավոր հանցագործները:

Եվ հենց այն պատճառով, որ այդ դատարանի որոշումները կիրառվում են նաև հետադարձ գործողությամբ (վաղեմության բացառում), հարկավոր է դրանք տարածել նաև հայ ազգի նկատմամբ **1915—1920 թվականներին կատարված ցեղասպանության վրա:**

Սակայն այդքան հեռու չեմ գնում: Անցած հիսուն տարվա ընթացքում, ամենայն հավանականությամբ, կյանքից հեռացել են կոտորածի բոլոր գլխավոր մեղավորները. **ծայրահեղ դեպքում** դեռևս ապրում են սոսկ երրորդական կարգի գործող անձինք: Պետք է միայն ցավ հայտնել, որ թուրքերն իրենց ժամանակին չեն մտածել հանցագործներին պատժելու մասին: Սակայն տակավին չի լուծված այն ազգին փոխհատուցելու հարցը, որի ոտքի տակից խլել են հողը, ուր իր պետության սահմաններում երեք հազար տարի ապրել է նա: Հո՛ղը, որի վրա ստեղծվել է Մերձավոր Արևելքի առավել հետաքրքիր մշակույթներից մեկը՝ հրաշալի շինարարություն, հարուստ գրականություն և գիտության կարևորագույն կենտրոններ, որոնց ազդեցությունը տարածվել է Կովկասի և ամբողջ Արևելքի վրա: Իսկ այժմ, թուրքական տիրապետության ներքո, այդ հողը համարյա վերածվել է ամայի անապատի ու հսկա աղբանոցի, որը լցվում է փլուզվող հին քաղաքների, պալատների ու ջրանցույց կամուրջների հող ու մոխրով:

Տակավին չի լուծված մեկ միլիոն այն երեխաների կյանքի դիմաց փոխհատուցման հարցը, ովքեր տրորվել են ուղեկցող ոստիկանների սապոգների և ձիերի սմբակների տակ՝ հիշարժան **մահվան երթի** ժամանակ, երբ միլիոնավոր մարդկանց Անատոլիայով քշում էին սիրիական անապատի ճամբարները: Այն երեխաների, որոնց սպանում էին բադի պես, որոնք մեռնում էին կրծքերի կաթը չորացած մայրերի ձեռքերին:



Հնդկաստանի պրեզիդենտին ուղղված բաց նամակից մի էջ

Տակավին մնում է չլուծված երկրորդ միլիոնի կյանքի դիմաց փոխհատուցելու հարցը՝ տարեց կանանց ու դեռատի այն աղջիկների, ում բազմիցս բռնաբարում էին ուղեկցող ոստիկանները, ապա հանձնում մահարշավի հետևից քարշ եկող չեչեններին, ովքեր բազում բռնաբարումներից հետո կտրում էին նրանց ստինքները, ճեղքում որովայները և այդպես թողնում ճանապարհներին, որտեղ էլ նրանք վախճանվում էին ահավոր տառապանքով: Եվ ա՛յն կանանց կյանքի դիմաց, ովքեր անատոլիական ամռան զարհուրելի դժոխքի միջով բազմօրյա հետիոտն երթից հետո, առանց ջրի ու սննդի, ուղղակի կենդանի կմախքների նման ի վերջո հասնում էին Դեր Զորի և Մեսկենայի միջև գտնվող սիրիական անապատի մահվան ճամբարները: Վերֆելը հիշում է այդ ճամբարներ այցելած թուրք հրամանատարի խոսքը. «Դրանք արդեն մարդկային էակներ չեն, դրանք ուրվականներ են... մարդանման կապիկների ուրվականներ, որ խոտ են ուտում, ոռնում սովից ու հերթով հանգչում: Կանայք ձիուս թրիքի մեջ որոնում էին վարսակի չմարսված հատիկներ»:

Տակավին մնում է չլուծված երրորդ միլիոնի կյանքի դիմաց փոխհատուցելու հարցը, այս անգամ՝ տղամարդկանց ու պատանիների, որոնց մահվան արշավից զատում էին, քշում ռազմական նշանակության ճանապարհների շինարարություն, որի ավարտից հետո ոչնչացնում էին պատժիչ ջոկատների համազարկերով: Այդ երրորդ միլիոնի մեջ էին նաև թուրքական բանակի հարյուր հազարավոր հայազգի զինվորները, որոնց, զենքերը խորամանկորեն հավաքելուց հետո, գնդակահարել են:

Տակավին մնում է չլուծված հայոց մշակույթի բոլոր մեծերի՝ ականավոր գրողների, փայլուն նկարիչների և հանճարեղ կոմպոզիտորների ոչնչացման դիմաց փոխհատուցելու հարցը: Նրանցից ոչ մեկը չի ապրել մինչև մահվան այդ արշավը, հայ նշանավոր կոմպոզիտոր և ժողովրդական երգերի հավաքող Կոմիտասը հրաշքով է փրկվել սպանդից, բայցև ցնորվել է ու մահացել՝ փարիզյան հոգեբուժարաններից **մեկում 20 տարի մնալուց հետո:**

Տակավին մնում է չլուծված արևմտահայերի մշակութային և հասարակական նվաճումների ոչնչացման դիմաց փոխհատուցելու հարցը. հիվանդանոցների, որտեղից քարշ են տալել հահուցողներին, մանկամսուրների, որոնցից դուրս են շպրտել հորածիններին, մանկապարտեզների, որտեղ երեխաներին խողխողել են սվիններով:

Տակավին մնում է չլուծված այդ կոտորածի վեց միլիոն զոհված, դեռ չսաղմնավորված զոհերի դիմաց փոխհատուցման հարցը, քանզի 1914 թվականին դեռևս ապրում էր հինգ միլիոն հայ, հետևապես, հաշվի առնելով բնական աճն անցած հիսուն տարում, նրանք այժմ պետք է լինեին ավելի քան տասը միլիոն, իսկ իրականում նրանց թիվը հազիվ է անցնում չորս միլիոնից. սա՛ է հիսուն տարի առաջ հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանության **հավելյալ արդյունքը:**

Միակ փոխհատուցումը, որը կբավարարեր հայ մնացողաց և որը նրանք պահանջում են, ծայրահեղ դեպքում հարազատ հողի այն պատառը վերադարձնելն է, որ թուրքական պետությունը օգտագործում է իբրև յուրօրինակ մրցանակ... **իրագործված ցեղասպանությանն** ի վճար: Իսկ իրավական ու բարոյական առումով արդյո՞ք արդար է, որ ցեղասպանության համար թուրքերին պարգևատրել են հողով, երբ պատերազմի գերմանացի հանցագործներին նույն բանի համար պատժում են:

Ի դեպ, այս գործին պետք է նայել այլ հայեցակետով ևս. այսպես կոչված «թուրքահայաստանը» եղել և շարունակում է մնալ Թուրքիայի տիպիկ գաղութ, իսկ այդ գաղութի բնակչության գազանաբարո ոչնչացման փաստն ամենևին էլ չի վկայում սույն տարածքի նկատմամբ թուրքական գերիշխանության օգտին: Թերևս ընդհակառա՛կը: Առավել ևս, որ գոյություն ունեն այդ տարածքի օրինական տերերի հետնորդները՝ մի քանի միլիոն հայ տարագիրները, ավելի ճիշտ բռնագաղթվածները: Այդ թիվը լիովին բավական է բնակեցնելու և յուրացնելու նրանց հինավուրց հայրենիքի լքված ու գրեթե անմարդաբնակ տարածքները:

Թուրքահայաստանը կամ Արևմտյան Հայաստանը, որը ի հեռուկս անվանը, կազմում է պատմական Հայաստանի տարածքի հինգսուն տոկոսը, հյուսիսից խորհրդային, իսկ հարավից Սիրիայի ու Իրաքի սահմանների արանքում սեղմված տարածքն է: Հայերը բարոյական լիակատար իրավունք ունեն պահանջելու վերադարձնել այդ ամբողջ տարածքը, որը եղել

է նրանց հայրենիքը, երբ ընդարձակ ասպարեզում ոչ թուրքեր են եղել, ոչ անգլիացիներ, ոչ լեհեր, ոչ էլ նույնիսկ հռոմեացիներ: Այն հռոմեացիները, որոնք աշխարհին տվել են արժեքավոր ասույթ, «Տուր, ինչ որ պետք է տրվի»:

Այդ իրավունքը ճանաչեց նաև Սևրի 1920 թ. դաշնագիրը պահանջելով Հայաստանը վերականգնել համարյա պատմական սահմաններում:

Այսպիսին են այս պրոբլեմի բարոյական ու իրավական մեկնակետերը՝ արդարության սկզբունքները և ազգերի ինքնորոշման իրավունքը պաշտոնապես հռչակած աշխարհում, որը վերջին մի քանի տարիներին, հաճախ նույնիսկ առանց մի կրակոցի, ազատագրեց Ասիայի և Աֆրիկայի համարյա բոլոր ժողովուրդներին, մոռացության տալով միայն մեկին՝ առավել դժբախտ և առավել անարգված ժողովրդին: Իսկ այդ ժողովրդին մոռացավ, քանզի այն, ինչ մենք անվանում ենք գաղութային շահագործում, այստեղ հասցված է եղել **չգերազանցված բարձունքի:** Ճիշտ է, գաղութային մի քանի պետություններ իրենց գաղութների նկատմամբ կիրառել են արյունոտ տեռորի մեթոդը, սակայն նրանցից ոչ մեկը բանը չի հասցրել ծայրահեղ աստիճանի, ինչպես հայերի նկատմամբ վարվել են թուրքերը: Այլ կերպ ասած, գաղութատեր ոչ մի պետություն համենայն դեպս 20-րդ դարում, համաչափորեն չի ոչնչացրել որևէ գաղութի **ամբողջ բնակչությունը:** Եվ այդ իսկ պատճառով Հայկական հարցը դարձել է ինչ-որ չափով աննախադեպ քանի որ համարվում է հող՝ **առանց մարդկանց և մարդիկ՝ առանց հողի պրոբլեմ:**

Խախտելով իրերի բնականոն կարգը՝ գաղութային սովորական պրոբլեմը տարրալուծվել է բաղկացուցիչ մասերի: Մի խոսքով, գաղութատեր մյուս տերությունների հանդեպ թուրքերի առավելությունը միայն այն է, որ անցնելով տեռորի չդադարազանցված սահմանները, նա «Արևմտահայաստան» կոչվող իր գաղութը տարրալուծել է բաղկացուցիչ մասերի, ասել է թե **հողը պոկել է մարդկանցից:** Բայց ինչպես որ բացառապես ջարդել-փշրելու և քայքայելու ընդունակ ամեն մի պարզունակ ուժ, նա ի վիճակի չի եղել, նույնիսկ թեկուզև ի՛ր համար արդյունավետ օգտագործել կասկածելի առավելության այդ յուրահատկությունը: Ծաղկուն երկիրը սոսկ վերածել է անապատի և նրա վրա թիկն տվել հարյուր փթանոց իր զանգվածով

Սակայն ժամանակի ընթացքում շատ բան է փոխվել. և ոչնչացված ժողովրդի՝ Թուրքիայի ձեռքում թողած պարտամուրհակը դադարել է նրա ներքին պրոբլեմը լինելուց: Մարդկությունը բիբլիական Եհովայի նման թուրք ժողովրդին հարց է տալիս. «Ի՞նչ արեցիր քո Աբել եղբորը»:

Մենք ապրում ենք աշխարհի մեծագույն դատավարության նախօրեին՝ աննախադեպ դատավարության, ինչպես որ աննախադեպ է եղել Հայկական հարցը՝ ժողովուրդ՝ առանց հողի և հող՝ առանց ժողովրդի: Դա կլինի քրեական դատավարություն, ուր մեղադրյալի աթոռին կնստի ոչ թե կոնկրետ մարդ, այլ ամբողջ մի պետություն, բովանդակ թուրք ազգը, քանզի առանձին հանցագործների պատժելն արդեն շատ ուշ է: Իսկ մեղադրողները կլինեն Ասիայի և Աֆրիկայի վերջերս ազատագրված ժողովուրդները, որոնք քաղաքականության մեջ բարոյական առումով ավելի զգայուն են:

Վկա է Աստված, ես չէի կամենա ողբերգական կնճռի նման ծայրահեղ լուծում, կնճիռ, որը հիմա թերևս հեշտությամբ կարող է լուծվել իրենց իսկ՝ թուրքերի ձեռքերով: Ես հավատում էի, որ դա հնարավոր է, երբ մի քանի տարի առաջ գրեցի իմ հանրահայտ «Նամակ իմ հին թուրք ծանոթին»-ը, որն արտատպվեց երկրագնդի չորս ծագերում, բայց որի կաղքով **հենց թուրքերն անցան լռությամբ:**

Իբրև մարդ, որն անձնապես շահագրգռված չէ, այս գործում և միաժամանակ վայելում է հայերի՝ և՛ բռնագաղթվածների, և՛ Խորհրդային Հայաստանի քաղաքացիների մեծ վստահությունը, ինձ թույլ եմ տալիս, Ձերդ գերազանցություն, Ձեզ հանձնել լուծման նախագիծը անլուծելի այն խնդրի, որն ահա հիսուն տարի կոչվում է Հայկական հարց: Այդ նախագիծը, թեպետ փոքր-ինչ այլ ձևով. բաց նամակի տեսքով ներկայացվել է նորին գերազանցություն պարոն Ռ. Տանին:

Ես ելնում եմ այն նախադրյալից, որ թուրքական կառավարությունը և հայերը հավասարապես շահագրգռված են թեկուզև տարբեր ելակետերով, այսպես կոչված, Հայկական հարցի վերջնական լուծմամբ: Ընդ որում, այդ ցավալի հարցը կարող է լուծվել բացառապես փոխհամաձայնության ուղիով: Սույն նախագիծը համարվում է հենց այդպիսի՝ երկու կողմերին ընդունելի փոխզիջում գտնելու փորձ:

Ես ընդունում եմ պատմական Հայաստանի ամբողջ տա-

ռածքի նկատմամբ հայերի բարոյական իրավունքը, բայց միաժամանակ դա համարում եմ քիչ հավանական: Թուրքիան չի կամենա հրաժարվել ոչ Իրանի ու Իրաքի հետ իր ընդհանուր սահմանից, ոչ Վանա լճից, ոչ էլ Խորհրդային Միության հետ ընդհանուր սահմանից: Այդ իսկ պատճառով հարցը դնում եմ այնպես, որ Թուրքիան պահպանի այդ ամենը, բայց հայկական ողբերգության համար նրան կաշկանդող պատասխանատվությունը նրանից լիովին հանվի:

Հայերի պահանջած տարածքի մանրամասն նկարագրությունը Դուք կգտնեք այս նամակի վերջում: Առայժմ ցանկացա սոսկ նշել, որ այդ տարածքը պլանավորված է այնպես, որ կարողանա ապրել սեփական, լիովին անկախ կյանքով, այսինքն՝ ունենա թեկուզ խորհրդանշական ելք դեպի ծովը և սահմանակից լինի հայ ժողովրդին բարեկամ Իրանին: Անհավասիկ իմ աչքի առաջ է երիտթուրքերի կուսակցության գաղտնի խորհրդակցության սղագրությունը 1914 թվի հոկտեմբերի 5-ին, երբ նյութվում էր հայերին տեղահանելու, մահվան ճամբարներում նրանց լիովին ոչնչացնելու որոշումը: Այդ ժամանակ ի նպաստ հայերի, արտահայտվել է երիտթուրքերի կառավարության քաղբյուրոյի անդամներից միայն մեկը. «Արտաքսել, բայց չոչնչացնել»: Եվ այդ առաջարկը պաշտպանելու համար նա բերել է հետևյալ փաստարկը. «Ես լավ գիտեմ հայերին: Կատարելով նրանց ցանկությունների թեկուզ մեկ հինգերորդը, մենք կարժանանանք նրանց շնորհակալությանը»:

Ըստ այդմ, արևմտահայկական պետության օգտին իմ առաջադրած տարածքը իրականում համապատասխանում է պատմական Հայաստանի տարածքի մեկ հինգերորդականին: Այդ նվազագույնից քիչ լինելու դեպքում պետությունը պարզապես կզրկվի գոյատևելու երաշխիքից: Այդ կերպ, նախացծված տարածքը դառնում է փոխզիջման առավելագույն ձգտում թե իրենց դահիճների հանդեպ ցեղասպանության զոհերի կողմից և թե բուն երկրի նկատմամբ գաղութի կողմից, և կարող է **ուշադրության արժանանալ միմիայն թուրքական կառավարության հետ երկկողմ համաձայնության դեպքում:**

Արևմտահայաստան կոչվող պետությունը, որը կկազմվի թուրքերի հետ հայերի փոխհամաձայնությամբ (ընդորում, ազատագրված ազգերի զինված ուժերի հսկողությամբ հայ բնակչության հայրենադարձության պարագայում), պետք է լինի **լիովին ինքնուրույն** պետություն (այսինքն՝ հավասարապես անկախ ինչպես Թուրքիայից, այնպես էլ Խորհրդային Միությունից) և **միանգամայն չեզոք**, այսինքն՝ կապված չլինի ոչ Խորհրդային Միության, ոչ էլ նրա հակառակորդների հետ: Եվ հայերը, թեպետ համարվում են խիստ տուժած կողմ, պատրաստ են փոխհատուցելու թուրքերի կառուցած բոլոր նոր շինությունների և այլազան օբյեկտների արժեքը ու վճարել թուրքական այն ինչքի դիմաց, որը կանցնի իրենց ձեռքը: Նրանք պատրաստակամ են Թուրքիային երաշխավորել առավել շահավետ առևտրական պայմանագրեր և, սեփական շահերից ելնելով, աջակցել իրենց հարակից թուրքական շրջանների տնտեսական վերելքին՝ նրանց հասցնելով այդ պետության առավել ծաղկուն մարզերի մակարդակին: **Փոխհամաձայնագիրը Թուրքիայի համար պետք է լինի ու կլինի շահավետ:**

Արևմտյան Հայաստանի ժողովուրդը ևս ունի իր հայրենիքի ազատության ու անկախության նույնպիսի իրավունք՝ ինչպես որ Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդները: Նա այդ իրավունքի դիմաց վճարել է հեղված այնքա՜ն շատ արյամբ և այնքա՜ն շատ տառապանքներով, որչափ աշխարհի և ոչ մի ժողովուրդ:

Եվ հենց այդ պատճառով է նա պահանջում, որ այդ արյունը, այդ տառապանքը լրջությամբ ընկալվեն: Եվ որ լրջորեն ընկալվի նրա այն հայտարարությունը, թե կամենում է ապրել այն հողի վրա, որն իր հայրենիքն է եղել առնվազն երեք հազար տարի, և այն հայտարարությունը, թե ինքը կգոհանա այդ հողի մի պատառով, եթե այն կամովին վերադարձվի իրեն:

Թուրքական կառավարությունը թող մի կողմ չքաշվի՝ հայտարարելով, թե արդեն գոյություն ունի հայկական մի պետություն (այսինքն Խորհրդային Հայաստանը), հետևապես չկա հայկական մի այլ պետություն ստեղծելու անհրաժեշտություն:

Հայկական ԽՍՀ-ն կազմում է նախկին Արևելյան կամ Պարսկահայաստանի մի մասը: Դա ոչ բարեբեր լեռնային փոքրիկ երկիր է (29,8 հազար քառակուսի կիլոմետր կամ անգլիական 11.500 քառակուսի միլ.). որն արդեն իսկ ի վիճակի չէ տեղավորելու ավելի բնակչություն, քան ունի այժմ, այսինքն՝ երկու միլիոն, որից 1,5 միլիոնը՝ հայեր: Դա պատմական Հայաստանի ընդամենը 10 տոկոսն է, և այդ պատճառով նրա սահմաններից դուրս (ԽՍՀՄ մյուս հանրապետություններում

և արտաքին սփյուռքում) դեռևս ապրում են 2,5—3 միլիոն հայեր, որոնց արդեն հնարավոր չէ այստեղ տեղավորել:

Այդուհանդերձ, այդ ոչ բերրի և խիտ բնակեցված երկրի կողքին փռված են համարյա անմարդաբնակ և հիմնովին լքված երկու տարածք.

1. Բուն Թուրքահայաստանը, որը կազմում է պատմական Հայաստանի 80 տոկոսը: Դրանք հայկական այն հողերն են, որ մինչև 1914 թվականը գտնվել են սուլթանական Թուրքիայի կազմում, որտեղ հայ ազգաբնակչությունը համարյա բնաջնջվել է:

2. Կարսի և Արդահանի մարզերը Արարատյան նախալեռների հետ (հայկական հողերի 10 տոկոսը), որոնք մինչև 1914 թվականը պատկանել են ռուսական կայսրությանը և չնայած հայ ժողովրդի ու այն ժամանակվա հայկական պետության ջանքերին, ռուսական հեղափոխության ժամանակ վաճառվեցին ռուսների կողմից: Թուրքերը շատ շուտ են հաղթահարել տեղական բնակչության դիմադրությունը՝ հիմնովին ոչնչացնելով նրան, ինչպես այնուամենայնիվ անկողմնակալությամբ գրել է թուրքերի նկատմամբ բարյացակամ լեհ արձակագիր Ստեֆան Ժերոմսկին, «լեռնային հեղեղատներում հրանոթների անիվների տակ դնելով դիալաստակներ»: Իսկ այն ժամանակվա հայկական կառավարությունն այնքան թույլ էր, որ չկարողացավ խոչընդոտ դառնալ: Մանավանդ, որ Ռուսահայաստանի պատառիկները զբաղեցրեց կարմիր բանակը, իսկ Խորհրդային Ռուսաստանը թուրքերին նվիրաբերեց նրանց գրավված այն տարածքները, որոնց մասին նշվեց վերը և որոնք կազմում էին այն ժամանակվա Ռուսահայաստանի կեսը: Թուրքիան ինքը, որ կարճ ժամանակամիջոցում կարողացավ այդ տարածքը լիովին դարձնել անապատ, մի քանի անգամ փորձեց այն վերադարձնել Խորհրդային Միությանը: Ինքնըստինքյան հասկանալի է, որ այդ մարզը (բացառությամբ Արդվինի շրջանի) ամբողջովին պետք է մտնի նոր պետության կազմի մեջ որպես նրա հիմնական միջուկը:

Կանխատեսվող պետության ամբողջ տարածքի նկարագիրը... ես շարադրել եմ Միավորված ազգերի կազմակերպության նորին մեծություն քարտուղարին իմ հղած բաց նամակում: Այդ նամակի համապատասխան հատվածն ունի հետևյալ բովանդակությունը.

Այդ տարածքի հիմնական կորիզը կազմում են այն հողերը, որոնք մինչև 1914 թվականը ռուս կայսրության մեջ էին (բացառությամբ Արդվինը, որի նկատմամբ հայերը պահանջ չունեն): Այնուհետև, սկսած այն վայրից, որտեղ ցարական Ռուսաստանի նախկին սահմանը կտրում-անցնում էր Ճորոխ գետը, հյուսիսային լայնությամբ մոտավորապես 41,8 աստիճանի վրա, շուրջ 110 կմ. (կամ 70 անգլիական միլ) երկարությամբ ընդհուպ ծովը կձգվեր նախատեսվող տարածքի հյուսիսային սահմանը: Այդպիսով որպես մերձծովյա տարածք, Թուրքիայի տիրապետության տակ կմնային Արդվինի ամբողջ շրջանը և առափնյա մի լայն գոտի...

Արևմտյան Հայաստանը կստանար սոսկ մոտ 25 կմ. (15—16 անգլիական միլ) լայնությամբ երկու փոքր գետերի գետաբերանների միջև ընկած առափնյա մի նեղ շերտ՝ միակ Ռիզե ավանով... նոր պետության արևմտյան սահմանը շեղակի կանցներ մինչև Բազիլար փոքր քաղաքը, հանգուցային այդ կետը Էրզրում քաղաքի հետ թողնելով Թուրքիային, այնուհետև մոտավորապես 40-րդ զուգահեռականի երկայնքով կմերձենար ցարական Ռուսաստանի և Թուրքիայի հին սահմանին:

Հին սահմանի և 43-րդ միջօրեականի (ըստ Գրինվիչի) հատման կետից նոր սահմանը կտրուկ կթեքվեր դեպի Վանա լիճ, շարունակ ձգվելով այդ միջօրեականով, ապա կանցներ մինչև Հայոց ձոր գետի (անվանումը հայկական է, ես չգիտեմ թուրքերեն համարժեքը) գետաբերանը, մինչև լճի հարավարևելյան անկյունը և վերջապես այդ գետով կթեքվեր դեպի արևելք և (այդ եզակի հատվածում) կհասներ Սևրի պայմանագրով նշված գծին, որի երկայնքով էլ կմոտենար իրանական սահմանին:

Հիմնավորում.

ա) Հայաստանի և Խորհրդային Ռուսաստանի պատմության ամենաողբերգական փուլում ցարի ժամանակվա Արևմտյան Հայաստանի՝ թուրքերի կողմից նվաճված տարածքի (որը, իմիջիայլոց, թուրքերը արդեն բազմիցս դարձրել են հրապարակային առուծախի առարկա) հանձնումը հայերին ընդհանրապես հիմնավորում չի պահանջում:

բ) Վանա լճի և Իրանի սահմանի միջև ընկած ուղղանկյունը հայերին հանձնելը թելադրվում է մի կողմից նոր պետության՝ Իրանին հարող սահմանի բացարձակ ավարտով (ին-

չի մասին ես արդեն վերը գրել եմ), մյուս կողմից՝ հայ ժողովրդի համար այդ լճի՝ պարզապես խորհրդանիշ լինելու պարագայով (քանզի այստեղ է գտնվել նրա օրրանը): Թուրքիայի համար այս հողերի տնտեսական նշանակությունը հավասար է համարյա զրոյի, այդ կիսաանապատը ծաղկուն երկիր դարձնել ի վիճակի են միայն այնպիսի հրաշալի երկրագործները, ինչպիսիք են հայերը:

գ) Ծովափնյա Ռիզե քաղաքը (15 հազար բնակչությամբ և քայքայված, տնտեսապես բարձիթողի ծովեզրյա նեղ գոտի առայժմ Արևմտյան Հայաստանի համար կենսական բացառիկապես խորհրդանշի արժեք, քանզի այդ տեղանքը թիկունքի հետ ոչ մի ձևով չի հաղորդակցվում (միակ, ի դեպ, վատ խճուղին այնտեղից ձգվում է դեպի հարավ, այսինքն՝ ամբողջանը, որը մնում է Թուրքիային): Ժամանակի ընթացքում բարձր, անանցանելի լեռների ընդերքով երկաթուղու և խճուղու համար թունելներ բացելուց ու նավահանգստային կառույցներ (ինչպիսիք այստեղ մինչև այժմ չկան) ստեղծելուց հետո միայն Ռիզեն նոր պետության համար կարող է խաղալ ջրային դարպասի դեր:

դ) Ծովափնյա նեղ գոտին նախկին Ռուսահայաստանի Կարսի շրջանի հետ կապող տարածքն Էրզրումից հյուսիս արևելք քիչ յուրացված և նոսր բնակեցված երկրամաս է:

ե) Թուրքիային թողնված առափնյա տարածքը (Արևմտյան Հայաստանից հյուսիս) ոչնչով չի փոխի այժմյան իրավիճակը, քանզի թուրքերը, ինչպես որ հիմա, առաջիկայում ևս նրա հետ պետք է պաշտպանեն մերձափնյա նավարկությամբ միջնադարյան կապ, որովհետև մինչև օրս այստեղ ոչ երկաթուղի կա, ոչ էլ խճուղի:

Հանրագումարի բերելով՝ կարող եմ հավաստել, որ նրանց խատեսվող այն տարածքները, որոնք մինչև 1914 թվին եղել են թուրքական տերության կազմում, այսինքն՝ ծովին հարող Եռանկյունին և Վանա լճից դեպի արևելք փռված ուղղությունը, ներկայումս Թուրքիայի համար տնտեսական համարյա ոչ մի արժեք չեն ներկայացնում: Իսկ Ռուսահայաստանի զավթված (համեմատաբար ավելի բերքատու) տարածքները տակավին ավեր են ու բարձիթողի (ինչպես ես ի տես հանդիպեցի):

Ձե՛ր գերազանցություն: Ես համոզված եմ, որ Հայկական հարցի որևէ այլ լուծում անընդունելի է լինելու հայերի կամ թուրքերի համար: Իմ նախագիծը գուցե չբավարարի բազմաթիվ հայ մաքսիմալիստների, իսկ թուրքական կողմին, ամենայն հավանականությամբ, կմղի (համենայնդեպս՝ սկզբնափուլում), վճռական ընդդիմության՝ գլխիս թափելով հազար ու մի վիրավորանք: Այդուհանդերձ, այս անելանելի կացությունից ազատվելու ուրիշ միջոց չկա: Եվ այսուհետև հարցի հենց այսպիսի լուծման համար կպայքարեն աշխարհում հայերի անկեղծ բարեկամները և նրանց հանդեպ բարեհաճ կառավարությունները (ես այդ բանում խորապես եմ համոզված): Գիտեմ, դա լինելու է ծանր պայքար, նաև գիտեմ, որ այն պսակվելու է լիակատար հաղթանակով, քանի որ համաձայնեցված է պատմության շնչառության հետ: Թեպետ համոզված չեմ՝ թուրքական կողմն արդյոք չի՞ դառնա այս ցավոտ հարցի հետագա արման մեղավորը:

Եվ այդ պատճառով այս ցավոտ գործը հանձնելով Ձեր պատվարժան ձեռքը՝ համարձակվում եմ, Ձերդ գերազանցություն, Ձեզ խնդրել Դելիում Թուրքիայի դեսպանին այնպես տրամադրել, որ նա իր կառավարությանը ներկայացնի սույն նամակի դրույթները և Ձեզ հայտնի՝ թուրքական կառավարությունը, արդյոք, տրամադրվա՞ծ է այս թեմայով իրական բանավեճ սկսելու:

Ավարտելով սույն նամակը՝ կամենում եմ ավելացնել ևս մի քանի բառ: Ես թուրքերի թշնամին չեմ, և խելահեղ հանցագործությունը, որը բարդված է նրանց վրա, չի կարող փոխել իմ այն համոզմունքը, որ այդ ժողովրդի մեջ շատ են բարեհոգի և մեծագույն հարգանքի արժանի մարդիկ: Ավելին, ես համոզված եմ, որ նրանք կազմում են թուրք ժողովրդի հսկայական մեծամասնությունը: Տա աստված, որ հենց այդ լավերի կարծիքն իշխի այս ցավոտ գործում, որը լեհական ավանդության հայտնի դավաճանի նման երբեք չի կարող թաղվել և անընդհատ պետք է ելնի արևերես: Այնքան ժամանակ, քանի դեռ չի գտել արդար լուծում: Այդ է տենչում ոչ միայն հայ ժողովուրդը, այլև ամբողջ աշխարհը:

Տա աստված, որ արդարության ծարավի այդ աշխարհի կողմն անցներ նաև թուրք ժողովուրդը, տա Աստված, որ արդարությունն քարոզող կուսակցությունն արդար լինի նաև հայերի հանդեպ:

Գիտեմ, կամպանիան, որը ե՛ս եմ սկսել, անհախադեպ է, ինչպես որ նախադեպը չունի ժողովուրդ՝ առանց հողի և հող՝ առանց ժողովրդի պրոբլեմը: Ավելին, լիակատար գիտակցությամբ ինձ վրա վերցնելով պատմական պատասխանատվության ծանրությունը՝ ես այն հանձնում եմ Ձեր պատվարժան ձեռքը՝ հուսալով, որ նույնիսկ թուրքերի կողմից ժխտական պատասխանի դեպքում Հնդկաստանն այս հարցը կբարձրացնի Միավորված ազգերի կազմակերպության համաժողովում, քանզի այդ կազմակերպության գլխավոր քարտուղարին իմ հղած նամակը սոսկ անհատի նամակ է, այդ պատճառով էլ չի կարող Հայկական հարցը մտցնել ՄԱԿ-ի օրակարգ:

Այն փաստը, որ սույն նամակը հասցեագրվում է հենց Ձեզ, Ձերդ գերազանցություն, խորապես հիմնավորվում է ոչ միայն նրանով, որ Դուք մեծ տերության ղեկավարն եք, այլև այն մեծ վստահությամբ, որ անձամբ Ձեր նկատմամբ տածում են բոլորը: Այդ վստահության ու հարգանքի մասին, որն ամբողջ աշխարհում վայելում է Հնդկաստանը, ես գրել եմ նամակիս հենց սկզբում: Բայց, անկախ դրանից, պետական խոշոր գործիչներից ոչ մեկն այնպես չի վայելում հայերի սերը, որքան Դուք: Այդ սերը ծնվել է այն ժամանակ, երբ Դուք, այցելելով Խորհրդային Միություն, Մոսկվայից ժամանեցիք ուղիղ Երևան՝ դրանով ապացուցելով Ձեր հատուկ վերաբերմունքը հայ ժողովրդի հանդեպ, որը, ինչպես Դուք ինքներդ թույլ տվեցիք հիշել, Ձեզ մանկությունից է շատ մոտիկ ու թանկ: Հայերը ինչ հուզմունքով պատմեցին, որ հայկական ժողովրդական անսամբլի՝ Ձեր պատվին տված համերգից հետո Դուք բարեհաճել եք հարցնել. «Ինչո՞ւ են այսքան թախծոտ ձեր բոլորի աչքերը»:

Թող այս նամակը միաժամանակ լինի հիմնական այդ հարցի պատասխանը, քանզի միայն Ձեզանից է կախված, որ այդ աչքերն այլևս թախծոտ չլինեն:

Անկեղծորեն Ձեզ նվիրված՝

Բոգդան Գեմբարսկի

ՆԱՄԱԿ ԻՄ ՀԱՅ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ*

Թանկագին ու մեծարգո բարեկամներ:

Իմ կյանքում այս ամենանշանակալի նամակը ես բազմիցս փոփոխել եմ: Քանի որ շատ դժվար է մեկ հոդվածի շրջանակներում որոշակի ճշտությամբ տեղավորել այդքան շատ բացառիկ կարևոր նյութ:

Անցած երեք տարիները ինձ համար բավական ծանր շրջան էին: Ես երեք անգամ ծանր հիվանդացա, և յուրաքանչյուր հիվանդությունս ինձնից խլեց կյանքիս մի քանի ամիսը: Սկզբում հեռացրեցին երիկամս, ապա որոշ բարդացումներից հետո հիվանդացա միզարյունությամբ, և վերջապես, երբ ես արդեն լրիվ կազդուրվել էի, փողոցում ընկա մեքենայի տակ: Դրա հետևանքով ոտքս ազդրի շրջանում կոտրվեց և ուղեղի ցնցում ստացա: Տասնինը օր կորցրել էի հիշողությունս:

Ես ձեզ չէի գրի այդ անհաջողությունների մասին, եթե չլիներ այն փաստը, որ, մերթ ընդ մերթ կորցնելով հիշողությունս, հատկապես աշնանը, 64 տարեկան հասակում, երբ ես հիվանդացա միզարյունությամբ, ամբողջ ընթացքում մտովի ձեզ հետ էի, իմ սիրելի Հայաստանի հետ, հայերից նամակներ էի ստանում ու պատասխանում նրանց: Իսկ իմ բարի կինը, որն անգլերեն ոչ մի բառ չգիտի, համբերատարությամբ այդ անկապ պատասխանները մեքենագրում էր ու ուղարկում: Եթե երբևէ, 100 տարի անց, գիտական աստիճանի որևէ թեկնածու հետաքրքրվի իմ համեստ անձով և փնտրի-գտնի իմ կյանքի այդ տխուր շրջանին պատկանող նամակները, ապա, անտարակույս, կզարմանա, որ համեմատաբար ոչ հիմար մարդը կարող էր այդպիսի անհեթեթություն գրել:

Այս համառոտ ինքնակենսագրական շեղումներից հետո ես անցնում եմ նամակիս հիմնական թեմային:

---

* Տպագրվել է «Երեկոյան Երևան» թերթի 1990 թ. հունվարի 25-ի համարում՝ Հ. Կարճիկյանի հրապարակմամբ:

***

Ես վաղուց էի երազում հայկական վտարանդիության քաղաքական շրջանների հեղինակավոր մարդկանց հետ կարծիքների անկեղծ փոխանակության մասին: Բայց դա ինձնից անկախ պատճառներով ինձ համար շատ դժվարին խնդիր է:

Հուսալով, որ այս նամակը կհասնի ձեզ, ջանում եմ հնարավորին չափ մտքերս համառոտ ու հստակ արտահայտել:

1919 թ. վերջին ինձ համար միանգամայն անսպասելի հայտնվեցի ամբողջ հայ հասարակայնության ուշադրության կենտրոնում՝ Հայաստանի Հանրապետությունում ու նրա սահմաններից դուրս: Կրկնում եմ, որ դա ինձ համար անսպասելի բան էր, քանի որ հոդվածը, որ այդպիսի խանդավառություն առաջացրեց («Նամակ իմ թուրք ծանոթին»), չէր բովանդակում ոչ մի նոր պատմական տարր:

Միակ բանը, որ անձամբ ես համարում եմ այդ հոդվածի որոշ արժանիքներից, այն էր, որ այն օրակարգի մեջ էր դնում թուրքերի կողմից կատարված հանցագործությունների համար հայերին վարձահատույց լինելու պրոբլեմը: Այդ վարձահատուցման ձևերը լրիվ հասկանալի պատճառներով այն ժամանակ ես չէի սահմանել, բայց տողերի միջև կարելի էր կռահել, որ միակ մատչելի հատուցումը կլիներ Թուրքահայաստանի առնվազն մի մասի ազատագրումը՝ որպես ներկայումս աշխարհում տեղի ունեցող ապագաղութացման օղակներից մեկը:

Այս նամակի երկրորդ հիմնական միտքն այն էր, որ Հայկական հարցը այսօր, 20-րդ դարի երկրորդ կեսին, բարոյական կարգի համամարդկային պրոբլեմ է: Իսկ դա որոշակի տեսակարար կշիռ ունի, քանի որ բարոյական սկզբունքները այժմ պաշտոնական փաստարկներ են միջազգային քաղաքականության ասպարեզում: Ու թեև մեծ տերությունները երբեմն այդ սկզբունքներից օգտվում են իրենց անբարոյական նպատակների համար որպես վարագույր օգտագործելով դրանք, այդուհանդերձ, քաղաքականության ասպարեզում բարոյականության պաշտոնական գերակայության բուն փաստը բարենպաստ պայմաններ է ստեղծում բարոյական կարգի այնպիսի հատկապես հասունացած պրոբլեմների լուծման համար, ինչպիսին Հայկական հարցն է: Առավել ևս, որ բարոյականության այդ հարաբերականությամբ հանդերձ, հենց դա է ապագաղութացման և ցեղասպանության գերմանացի մեղավորների հետապնդման ձևական շարժառիթը: Իսկ արդեն գոյություն ունեցող Ասիայի, Աֆրիկայի պետությունները, որոնք այդ ապագաղութացման արդյունքն են, անկեղծորեն ու լրջորեն են ընդունում բարոյական նորմերի սկզբունքների միջազգային քաղաքականության մեջ, և իրենց քանակի շնորհիվ ազդում են բոլոր միավորված ազգերի հասարակական կարծիքի վրա:

Անդրադառնալով հոդվածիս, որի մասին խոսվում է, և կշեռքի մի նժարին դնելով կշռաքարեր, իսկ մյուսին՝ իմ հայ ընթերցողների նամակները, որոնց մեջ նաև համաշխարհային գիտության ու արվեստի հսկաներ են, ես ակամայից հուզմունք էի ապրում այն գործի վեհության համար, որին ձեռնամուխ էի եղել, առաջ քաշելով դեռևս մեր սերնդի օրոք Թուրքահայաստանի ազատագրման գաղափարը: Ես հավատացնում եմ ձեզ, որ կշեռքի այն նժարը, որին Խորհրդային Հայաստանի ու արտասահմանի իմ բարեկամներից ստացած նամակներն են, իր տեսակարար կշռով զգալիորեն ավելի ծանր է, քան իմ համեստ ելույթը:

Իսկ անձամբ ինձ համար առավել էականն այդ նամակներում դրանց ընդհանուր լեյտմոտիվն էր՝ վստահության մեծ քվեն և հաստատ պահանջը՝ արտահայտված ջերմ բառերով, որ հօգուտ Թուրքահայաստանի ազատագրման իմ գործունեությունը չսահմանափակվի այդ մի հոդվածով, այլ ընդունի ավելի մշտական բնույթ, հասկանալի է, հայկական ազատագրական շարժման ընդհանուր հունի մեջ, որտեղ իմ ընթերցողները կուզենային տեսնել նաև իմ անձնական ավարը:

Թանկագի՛ն բարեկամներ, հայ հասարակայնության կողմից ինձ որդեգրելու անօրինակ փաստը ինձ համար ոչ միայն մեծագույն պատիվ էր, այլև հրաման, որին ես ենթարկվեցի հանույքով ու հպարտությամբ, փոխարենը ազնիվ հայ ժողովրդին տալով իմ հավատը. ոչ, ոչ թե հավատը, այլ Արևմտյան Հայաստանի հողերի մոտալուտ վերածնման լիակատար վստահությունը:

Այդ վստահությունը հիմնված է ոչ միայն ամենաբարձրյալ արդարության անորսալի պատմագրական օրենքների վրա, այլև ամենից առաջ արդի քաղաքական իրավիճակի և աշխարհում տեղի ունեցող խոր փոփոխությունները լրիվ, իրատեսորեն հաշվի առնելու վրա: Դրանք ամենից առաջ այնպիսի գոր-

ծոններ են, ինչպիսիք են մեր հայացքի առաջ տեղի ունեցող ապագաղութացման տարերային պրոցեսը, ցեղասպանության պաշտոնական ճանաչումը որպես հանցագործություն մարդկության դեմ, Ազգերի լիգայի համեմատությամբ Միավորված ազգերի կազմակերպության զգալի հեղինակությունը, նրանում մեծ թվով նոր աֆրիկա-ասիական պետությունների առկայությունը, որոնք հայ ժողովրդի բնական դաշնակիցներն են, և, վերջապես, ամբողջ աշխարհում տեղի ունեցող կրոնական ու բարոյական վերածննդի պրոցեսը՝ անցյալի հետ անչափ խիստ հաշիվներ մաքրելու հովանու ներքո: Իսկ մի՞թե գաղութարարությանն ընդմիշտ վերջ տալու վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության բանաձևը ձեզ համար ուղղակի հրավերք չէ: Եթե դուք ինքներդ թերագնահատում եք ձեր նյութական ու բարոյական ուժերը, ապա փոխարենը դրանք լրիվ գնահատում են ձեր թշնամիները: Մի՞թե դուք կարծում եք, որ թուրքական կառավարությունը հետևի ոտնաթաթերին կկանգներ Խորհրդային Միության առջև, եթե հայկական կոտորածի հոբելյանական տարում չվախենար հենց ձեզնից:

Թանկագին բարեկամներ, նամակը, որ հիմա ես ձեզ գրում եմ, որոշ չափով իմ խոստովանանքն է: Ուստի ես առավելագույնս անկեղծ կլինեմ: Գուցե իմ պատկերացումները հայկական վտարանդիության որոշ շրջանների մտածելակերպի մասին հիմնավորապես ճիշտ չեն, որը լրիվ հասկանալի կլիներ, քանի որ ես ապրում եմ միանգամայն այլ երկրաքաղաքական իրավիճակում և հնարավորություններ չունեմ անմիջականորեն ստուգելու իմ դատողությունների ճշտությունը:

Արդյոք իմ կողմից հանդգնություն չի՞ լինի, եթե ես հայկական վտարանդիության կառավարող շրջանների իմ բարեկամներին տամ ամենահիմնական հարցը. «Արդյո՞ք դուք հավատում եք մեր սերնդի օրոք մեռյալ Արևմտյան Հայաստանի հարություն առնելու հնարավորությանը և մտադի՞ր եք արդյոք բարենպաստ կոնյունկտուրայի կապակցությամբ միջազգային համաժողովում առաջադրել անկախության կոնկրետ պահանջներ առնվազն այդ տարածքի մի մասի համար: Արդյոք դուք այդ հողերի ազատագրման համար քաղաքական պայքարը 1966 թ. կոնկրետ պայմաններում համարո՞ւմ եք իրական կամ ոչ իրական»:

Ես գիտեմ, որ անցած 50 տարիներին դուք քանիցս Հայկական հարցը առաջադրել եք միջազգային կոնֆերանսներում և որ այդ ամենը ապարդյուն է անցել: Արդյո՞ք այդ անհաջողություններից միանգամայն հասկանալի պատճառներով ծնված սկեպտիցիզմը հիմնական խոչընդոտը չէ ձեր ամբողջ մտածելակերպը հայրենիքի ազատագրության համար ակտիվ, նպատակասլաց, համազգային պայքարի փոխարինելու ճանապարհին՝ մինչև օրս հայրենի երկրի սահմաններից դուրս ազգի կենսաբանական ու մշակութային պահպանման պարտավորեցնող սկզբունքի փոխարեն:

Ես պետք է ձեր ժողովրդի անկեղծ բարեկամի իմ դերը որոշ չափով անկատար համարեմ, եթե ինձ չհաջողվի արագացնել ստատիկայից դեպի դինամիզմ այդ նշանակալի տեղաշարժը՝ սփյուռքահայ հասարակայնության մտածելակերպում, քանի որ առանց այդ տեղաշարժի անիմաստ է մինչև օրս չլուծված վերջին ազգային ու գաղութարարական պրոբլեմի լուծումը, որի տեսակարար կշիռը հենց այն պատճառով է շատ մեծ, որ փաստորեն վերջինն է:

Եթե որոշ հայեր դեռևս մտածում են, թե «ինչքան ենք մենք, իսկ ինչքան նրանք», ապա ես համարձակվում եմ նրանց հիշեցնել, որ 12 կիսագրագետ ձկնորսներ հաղթեցին Հռոմեական կայսրությանը և իրենց ուսմունքը տարածեցին երկրագնդի կեսում, որ մեքքացի վաճառականը, որին իր հայրենակիցները քարկոծեցին, նվաճեց աշխարհի մեկ քառորդը՝ Մարոկկոյից մինչև Ինդոնեզիա, որ նոր հավատի ստեղծողը, որը հօդս ցնդեցրեց Ռուսաստանյան կայսրությունը և նրա փլատակների վրա կառուցեց նոր գերտերություն, սկզբում իր տրամադրության տակ ուներ հազիվ մի բուռ կողմնակիցներ և չընչին բյուջե: Իսկ հրեական պետության ստեղծման գաղափարախո՞սը: Ինչի՞ց նա սկսեց և ի՞նչ անհաղթահարելի խոչընդոտների ստիպված եղավ բախվել: Անտարակույս, շատ բան է փոխվել այն ժամանակներից, երբ տարբեր դարաշրջաններում գործում էին պատմական մեծ փոփոխությունների այդ մեծ հիմնադիրները: Բայց այդ ամենը փոխվեց ձեզ համար հենց բարենպաստ ուղղությամբ: Քանի որ նրանցից ոչ մեկը՝ ոչ Քրիստոսը, ոչ Մուհամեդը, ոչ Լենինը, ոչ Թեոդոր Հերցլը իրենց գործունեության սկզբում չունեին այն բարենպաստ պայմանների հարյուրերորդական մասը, ինչպիսիք ձեզ համար ներկայումս ստեղծել է գաղութային աշխարհի մեծ բեկումը:

Աշխարհի այդ մեծ ճարտարապետների ուժի միակ աղբյուրը հավատն էր իրենց գաղափարների իրավացիության նկատմամբ և այն, որ նրանք «ուզում էինք ցանկանալ»: Այն հենց «ուզում էին ցանկանալ»:

Մի՛ բարկացեք ինձ վրա այս բառերի ակամա դառնության համար: Իմ հոգեկան ամբողջ խառնվածքով ես ոչ թակտիկ եմ, այլ ստրատեգ: Ես հավատացնում եմ ձեզ, որ ստրատեգիական կոնցեպցիաները միանգամայն իրականանալի են: Եվ որ դրանք արժանի են ձեր վստահությանը: Իմ բառերի դառնության աղբյուրն այն է, որ ես անկեղծորեն պրում եմ ձեզ ու ձեր հայրենիքը:

Ես լրիվ գիտակցում եմ, որ իմ առաջին կոնցեպցիան կարող են սխալ լինել պարզապես այն պատճառով, որ ես բավական հեռու եմ հայ մտքի բոլոր կենտրոններից և հնարավորություն չունեմ իմ գաղափարները համաձայնեցնել վտրանդիության հեղինակավոր անձանց հետ, ուստի և անկեղծորեն խնդրում եմ ձեզ ազատագրական պայքարի իմ ծրագրի հիմնական տարրերի ստորև բերվող թվարկումը համարել լիբանանավեճի թեմա, նախքան այդ ծրագրի առաջին հոդվածն հայ հասարակայնության իրազեկ շրջանները կընդունեն կամ մերժեն: Ահա դրանք:

1. Լայն, համաշխարհային առումով, ամենից առաջ պետությունների ղեկավարներին ուղղված բաց նամակների կամպանիա: Ես այն սկսել եմ երկու նամակով. «ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին» և «Հնդկաստանի պրեզիդենտին»: Դրանցից մեկն արդեն տպագրվել է հայկական մամուլում, մյուսը երևի նույնպես շուտով կտպագրվի, բայց դրանք հիմնականում նախատեսված են ոչ թե հայկական թերթերի, այլ հոբելյանական կոմիտեի հետ նախնական համաձայնությամբ՝ ամերիկյան «Լայֆ» և «Թայմ» հանդեսների ու ֆրանսիական «Ֆիգարո» թերթի համար են, քանի որ դրանք այնտեղ տպագրելուց հետո միայն կարելի է հուսալ այդ նամակների քաղաքական էֆեկտ: Ինքնըստինքյան հասկանալի է, որ դա միայն լայն կամպանիայի սկիզբն է, որն աստիճանաբար պետք է ընդլայնի իր շրջանակը վաղօրոք կշռադատված պլանով, ընդ որում՝ յուրաքանչյուր նամակը մի աստիճան է այդ պլանի իրականացման գործում:

Սկզբում ես մտադիր էի սկզբից մինչև վերջ անձամբ վարել բաց նամակների ամբողջ կամպանիան, եթե, իհարկե, հայկական վտարանդիության ղեկավար շրջանները ինձ հանձնարարեին այդ խնդիրը: Սակայն չեմ կարծում, թե դա իրականանալի կլիներ. ոչ միայն իմ առողջական վատ վիճակի պատճառով, այլև ուրիշ պատճառներով: Առավել ևս հայկական ոչ մի կազմակերպություն և ոչ մի հայ ֆինանսիստ ցանկություն չի հայտնում հրավիրել ինձ արտասահման և ապահովել արդասավոր աշխատանքի անհրաժեշտ պայմաններով: Այդ կապակցությամբ սույն նամակի վերջում ուզում եմ առաջ քաշել ևս մի լրացուցիչ նախագիծ:

2. Բաց նամակների կամպանիայի լրացումը կլիներ ուրիշ, աշխարհի բոլոր նշանավոր մարդկանց ուղղված մասնավոր նամակների զուգահեռ կամպանիան (հասցեները դուք կգտնեք միջազգային ալմանախում):

Արևմտյան Հայաստանի ազատագրման գործին ամեն կերպ նպաստելու՝ հասցեատիրոջն ուղղված ջերմ կոչ բովանդակող նամակներին պետք է կցվի համապատասխան գրականություն, օրինակ, իմ «Նամակ իմ թուրք ծանոթին» նամակի անգլերեն թարգմանությունը (այն Ամերիկայում հրատարակվել է առանձին բրոշյուրով) կամ դրա նման որևէ այլ բան:

Ի դեպ ասած, ես արդեն մի անգամ նմանօրինակ նախաձեռնությամբ հանդես եմ եկել 1964 թ. վերջին: Եվ իմ նախագիծը թվում է, թե պատճառաբանել եմ բավական տրամաբանորեն, թեև հենց այդ ժամանակ էի ես ծանր հիվանդ միզարյունությամբ և քանիցս կորցրել եմ գիտակցությունս: Բայց Բեյրութի հայկական կազմակերպությունը, որին այն ժամանակ ես նամակ գրեցի, նույնիսկ ինձ չպատասխանեց:

Չեմ կարծում, որ այդ մասնավոր հասցեատերերի առնվազն մեկ տոկոսը հետաքրքրվում էր Հայկական հարցով: Բայց եթե այդ ճանապարհով դուք ունենաք «Գեմբարսկու պես» մի քանի տասնյակ բարեկամ, ապա դա նույնպես որոշակի հաջողություն կլինի, թեև կարծում եմ, որ ես ինքս ձեզ բավական շատ հոգսեր եմ պատճառում:

3. Պետք է ստեղծել հայ ժողովրդի բարեկամների տեղական ընկերություններ. ամենուրեք, որտեղ դա միայն հնարավոր լինի, բայց գլխավորապես արևմտաեվրոպական երկրներում ու Միացյալ Նահանգներում: Այդ գաղափարին էին նվիրված իմ «Երեք նամակները անծանոթ ընթերցողին», որոնք,

եթե չեմ սխալվում, գտնվում են Բեյրութի «Ազդակի» խմբագրությունում: Ի դեպ, դրանք, ինչպես որ Ու Տանին և Ռադիոկրիշնանին ուղարկված նամակներս ըստ էության ոչ թե հայկական, այլ օտարալեզու մամուլի համար էին:

4. Պետք է առավելագույն ջանքեր գործադրել քաղաքական դաշնակիցներ ձեռք բերելու նպատակով: Գլխավորապես դրանք պետք է ձեռք բերել այսպես կոչված «երրորդ աշխարհի պետությունների», այսինքն՝ չեզոք, ամենից առաջ աֆրիկյան պետությունների շրջանում, քանի որ համեմատաբար հեշտ է անձնական կապ հաստատել այդ երկրների կառավարական շրջանների հետ, որոնք հատկապես զգայուն են ամեն մի գաղութային պրոբլեմի նկատմամբ: Այստեղ հսկայական օգնություն կարող են ցույց տալ Աֆրիկայում սփռված հայերը: Այդ պետություններից մի քանիսում ամենայն հավանականությամբ հնարավոր կլինեն ստեղծել պայքարի կոմիտեի պաշտոնական ներկայացուցչությունների պես մի բան (որի մասին կգրեմ ստորև): Չպետք է մոռանալ, որ նույնիսկ ամենափոքր նեգրական պետությունը ՄԱԿ-ի անդամ է, հետևաբար և մեկ ձայն, որը կարող է օգտագործվել մեր գործի համար:

Սնամորթ Աֆրիկայից դուրս պետք է նմանօրինակ կամպանիա ծավալել արաբական երկրների տարածքում (երկու աշխարհամասերում), Ասիայի, Լատինական Ամերիկայի և Հարավային Եվրոպայի (Հունաստան, Մալթա, գուցե նաև Կիպրոս) որոշ երկրներում: Մի խոսքով՝ այնտեղ, որտեղ նշմարվում են հայերի պահանջների պաշտպանության հնարավորություններ:

Նմանօրինակ փորձեր հայ ժողովրդի բարեկամների ընկերությունների, բաց նամակների և նշանավոր անձանց աջակցությամբ պետք է անել նաև աշխարհի գլխավոր երկրներում, հատկապես այն պետություններում, որոնք Ֆրանսիայի ու Հնդկաստանի պես վարում են ինքնուրույն քաղաքականություն: Միշտ է, ֆրանսիական կառավարությանը հմտոզելը, թերևս, շատ դժվար կլինի, բայց եթե դա առհասարակ մտահղացված է, ապա այն կարելի է կատարել հիմա, դը Գոլի կառավարման օրոք:

5. Պետք է թափանցել հիմնական միջազգային կազմակերպություններ և փորձել ստանալ նրանց աջակցությունը ՄԱԿ-ի ու նրա մասնաճյուղերի համաժողովներում:

6. Պետք է Հայկական հարցը առաջ քաշել ամեն կարգի միջազգային կոնֆերանսներում (գլխավորապես աֆրոասիական կամ աֆրոասիական հարավամերիկյան ու չեզոք երկրների և Միավորված ազգերի կազմակերպության համաժողովներում՝ ուղղակի կամ անուղղակի ճանապարհով (այն կառավարությունների միջոցով, որոնց հետ հաջողվել է բարեկամություն հաստատել, կամ միջազգային կազմակերպությունների միջոցով):

7. Պետք է հնարավորին չափ շատ օգտվել գաղութատիրությունը վերջնականապես վերացնելու մասին միավորված ազգերի դեկլարացիայից, պնդելով, որ Արևմտյան Հայաստանը պարզապես Թուրքիայի գաղութ է, իսկ այդ գաղութի բնիկ բնակչության զգալի մասի ոչնչացման փաստը չի կարող փաստարկ համարվել հօգուտ հանցավոր մետրոպոլիայի:

8. Պետք է ամբողջ աշխարհի հասարակական կարծիքին համոզել, որ Նյուրնբերգի միջազգային դատարանի այն բանաձևը, որով ցեղասպանությունը ճանաչվել է որպես հանցագործություն մարդկության դեմ, գործում է նաև անցյալի նկատմամբ: Չէ՞ որ այն ժամանակ պատժվեցին գերմանացի հանցագործները, որոնք ցեղասպանություն էին կատարել մինչև այն մարդկության դեմ հանցագործություն ճանաչելը: Հետևաբար, Նյուրնբերգի միջազգային դատարանի որոշումները լրիվ վերաբերվում են նաև հայ ժողովրդի դեմ կատարված ցեղասպանությանը:

Այդ ամենը կլինի միայն նախապատրաստական կամպանիա Թուրքահայաստանի ազատագրման պայքարի վերջնական փուլից առաջ: Եվ այստեղ կարող են լինել երկու տարբեր հանգուցալուծումներ.

1. Թուրքական կառավարությունը համաձայնություն կկայացնի հայկական վտարանդիության հետ երկկողմ համաձայնագրի և այս կամ այն փոխադարձ զիջումների ճանապարհով: Ըստ իս, տվյալ դեպքում պետք է պնդել այն սահմանների վրա, որոնք նախանշված են Ու Տանին և Ռադհակրիշնանին գրած իմ նամակներում: Այսինքն՝ իրանական սահմանի միջև ընկած տարածքի վրա, որն ընդգրկում է Վանա լճի շրջակայքը և ելք ունի դեպի ծով:

Թուրքիայի հետ լրիվ համաձայնության հասնելու դեպ-

քում առաջարկված տարածքը պետք է ժամանակավորապես օկուպացվի ՄԱԿ-ի զորքերի կողմից:

2. **Թուրքական կառավարությունը չի ցանկանա որևէ բանակցություն վարել:** Այդ դեպքում, հասարակական կարծիքի համապատասխան նախապատրաստությունից և իր համար մի շարք երկրների աջակցությունն ապահովելուց հետո անհրաժեշտ կլինի դատական գործ հարուցել միջազգային դատարանում, որտեղ հայկական վտարանդիությունը հանդես կգա թուրքական կառավարության դեմ, պահանջելով հատուցել հսկայական նյութական ու բարոյական կորուստները, վերադարձնել այն կողոպտված հողերը, որոնք մտնում էին, այսպես կոչված, «Թուրքահայաստան» կոչվող գաղութի մեջ, ընդհուպ մինչև սիրիական ու իրաքյան սահմանները, այսինքն՝ պատմական Հայաստանի աշխարհագրական սահմաններում:

Իդեպ, ես անձամբ կարծում եմ, որ բանը չի հասնի դատավարության, ինչը անցանկալի կլիներ նաև մեզ համար, և որ համաձայնությունը Թուրքիայի հետ միանգամայն ճշմարտանման է, եթե այն, իհարկե, լավ նախապատրաստվի:

Հայերի նկատմամբ թուրքերի դարավոր տիրապետության հետևանքով հայ հասարակայնության լայն խավերում մինչև օրս Թուրքիան համարում են մեծ տերություն, այլ ոչ թե երկրորդական պետություն, ինչպիսին նա արդեն իրականում հանդիսանում է: Եվ միաժամանակ մոռանում են, որ նա, ինչպես առհասարակ բոլոր մեծ և փոքր պետությունները, հաղորդակցվող անոթների այն համակարգի մի օղակն է, ինչպիսին ժամանակակից աշխարհն է, ուստի և չի կարող անտեսել ուրիշ երկրների կարծիքը, եթե այդ կարծիքը Հայկական հարցում միահամուռ նրա դեմ լինի:

Մյուս կողմից՝ ես ինձ թույլ եմ տալիս հայտնել այն միտքը, որ գուցե հաջողվի որոշ թուրք մտավորականների համոզել հայկական գործի իրավացիությանը, հատկապես նրանց, ովքեր լինում են արտասահմանում, և որ նրանց աջակցությամբ հայկական տարածքային պահանջները պատշաճ կերպով կբացատրվեն-կպարզաբանվեն թուրք հասարակայնությանը:

Հնարավոր է, որ որոշակի պահի գործն այնքան հասունանա, որ կարելի լինի հայկական կանխադրույթները ձևակերպել թուրքական հանրապետության պրեզիդենտին ուղղված բաց նամակում:

Գուցե այս հոդվածի ընթերցողները թոթվեն ուսերը. «Այստեղ մեզ համար ոչ մի նոր բան չկա»: Չէ՞ որ մենք հիանալի գիտենք, որ պետք է մեզ համար ապահովենք աշխարհի հասարակական կարծիքը, բայց դրանից մինչև Հայաստանի վերականգնումը դեռ շատ հեռու է: Ի դեպ, Նիգերիան կամ Տանզանիան ի՞նչ ընդհանուր բան կարող են ունենալ Նախիրի հետ: Պարզվում է, շատ ընդհանուր բան ունեն: Լեհական զորքերը երկու անգամ իրենց հայրենիքը ազատագրելու համար գնացին Իտալիայով (ինչն, իմիջիայլոց, ամուր հետք է թողել մեր ազգային հիմնում), իսկ Հոոմը նույնպես բավական հեռու է Վարշավայից: Եվ աշխարհն այն ժամանակ դեռ միացյալ անոթների համակարգ չէր: Եվ դեռ չկար գաղութային ժողովուրդների միջազգային համերաշխություն հասկացությունը:

Հրաշքները թողնենք հեքիաթների հեղինակներին: Սասունցի Մհերը չի գա Թուր կեծակով: Թուրքահայաստանը կարող են ազատագրել միայն գլխավորապես միջազգային ասպարեզում ուժեղացված ու նպատակասլաց աշխատանք կատարած մարդիկ, առավելագույնս օգտագործելով բացառապես քարենպաստ հոսանքները, որոնք արդեն քանի տարի է՝ ակոսում են մեր աշխարհը: Իսկ որոշ ժամանակ անց ընդմիշտ կանհետանան:

Իմ որոշ բարեկամներ՝ հայ բանաստեղծներ, հոդվածիս առաջին մասի («Նամակ իմ հին թուրք ծանոթին») երևան գալուց հետո ինձ գրեցին, որ ինձնից հրաշք են ակնկալում: Իսկ ես չեմ կարող հրաշքներ կատարել: Ես ուզում եմ միայն մի բան. ակտիվորեն նպաստել Արևմտյան Հայաստանի ազատագրմանը: Եվ խորապես համոզված եմ, որ հենց դա եմ կատարում, հայկական վտարանդիության կառավարող շրջանակներին քննարկման համար հանձնելով իրենց բազմաչարչար հայրենիքը խաղաղ ճանապարհով ազատագրելու այս ծրագիրը, ինչը դեռևս հիմա, այսինքն՝ 1966 թվականին, համարվում է միանգամայն իրականանալի և հաջողություն խոստացող նախաձեռնություն, իհարկե, պայմանով, եթե հայերն իրենք ձեռնարկեն դրան:

Սակայն ես իմ պարտքն եմ համարում ընդգծել, թեև դա կարող է շատերին դուր չգալ, որ Արևմտյան Հայաստանի վերստեղծումը չկապակցված քաղաքականության առկայությամբ կարող է դառնալ մեծագույն դժբախտությունների պատ-

ճառ ամբողջ հայ ժողովրդի համար: Կապ չունի, թե Արևմտյան Հայաստանը կլինի սոցիալիստական կամ կապիտալիստական պետություն, հանրապետություն կամ միապետություն, բայց եթե այն դառնա Հարավային Կորեայի կամ Հարավային Վիետնամի պես մի բան, ապա հարյուր անգամ ավելի լավ է, որ նա առհասարակ չվերականգնվի: Անկախ արևմտահայ պետությունը պայմանականորեն անվանենք «Նաիրի»՝ Խորհրդային Հայաստանի հետ չշփոթելու համար: Այն ոչ մի դեպքում չպետք է դառնա Խորհրդային Միության դեմ ուղղված ամեն տեսակ քաղաքական արկածախնդրությունների գործիք: Ճիշտ է, ես գիտեմ, որ Խորհրդային Միությունը պաշտոնապես չպետք է աջակցի Նաիրիի ազատագրմանը, քանի որ չի ուզում բարդացնել իր հարաբերությունները Թուրքիայի հետ: Բայց շատ կարևոր է, որ նա իմանա, որ մեր կամպանիան ոչ մի դեպքում չպետք է ուղղվի նրա դեմ, այլ ավելին, պոտենցիալ թշնամի Թուրքիայի փոխարեն նրա հարավային սահմանի մոտ կստեղծվի լրիվ չեզոք պետություն, որի հետ նա հեշտ պայմանավորվածության կհասնի, քանի որ արդեն պայմանավորվել է, օրինակ, Ֆինլանդիայի հետ:

Կան հազարավոր պատճառներ, որ Խորհրդային Միության հետ Նաիրիի հարաբերությունները լինեն բարեկամական և որ այդ բարեկամությունը ունենա մշտական, այլ ոչ թե կոնյունկտուրային բնույթ, իհարկե՝ պահպանելով պետական սուվերենությունն ու բարեկամական հարաբերությունները նաև արևմտյան երկրների հետ: Բայց, ի դեպ, չպետք է մոռանալ, որ Նաիրիի տարածքի լրիվ բնակեցումը միանգամայն անիրականանալի կլինի, եթե Խորհրդային Միությունը Խորհրդային Հայաստանի տարածքից դուրս ապրող (գլխավորապես Ռուսաստանի Ֆեդերացիայում և Վրաստանում) իր հայ քաղաքացիներին չթույլատրի մեկնել այնտեղ: Ճիշտ է, նրանցից շատերն արդեն մոռացել են հայերենը, բայց պահպանել են անգային գիտակցությունը: Իսկ դա միանգամայն բավարար է, եթե նրանք դեռ սիրում են Հայաստանը և այն համարում են իրենց հայրենիքը:

***

Հայրենիքի վերականգնման համար հայկական վտարանդիության պատերազմը միանգամայն առանձնահատուկ երևույթ է, որը նախադեպը չունի պատմության մեջ: Դա հող չունեցող մարդկանց պատերազմ է անմարդաբնակ հողեր ձեռք բերելու նպատակով: Դա պատերազմ է, որտեղ անհրաժեշտ է կիրառել մարտնչող բանակների ժամանակակից զենքը և ապստամբների կայծքարային հրացանները: Դա մի պատերազմ է, որտեղ չկա ճակատ և թիկունք, և հող՝ ոտքերի տակ: Միաժամանակ դա մի պատերազմ է, որը, չնայած դրա թվացյալ անճշմարտացիությանը, անհրաժեշտ է շահել ի հեռուկս պատմական փորձի, և եթե կուզեք, ի հեռուկս բանականության՝ բառիս հանրաճանաչ նշանակությամբ: Իսկ այն անհրաժեշտ է շահել այն պատճառով, որ տասը տարի հետո խիստ ուշ կլինի:

Ոչ մի Մեր չի գա Թուր կեծակիով, որ օգնի ձեզ: Մերները դուք եք, հայկական վտարանդիության առաջնորդներ, իսկ ձեր երկսայրի սրի երկու սուր ծայրերը ապագաղութացումն ու ցեղասպանության դատապարտումն են: Եվ եթե դուք հմտորեն տիրապետեք այդ զենքին, ապա, երդվում եմ կյանքով, դուք կհաղթեք: Չնայած այդ պայքարի երևակայական անճշմարտանմանությանն ու այն բանին, որ դա բացարձակապես աննախադեպ է: Եվ շատ սերունդներ կօրհնեն ձեր անունները, եթե դուք կարողանաք այդ «անիրական խնդիրը» մարմնավորել միանգամայն իրական պայքարի մեջ:

Ինձ թվում է, որ Թուրքահայաստանի ազատագրման ձեր և իմ գաղափարի առավել էական տարբերությունն այն է, որ դուք հույս ունեք ռազմական կոնֆլիկտի, որի մեջ կներքաշվի Թուրքիան և որտեղ նա պարտություն կկրի: Իրոք, երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ այդ գաղափարը միանգամայն ճշմարտանման էր, քանի որ ֆոն Ռիբենտրոպը ջանում էր Թուրքիային պատերազմի ներքաշել ակնհայտորեն պարտության դատապարտված Գերմանիայի կողմը: Բայց թուրքական կառավարությունն այն ժամանակ բավական հեռատես գտնվեց, որ չներքաշվի այդ արկածախնդրության մեջ: Եվ ես չեմ տեսնում բացարձակապես ոչ մի տվյալ, որ կարելի լիներ հուսալ Թուրքիային երկրորդ անգամ ներքաշելու նրա համար նոր անհաջող որևէ պատերազմի մեջ:

Իմ գաղափարը, ինչպես երևում է շարադրվածից, այն է, որ Նաիրիի վերականգնման պայքարը չպետք է հետաձգել անորոշ ժամանակով, այլ այն պետք է հարմարեցնել ժամա-

նակակից, դրան նպաստող իրավիճակին (ապագաղութացումը և ամբողջ մարդկության գիտակցության մեջ դեռ թարմ ցեղասպանության դատապարտումը)։ Դա հայկական վտարանդիության քաղաքական գործիչներից պահանջում է, որ նրանք հոգեբանորեն պատրաստվեն պայքարի միանգամայն նոր տեսակի՝ ըստ էության աննախադեպ պայքարի, քանի որ Էրեց-Իսրայելի վերածնման համար նմանօրինակ կամպանիան էապես տարբերվում է դրանից։ Քանի որ առաջին համաշխարհային պատերազմից հետո Պաղեստինին օկուպացրել էր մի պետություն (Մեծ Բրիտանիան), որի համար այդ գաղութի էթնիկական կազմը երկրորդական պրոբլեմ էր։ Ուստի և հրեաները կարողացան աստիճանաբար թափանցել այնտեղ, դանդաղ, բայց մշտապես ամրապնդելով իրենց ազդեցությունը, ինչը միանգամայն անիրականանալի է հայերի համար, քանի դեռ Նաիրին թուրքական գաղութ է համարվում։

Ես երազում էի «բաց նամակների ամբողջ կամպանիան» սկզբից մինչև վերջ անձամբ անցկացնել։ Ես մտադրվել էի դա անել անձամբ, ի դեպ, այն նպատակով, որ հայերը անհաջողության դեպքում պաշտոնապես հրաժարվեին ինձնից ու իմ կամպանիայից, իսկ հաջողության դեպքում հավաքեին իմ աշխատանքի պտուղները։ Ցավոք, ես այդ կամպանիան միայն սկսել եմ։ Ահա հոբելյանական տարում (1965) իմ գրած հոդվածների ընդհանուր ցուցակը.

1. «Բաց նամակ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին», որը թվում էր, թե արդեն տպագրվել է ինչ-որ հայկական թերթում, բայց դեռ չի վերատպվել անգլերեն ու ֆրանսերեն լեզուներով (իսկ, հետևաբար, հասցեատերը դրա մասին մինչև օրս ոչինչ չգիտե և չի կարող դրան պատասխանել)։

2. Նույնը վերաբերում է նաև իմ երկրորդ հոդվածին՝ «Բաց նամակ Հնդկաստանի պրեզիդենտին», որը մինչև օրս թվում է, առհասարակ չի տպագրվել՝ ոչ հայերեն, ոչ էլ արևմտաեվրոպական լեզուներով։

3—5. Երեք հերթական «նամակներն իմ անհայտ ընթերցողին», որոնք նախատեսված են միջին ամերիկացի ու եվրոպացի ընթերցողների համար և պրոպագանդում են հայ ժողովրդի բարեկամների տեղական ընկերությունների ստեղծման գաղափարը. նույնպես մինչև հիմա չեն տպագրվել ոչ հայերեն, ոչ անգլերեն, ոչ ֆրանսերեն։

Այդ բոլոր հինգ հոդվածները այժմ գտնվում են 1915 թ. հոբելյանի նշման Բեյրութի կոմիտեում կամ Բեյրութի «Ազդակ» խմբագրությունում։

6. Սույն նամակը, որը բովանդակում է Նաիրիի (Արևմտյան Հայաստանի) պետության խաղաղ վերականգնման համար լայն կամպանիայի իր պլանը, ես գրել եմ իմ նախորդ «նամակների» գաղափարները հայկական վտարանդիության կառավարող շրջանների հետ համաձայնեցնելու նպատակով։ Այս նամակը նախատեսված է բացառապես հայ մամուլի համար։

Միաժամանակ սա հրաժեշտի նամակ է, քանի որ ինձնից անկախ պատճառներով ես արդեն չեմ կարող շարունակել բաց նամակների կամպանիան և ստիպված կլինեմ լրիվ հրաժարվել հետագա քաղաքական գործունեությունից։

Սակայն ես չէի ցանկանա սահմանափակվել միայն ընկնող աստղի դերով, որի միակ ծառայությունն այն է, որ նա մի ակնթարթ լուսավորել է հայերի անելանելի վիշտը։ Ընդհակառակը, ես կցանկանայի, որ իմ նախաձեռնությունը, ի հեռուկս ամեն ինչի, շրջադարձային պահ լիներ նրանց պատմության մեջ։ Ուստի և ըստ էության ես ձեռնամուխ եղա այս նամակը կազմելուն։

Թանկագին ու մեծարգո բարեկամներ, հայ ազգի քաղաքական ղեկավարներ։ Եթե դուք նույնիսկ համաձայն չեք իմ գաղափարին, ապա առնվազն կհակվեք իմ հետևյալ խնդրանքի կողմը. մի խոչընդոտեք Նաիրիի խաղաղ ազատագրման պայքարի կոմիտեի ստեղծմանը, եթե ձեր մեջ գտնվեն մարդիկ, որոնք ցանկանում են շարունակել իմ սկսած կամպանիան, վերը նախանշված ծրագրի համաձայն, այդ կոմիտեն ստեղծվելու լինի կուսակցական հատկանիշով, ընտրությունների ճանապարհով կամ այլ ձևով, ինձ համար միևնույն է, թեև, ըստ իս, առավել հաջող լուծումը կլիներ նրա ստեղծումը իր մեջ բոլոր այն ցանկացողների ընդունելության հիման վրա, որոնք հետո իրենց շրջապատից առաջ կքաշեին առավել փորձառու ու միաժամանակ դինամիկ մարդկանց։

Միակ պայմանը, որը ես կցանկանայի այստեղ առաջ քաշել, այն է, որ այդ կոմիտեի կազմի մեջ մտնող մարդիկ սրբորեն հավատան գործի ռեալությանը, որի համար նրանք կոչված են։ Այնուհետև, նրանք պետք է Արևմտյան Հայաստանի

Ֆողերի ազատագրումը համարեն իրենց կյանքի միակ կոչում: Կոմիտեն պետք է շարունակի այն կամպանիան, որ նա սկսել եմ: Ու Տանին և Ռադիակրիշնանին հասցեագրված թղթակցություններով, այսինքն՝ անընդհատ «բախել» նրանց «դռները», ովքեր հայկական պահանջները կարող են պաշտպանել միջազգային համաժողովում: Բոլոր ասիական, իսկ հնարավորության սահմաններում նաև այլ կոնֆերանսներում (գլխավորապես չեզոք երկրներում) պետք է համառորեն առաջ քաշել Հայկական հարցը ապագաղութացման և ցեղասպանության դատապարտման տեսանկյունից: Եթե կոմիտեի պատգամավորների ուղղակի մասնակցությունը այս կամ այն կոնֆերանսին ձևական առիթներով անթույլատրելի է, ապա նա դրան պետք է մասնակցի առնվազն անուղղակի ձևով, ձեր ներկայությամբ բարեհաճ որևէ պետության աջակցությամբ: Կոմիտեի գլխավոր խնդիրներից մեկը պետք է լինի այդ պոտենցիալ բարեկամների որոնումը, թեկուզև երրորդական պետությունների կառավարությունների շրջանում և նրանց օգնությամբ Հայկական հարցի առաջքաշումը ինչպես տեղական, այնպես էլ ավելի խոշոր մասշտաբով՝ միավորված ազգերի հանձաժողովում: Ընդ որում անհրաժեշտ է հետագայում լայնորեն օգտվել պետությունների ղեկավարներին հասցեագրված «բաց նամակների» համակարգից, նույնիսկ այն տերությունների ղեկավարներին, որոնք արդի աշխարհում բնավ էլ չեզոք չեն: Սակայն դա պետք է անել ոչ թե քաոսայնորեն, այլ խիստ կշռադատված պլանով:

Մի խոսքով կոմիտեն պետք է առավելագույնս ակտիվություն և միաժամանակ խստագույն հետևողականություն դրսևորի, դառնա օրինակելի արտաքին գործերի մինիստրություն, օրինակելի պրոպագանդայի մինիստրություն և օրինակելի ուղեղների տրեստ, ունենալով միակ նպատակ՝ թուրքական կառավարությանը հարկադրել դիմել բանակցությունների և զիջումների:

Եվ, վերջապես, ես կցանկանայի ավելացնել ևս մեկ խնդրանք. Թեհրանից պարոն Դ.-ն հայկական տարեդարձի նշման Բեյրութի կոմիտեի անունից ինձ հաղորդել է, որ այն հինգ հոդվածների համար, որոնք ես նրան ուղարկել եմ, բավական շատ հոնորար է նախատեսված ինձ համար: Այնպես որ խնդրում եմ ձեզ այդ փողերը մի ուղարկեք ինձ, այլ ներդրեք Արևմտյան Հայաստանի խաղաղ ազատագրման համար պայքարի կոմիտեի հատուկ ֆոնդում: Միաժամանակ ես շատ եմ խնդրում պարոն Վահե Վահյանին (Բեյրութ), որ մինչև այդ կոմիտեի ստեղծելու պահը համաձայնի կատարել այդ ֆոնդի ժամանակավոր տնօրինողի դերը և նրա հաշվին փոխանցի համապատասխան գումարը, որը 1915 թվականի նշման կոմիտեն ինձ ուղարկելու է հոնորարի կարգով:

Գումարը, որի մասին խոսվել է, ինձ համար մեծ կարողություն է, բայց ապագա կոմիտեի խնդիրների մասշտաբով դա միայն մի կաթիլ է ծովում: Ուստի և ես իմ ավանդը զուտ խորհրդանշական եմ համարում և առաջարկում եմ ձեզ բոլոր հայ գաղթօջախներում կազմակերպել Նաիրիի խաղաղ ազատագրման պայքարի կոմիտեի ֆոնդի նվիրատվությունների հանգանակություն, իմ համեստ մուծումը համարելով որպես նախաձեռնիչ նվիրաբերություն:

Ինքնին հասկանալի է, որ ես այդ համեստ նվիրաբերումը ձեր համաձայնությամբ պայմանավորում եմ Արևմտյան Հայաստանի խաղաղ ազատագրման պայքարի կոմիտեի ստեղծմամբ:

Ահա այն ամենը, ինչ ես ցանկացա գրել ձեզ:

Խնդրում եմ ձեզ չմոռանալ, որ մինչև կյանքիս վերջը ես կմնամ որպես ձեր անկեղծ բարեկամը և ձեր բազմաչարչար հայրենիքի՝ իմ հոգեմոր ջերմ երկրպագու:

1966 թ., փետրվար

ԵՐԵՔ ՆԱՄԱԿ ԱՇԽԱՐՀԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ ԻՄ ԱՆԾԱՆՈԹ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ*

(որի մեջ հիշեցնում եմ նրան 12 մոռացված ճշմարտությունները)

Այս նամակներս լույս են տեսնելու նաև հայերեն, իսկ հետո այլ լեզուներով, ըստ էության նրանք չեն հասցեագրված հայ ընթերցողներին. վերջիններս գիտեն այն, ինչ ես գրում եմ այստեղ: Իսկ եթե նույնիսկ չգիտեն ամբողջը, ապա առնվազն զգում են այն մեծ ճշմարտությունը, որը ես պետք պատմեմ այլազգի մարդկանց, որոնք, ինչպես և ես, հայ չեն և մինչև այժմ բոլորովին չեն հետաքրքրվել հայկական հարցով: Սակայն հասավ այն օրը, երբ Հայաստանը իմ երկրորդ հայրենիքը դարձավ՝ իմ ընտրությամբ: Բայց դա չի նշանակում, թե ես հրաժարվում եմ իմ առաջին հայրենիքից՝ Լեհաստանից: Սերը երկուսի նկատմամբ էլ հիանալի տեղավորվում է սրտիս մեջ: Ու եթե ամեն ոք հավատարիմ մնալով իր հայրենի երկրին, աշխատեր ճանաչել և անկեղծ սիրել որևէ այլ ժողովրդի, հավատացեք ինձ, սիրելի ընթերցող, աշխարհը այլ պատկեր կունենար:

Այժմ Ձեզ պետք է ասեմ, թե ինչու հենց Հայաստանն սիրեցի:

Հնդկաստանի հանգուցյալ պրեմիեր մինիստրը՝ Ջավահարլալ Ներուն Անգլիայում դաստիարակված հնդիկ էր: Նախքան իր հայրենիքը՝ Հնդկաստանը սիրելը, պետք է հայտնագործեր այն: Ու հենց այդպես էլ նա վերնագրել է իր մեծ ստեղծագործությունը այդ երկրի մասին: «Հնդկաստանի հայտնագործումը»: Ես նույնպես պետք է հայտնագործեի Հայաստանը նախքան նրան իր տառապանքների մեջ սիրելը, մանավանդ, որ երակներիս մեջ հայկական արյան ոչ մի կաթիլ չի հոսում:

Այդ հայտնագործումը մեծապես ցնցեց ինձ: Կարծես գտա վաղուց կորած բանալին այն սենյակի, որի մեջ խառնիխուռն թափթփված են ամբողջ մարդկությանը պատկանող գանձերը: Դրա համար երկար ժամանակ մարդիկ անցնում էին այդ սենյակի մոտով՝ առանց նկատելու սարդոստայնով ու փոշով ծածկված այդ դուռը, մոռացել էին հրաշագործ բանալու մասին: Եղել են անհատներ, որոնք հանկարծակի պայծառատեսության պահերին, հիշում էին հանկարծ նրա մասին, բայց չկարողացան բանալ կախարդված դուռը:

Ես էլ, ավաղ, ինքս իմ սեփական ուժերով չեմ կարողանա բացել այդ դուռը, եթե դու, անծանոթ ընթերցող, չգաս ինձ օգնության:

Դրա համար էլ հենց սկսեցի այս խոսակցությունը քեզ հետ:

Չգիտեմ նույնիսկ թե ով ես դու, որովհետև չգիտեմ, թե որտեղ և ինչ լեզվով լույս կտեսնի վերջապես այս նամակը: Գուցե գյուղացի ես կամ արհեստավոր, գուցե գիտնական կամ՝ բանվոր: Գուցե նաև նոր ազատագրված երկրներից մեկի քաղաքացին ես, կամ որևէ այլ անձ: Բայց ով էլ որ լինես, կկարողանաս շատ ավելի բան անել, քան ես, որովհետև ծեր եմ արդեն և հիվանդոտ, պակասում է ինձ նաև երիտասարդական եռանդն ու նախաձեռնությունը:

Խոստանում եմ քեզ մի բան. եթե կատարես այն, ինչի մասին խնդրում եմ քեզ, ապա հավերժ կհիշվես մարդկության պատմության մեջ: Իսկ դա արդեն շատ բան է նշանակում, այնքան շատ, որ միայն դրա համար արժե ապրել:

Կատարիր միայն մեկ բան. օգնիր ինձ բանալ կախարդված դուռը, իսկ եթե հանկարծ սիրտս դադարի բաբախելուց, եղիր մեկը նրանցից, որոնք իմ սկսած գործը կհասցնեն մինչև վերջ:

Բայց նախքան ասելը, թե ինչպես եմ պատկերացնում քո մասնակցությունը այդ մեծ գործին, թույլ տուր, որ նախ և առաջ պատմեմ քեզ իմ սիրո առարկայի մասին՝ **առանց հողի մարդկանց մասին և առանց մարդկանց հողի մասին**, որն Աստված անվանեց Հայաստան: Դա հենց այն Հայաստանն է, որ ես գտել, հայտնագործել եմ, ինչպես Կոլումբոսը հայտնագործել է Ամերիկան՝ Երկրի վրա, իսկ Ներուն՝ Հնդկաստանը՝ իր սեփական սրտի մեջ:

---

* Տպագրվել է «Ավանգարդ»-ում, 1990 թ. հունիսի 3-ին՝ Հ. Կարճիկյանի հրապարակմամբ:

Լեհերենում զվարճալի մի դարձվածք կա. «Սկսել ինչ-որ բան Ադամից և Եվայից»: Չգիտեմ՝ ուրիշ լեզուներում նման դարձվածք կա՞, թե՝ ոչ, բայց այնուամենայնիվ, Հայաստանի մասին իմ պատմությունը սկսեմ Ադամից և Եվայից:

Գիտե՞ք արդյոք, թե որտեղ էր բիբլիական դրախտը: Սուրբ գիրքը շատ ստույգ սահմանում է նրա դիրքը. գտնվում էր նա չորս գետերի ակունքների շրջանում: Նրանցից երկուսը Եփրատն ու Տիգրիսն էին: Բավական է նայել քարտեզին, որ գտնենք նաև մնացած երկուսը՝ Ճորոխն ու Արաքսը: Իսկ երկիրը, որի տերիտորիայում գտնվում էր դրախտը, այսպես կոչված Թուրքահայաստանն է, որի մասին ստորև ընդարձակ խոսելու ենք:

Փակագծերի մեջ նկատեմ, որ մյուս բիբլիական փաստը Նոյի ճանապարհորդությունը ջրհեղեղի բարձրացած ջրերով տեղի է ունեցել նույնպես նույն՝ հետագա Թուրքահայաստանի այդ տերիտորիայի վրա: Այնտեղ՝ այդ երկրի հյուսիսում, խոյանում է երկու գագաթով մի մենավոր լեռ՝ Մասիս կամ, ինչպես նրան անվանում ենք՝ Արարատ, որի վրա կանգ առավ Նոյի տապանը: Մի խոսքով՝ Սուրբ գրքի համաձայն ամբողջ մարդկության օրրանն ու երկրային դրախտն է եղել Հայաստանը:

Սակայն մարդկությունը մոռացել է, թե որտեղ էր գտնվում իր դրախտը, որը կրկին գտնելու մասին երազում էր հանճարեղ Միլտոնը: Եվ դա եղել է **մարդկության կողմից մոռացված առաջին մեծ ճշմարտությունը:**

Հետագայում այդ տերիտորիայի վրա թագավորել են շատ արքաներ, որոնց մասին հիշատակում են բաբելական և ասորական աղբյուրները: Այդ երկիրը, որ տեղական ավանդությունը անվանում էր Նաիրի, շարունակում էր մնալ խիտ բնակեցված, հարուստ և կենսապաշտ, չնայած որ գտնվում էր այն ժամանակվա մեծ քաղաքակրթության ծայրամասերից մեկում և շատ հին էր: Այնքան հին էր այդ երկիրը, որ երբ առաջին բանական արարածները սկսեցին կառուցել առաջին տերությունը, ապա դա կարծես թե պետք է լիներ հենց այստեղ և ոչ թե Եգիպտոսում կամ Բաբելոնում: Միայն թե մարդկությունը այդ մասին մոռացել է: Եվ դա **մարդկության կողմից երկրորդ մեծ ճշմարտությունն է:**

Մեր թվարկությունից առաջ 9-րդ դարի սկզբներին, այսինքն 3000 տարի սրանից առաջ, այդ տերիտորիայի վրա գոյացավ Ուրարտու կոչված մեծ տերությունը, որի սահմանները ընդգրկում էին այսօրվա ամբողջ Հայաստանը՝ թուրքական և խորհրդային, իսկ հյուսիսում սահմանը նույնիսկ հասնում էր Վրաստանին:

Լեզուն, որով խոսում էին ուրարտացիները, դեռ հայերեն չէր, ճիշտ այնպես, ինչպես ուրարտացիների նախորդները՝ Նաիրիի ժողովուրդը խոսում էր նրանցից տարբեր լեզվով: Չէ՞ որ լեզուն ենթակա է անընդհատ փոփոխությունների: Հին հռոմեացիները՝ գուցե էտրուսկերեն, իսկ նրանց հաջորդները խոսում էին իտալերեն: Ու, չնայած դրան, վերջիններս հռոմեացիների ու էտրուսկների օրինավոր ժառանգներն էին: Նրմանապես այստեղ:

Ուրարտուի կամ հետագա հայկական թագավորության (որովհետև դա միևնույն տերիտորիան է) սահմանները հեշտ է գտնել մեր ժամանակակից Մերձավոր Արևելքի ուզած քարտեզի վրա: Ուղղակի այսօրվա Թուրքիայի ամբողջ արևելյան մասը, որը կարծես խցկված է հարավում Սիրիայի և Իրաքի, իսկ հյուսիսում՝ Խորհրդային Վրաստանի միջև: Եվ դա հենց այն տերիտորիան է, որի մասին է մեր խոսքը, այն տարբերությամբ միայն, որ Արևելքում նա ավելի հեռու էր տարածվում: Այսօր այդ տարածության 9/10-ը պատկանում է Թուրքիային, իսկ 1/10-ը՝ Խորհրդային Միությանը:

Սակայն վերադառնանք այն հեռավոր ժամանակներին: Քարտեզի վրա գտնենք Վանա լիճը և նույնանուն քաղաքը՝ նրա Արևելյան ափին (այն ժամանակ նա կոչվում էր նաև Տուշպա): Դա Ուրարտուի մայրաքաղաքն էր: Եվ այդ ամբողջ տիրությունը պատմիչները հաճախ անվանում են Վանի թագավորություն:

Այն ժամանակներից մինչև օրս պահպանվել են ժայռերում փորված եկեղեցիներ ու դամբարաններ, բազմաթիվ աշտարակների ու դղյակների ավերակներ և խողովակներ, որոնք քաղցրահամ ջուր էին հասցնում քաղաքին 70 կմ. վրա գտնվող հեռավոր սարերից (Վանա լճի ջուրը աղի է, քան ամենաաղի ծովի ջուրը):

Ուրարտուի տիրությունը ոչնչացվել է Մելացիների կողմից, որոնք հարձակվել են նրա վրա 6-րդ դարում մեր թվականությունից առաջ: Բայց նույն դարում նրա ավերակների

վրա գոյացավ և կառուցվեց նոր տերություն՝ Հայաստանը: Պարսկաստանի թագավոր Դարեհը ստիպված էր բավական երկար ժամանակ պայքարել հայերի դեմ և հինգ անգամ պարտություն է կրել նրանցից: Բայց վերջապես նա, ըստ երևույթին, հաղթեց նրանց, որովհետև հայերի երկիրը մտավ Պարսկաստանի 13 և 18 սատրապությունների մեջ... Եվ այս վիճակում մնաց մինչև Ալեքսանդր Մակեդոնացու ժամանակները:

Մի խոսքով՝ այս առաջին հայկական տերությունը գոյություն է ունեցել կարճ ժամանակ և համեմատաբար քիչ բան գիտենք նրա մասին:

Սակայն հայկական թագավորությունը վերածնվեց 189 թ. մ. թ. ա.: Նրա հիմնադիրը եղել է Արտաշես 1-ին թագավորը, իսկ թագավորության նոր մայրաքաղաք Արտաշատը կառուցվել է Հաննիբալի նախագծի համաձայն. Հաննիբալը ժամանակավորապես գաղթել էր Հայաստան:

Այդ երկրորդ հայկական թագավորությունը գոյություն է ունեցել 618 տարի, այսինքն՝ մինչև մեր թվականության 429 թ., երբ նա միացվեց Պարսկաստանին:

Այդ շրջանում Հայաստանը եղել է այն ժամանակվա աշխարհի ամենակուլտուրական կենտրոններից մեկը:

Մեր թվարկության 1-ին դարում այնտեղ արդեն կային թատրոններ, մատենադարաններ: Բանաստեղծները գրում էին զանազան ստեղծագործություններ, պոեմներ, իսկ գրելուց ազատ ժամանակ ջարդում էին հռոմեացիներին, որոնք երբեմն այդտեղ ոտնձգություններ էին կատարում: Եվ պետք է ասել, որ հենց Հայաստանն էր այն երկիրը, որն առաջինն ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն, դեռևս 301 թ. (այսինքն Հռոմից 12 տարի առաջ): Դրա մասին նույնպես մոռացել է քրիստոնեական աշխարհը: Եվ **դա նրա կողմից մոռացված երրորդ մեծ ճշմարտությունն է:**

Այն հնագույն ժամանակներում գոյություն ունեին 3 մեծ կրոն, որոնք պայքարում էին իրար դեմ ամբողջ աշխարհին տիրելու համար: Մեկը հենց քրիստոնեությունն էր, երկրորդը՝ արիոսականությունը, երրորդը՝ զրադաշտականը: Արիոսականի առաջխաղացումը զսպում կամ կասեցնում էին ֆրանկները, իսկ զրադաշտականի առաջխաղացումը կասեցնում էին հայերը:

Չգիտեմ, սիրելի ընթերցող, հավատացյա՞լ ես արդյոք, թե՝ ոչ: Բայց նույնիսկ եթե ոչ, դարձյալ պետք է ընդունես, որ քրիստոնեությունը ճանապարհ է հարթել ժամանակակից կուլտուրայի համար: Ու թեև մեր կյանքում ամեն ինչ չէ, որ մեզ դուր է գալիս, սակայն ստիպված ենք հաստատելու, որ քրիստոնեության կողմից ստեղծված մշակույթը հիմնականում վատը չէ: Եվ ահա այն ամենը, ինչով մենք այժմ ապրում ենք, այն հեռավոր ժամանակներում ոչնչացված կլիներ իր սաղմնավորման փուլում, եթե հայերը չպաշտպանեին քրիստոնեական մշակույթը: Նույնիսկ 429 թ., իրենց անկախությունը կորցնելուց հետո, նրանք այնքան ուժեղ դիմադրություն էին ցույց տալիս արշավողներին (450—451 թթ. Վարդանանց պատերազմը և ուրիշներ՝ 481—484 թթ.), որ արգելում էին հեթանոսների շարժումը դեպի Արևմուտք: Մի խոսքով, հայերը փրկեցին քրիստոնեությունը:

Բայց քրիստոնեական աշխարհը այդ մասին էլ մոռացավ: Եվ դա **նրա կողմից մոռացված չորրորդ մեծ ճշմարտությունն է:**

Քաղաքական անկախության կորուստը բնավ չի կոտրել այդ հերոս ժողովրդի դյուցազնական ոգին: Մեր թվարկության 5-րդ դարում հայկական մշակույթը այնպիսի ծաղկման հասավ, որ կոչվեց հայկական մշակույթի Ոսկեդար: Իրոք Ոսկեդար էր դա, հատկապես գրականության ասպարեզում՝ թե ինքնուրույն և թե՝ թարգմանական:

Հաջորդ դարերում հայերը ոչ միայն ստեղծում էին փիլիսոփայական, պատմական և գեղարվեստական աննման աշխատություններ, այլև շարունակում էին շատ թարգմանել: Ընդորինվ նրանց, միայն նրանց թարգմանություններով պահպանվել ու մեզ են հասել հին Հունաստանի և հին Հռոմի բազմաթիվ մեծ մտածողների ստեղծագործությունները: Հայերն են (և մասամբ արաբները) մարդկության համար պահպանել հնագույն մշակույթի գոհարները: Բայց աշխարհը այդ մասին ևս մոռացավ:

Եվ **դա նրա կողմից մոռացված հինգերորդ մեծ ճշմարտությունն է:**

Այնուհետև զրադաշտականության և արիոսականության տեղը պատմական ասպարեզում գրավեց իսլամը (մահմեդականությունը— Մ. Գ.): Եվ կրկին քրիստոնեական Բյուզանդիոնի և Արևելքից եկող նոր հավատքի միջև կանգնեցին հա-

յերը: Այդ նրանք ութ դարով ուշացրին Կոստանդնուպոլսի անկումը, մի բան, որ պատմության մեջ պետք է գրանցված լինի որպես հայերի ամենամեծ ծառայությունը քաղաքակրթությանը առհասարակ և քրիստոնեական քաղաքակրթությանը՝ հատկապես: Միայն թե այդ մասին էլ է մոռացել աշխարհը: Եվ **դա նրա կողմից մոռացված վեցերորդ մեծ ճշմարտությունն է:**

Արաբների դեմ մղվող պայքարի բոցերի մեջ հայկական փոքրիկ անկախ իշխանություններից կազմվեց երրորդ Հայկական թագավորությունը, որն այս անգամ գոյություն ունեցավ միայն 160 տարի (885—1045) և ոչնչացվեց հենց բյուզանդացիների կողմից, որոնք դրանով իրենք իրենց ձեռքով տապալեցին քրիստոնեական ամրոցը իրենց տերության արևելքում: Ու հետևանքները չհապաղեցին: Երեք տարի անց (1048) արդեն տապալված Հայաստանի վրայով գլորվեց սելջուկ-թուրքերի առաջին ալիքը՝ ազդարարելով Բյուզանդիայի մոտալուտ անկումը:

Քրիստոնեական Արևելքը ինքը ոչնչացրեց նրանց, ովքեր 800 տարիների ընթացքում պաշտպանում էին իրենց պարսիկներից ու արաբներից, և դրանով իսկ ինքը իր դռները բաց արեց հերթական ամենասարսափելի արշավողների՝ թուրքերի առջև:

Այսօր այդ մասին էլ աշխարհը չի հիշում: Եվ **դա նրա կողմից մոռացված յոթերորդ մեծ ճշմարտությունն է:**

Լավ չէ, երբ մարդիկ իրար են սպանում նրա համար միայն, որ ցույց տան, թե իրենց կրոնը ավելի լավն է: Սակայն այն հեռավոր ժամանակներում մարդկությունը դեռ չէր հասունացել այդ պարզ ճշմարտությունը հասկանալու աստիճանին: Եվ դրա համար այդքան շատ ոճիրներ են կատարվել երկու կողմից էլ, ըստ որում քրիստոնյաները հարյուր անգամ ավելի վատ էին վարվում քան մուսուլմանները: Չէ որ քրիստոնեական կրոնը քարոզում է սեր ամեն մարդու նկատմամբ՝ անկախ նրա ազգությունից ու հավատքից: Իսկ տխրությամբ հիշվող «խաչակիրները» փառավորեցին իրենց այնպիսի արարքներով, որ մինչև օրս մտաբերելիս ստիպված ենք կարմրելու:

Սակայն այդ ամենը հայերին չի վերաբերում: Նրանք ոչ ոքի զոհով չէին պարտադրում քրիստոնեություն ընդունել: Պաշտպանում էին միայն իրենց հողը և իրենց հավատքը: Ու դրանով միաժամանակ պաշտպանում էին իրենց թիկունքում ապրող ուրիշ քրիստոնյա ժողովուրդների հողն ու հավատքը: Եթե ուրիշ ժողովուրդները վատ քրիստոնյա են եղել, ապա հայերն այստեղ մեղք չունեն:

Ինչևիցե, 11-րդ դարի վերջում Եվրոպայից շարժվեց խաչակիրների առաջին արշավախումբը, որպեսզի, ինչպես հայտնի է, ազատի Քրիստոսի շիրիմը: Սակայն նրանք մոռացան ազատել Եվրոպայի ամենաերկարամյա պաշտպանին՝ քրիստոնեական Հայաստանը: Եվ **դա եղավ հերթական ութերորդ մեծ հանցանքը ընդդեմ ճշմարտության, երախտագիտության և արդարության:**

Հայերի մի մասը, որոնց բյուզանդացիները բուն Հայաստանից տեղափոխեցին Կիլիկիա (ուր հետո բնակվում էին նրանց ազգակից ժողովուրդները) 1080 թ. ստեղծեց այնտեղ ըստ հերթականության չորրորդ հայկական թագավորությունը, որը գոյատևեց համարյա 300 տարի (1080—1375) դառնալով Արևելքի ամենակուլտուրական տերություններից մեկը: Իսկ եթե այնտեղ ստեղծված հայկական պատմական գրականությունը չլիներ, հնարավոր չէր լինի այսօր վերականգնել խաչակիրների արշավանքների, ինչպես նաև Արևելքի քրիստոնեական մանր տերությունների պատմությունը: Ինչ արած, աշխարհը նորից մոռացավ օգնության հասնել պատմականորեն արդեն հայկական այդ վերջին թագավորությանը, երբ հասել էր նրա ծանր ժամը: Եվ **դա եղավ ըստ հերթականության ինն երորդ մեծ հանցանքը ընդդեմ ճշմարտության, պարտականության և քաղաքական բանականության:** Դրա համար շուտով վարձահատույց եղան սերբերը՝ 1389 թ. Ծուն դաշտում տեղի ունեցած ողբերգական ճակատամարտից հետո կորցնելով իրենց անկախությունն ավելի քան 300 տարով: Իսկ քիչ հետո նրանց բախտակից դարձան նաև բուլղարները՝ 1393 թ. Տիրնովի անկումից հետո: Չէ որ չկան մեկուսացած փաստեր:

Առանձին ժողովուրդների պատմությունը զարգանում է հաղորդակից անոթների միջոցով: Լուսինյանների հայկական թագավորության անկման և սերբական Լազարի տերության Օսման-թուրքերի կողմից ոչնչացման միջև ակնհայտ է կապը, որի մասին այստեղ չեմ խոսելու:

Կիլիկիայի թագավորության ամբողջ գոյության ընթաց-

քում Մեծ Հայքը կամ բուն Հայաստանը ծանր կացություններ շատ է ապրել: Հերթով ընկնում էր սելջուկ թուրքերի տիրապետության տակ, որը այդ վերջինները հասկանում էին շատ պարզեցրած. ուղղակի մորթում էին իրենց նոր հպատակներին: Հետո Հայաստանը բաժանված մնաց մի շարք սելջուկ-արաբա-քրդական էմիրությունների միջև, որոնք անընդհատ կռվում էին միմյանց դեմ: Այնուհետև 1170—1236 թթ. այստեղ գոյացավ Վրաստանին ենթակա հայկական վասալ իշխանության պես մի բան: Բայց մոնղոլները սրբեցին նրան աշխարհիս երեսից:

Այստեղ չենք պատմելու իրար հաջորդող մոնղոլական տիրապետությունների մասին 150 տարի, այսինքն՝ 1236—1386 թթ. ընթացքում Հայաստանի ողբերգական պատմությունը, ինչպես նաև նրա պատմությունը հարյուրապատիկ սարսափելի Լենկթեմուրի և թուրքմենական Կարա-Կոյունլու և Ակ-Կոյունլու ցեղերի տիրապետության ներքո, որոնք փոխադարձաբար իրար կոկորդից էին բռնում ընդհուպ մինչև 15-րդ դարի վերջը: Պարզ բան է, որ վայրենիների այդ բոլոր հաշվեհարդարներին անընդհատ հետևում էին տարաբախտ հայերի կոտորածները: Շատ բան չի փոխվել նրանց վիճակում դեպի լավը նաև հաջորդ հարյուրից ավելի տարիների ընթացքում (1502—1639), երբ Հայաստանը սկսեց ձեռքից ձեռք անցնել՝ պարսիկներից օսմանական թուրքերին և հակառակը: Ըստ որում պարսիկները տեղահան էին անում հայերին սահմանամերձ շրջաններից՝ հրդեհելով նրանց տները, իսկ թուրքերը հրդեհում էին տները, բռնաբարում և ստրկացնում էին ողջ մնացածներին:

1639 թ. Հայաստանը վերջնականապես բաժանվեց 2 մասի՝ Արևմտյան կամ Թուրքական և Արևելյան կամ Պարսկական: Սկսեցին ստեղծվել երկու գրական բարբառներ՝ արևմտահայերենը և արևելահայերենը: Այդ բաժանումը մնում է մինչև օրս, միայն թե Պարսկահայաստանը (անհամեմատ փոքրը) հետո անցավ ռուսական ցարական կառավարությանը, ինչի մասին ստորև խոսելու ենք, իսկ Թուրքահայաստանը (ամբողջի 9/10 մասը) թուրքերը դարձրին կատարյալ անապատ. այդ մասին նույնպես խոսելու ենք ստորև:

Հայերը որքան ուժ ունեին պաշտպանում էին իրենց հողը: Վրացիների հետ մեկտեղ կրծքով դիմադրում էին մոնղոլներին, երկու անգամ ապստամբեցին նրանց դեմ (1249 և 1261 թթ.): Բայց հետո, երկար ժամանակ նրանք չունեին ոչ ուժ և ոչ էլ թափելու արյուն: Միայն ամենազարմանալի պատերազմի ժամանակ, որ Պետրոս Մեծի Ռուսաստանը մղում էր Պարսկաստանի դեմ, Պարսկաստանը՝ Թուրքիայի դեմ և Թուրքիան Ռուսաստանի դեմ, հայերի զորավար Դավիթ-Բեկը երեք կռվող բանակի կրակների արանքում ստեղծեց հայկական տերություն, որը ճանաչվեց երեք կռվող պետությունների կողմից էլ: Սակայն այն գոյատևեց շատ կարճ (1722—1730), այսինքն՝ մինչև Դավթի ժառանգ Մխիթարի դավադրական սպանությունը:

1828 թ. Ռուսաստանը մեծացրեց իր տերիտորիան Պարսկահայաստանի մեծ մասի հաշվին, իսկ 50 տարի անց (1878) Թուրքիայից խլեց Ղարս և Արդահան հայկական մարզերը: Թվում էր թե լիակատար անկախություն ստանալու հայերի երազանքները վերջապես իրագործվելու են: Բայց ավաղ, ցարական Ռուսաստանը ամենևին միտք չուներ հարություն տալու Հայաստանին, թեև բազմիցս այդ խոստումներն արել էր Հայաստանին: Պարզապես հայկական հողերը միացրեց իր տերիտորիային որպես մի նոր նահանգ: Ու չգտնվեց մի նոր Բայրոն, որը հիշատակեր Հայաստանի մասին այնպես, ինչպես ինքը՝ Հունաստանի մասին: Հերթով ազատագրվեցին Ռումինիան, Սերբիան և Բուլղարիան: Իսկ Հայաստանի մասին այդ ամենահումանիստական 19-րդ դարում բոլորը մոռացել էին: **Տասներորդ անգամն էր դա, որ մոռացվել էր Հայաստանը:**

Ճիշտն ասած չմոռացողներ կային: Բայց հայ ժողովրդի բարեկամներ չէին նրանք, այլ ուղղակի որոշ եվրոպական երկրների փաստաբաններ, որոնք հայկական հարցը խաղացնելով հնարավորին չափ արտոնություններ էին պոկում Թուրքիայից իրենց համար: Ու այդ հարցով անվերջ գրգռում էին թուրքերին, մինչև որ հասցրին այն աստիճանին, որ հայ ժողովուրդը ահավոր գին վճարեց ոչ իր պարտքերի դիմաց:

Հայերը բնակվում էին ոչ միայն Թուրքահայաստանում, այլև ցրված էին ամբողջ Անատոլիայում և այն էլ դեռևս բյուզանդական ժամանակներից: Առանձնապես շատ էին նրանք Կիլիկիայում՝ նախկին Ռուբինյանների և Լուսինյանների թագավորության մեջ: Իսկ բուն Անատոլիայի սահմաններից դուրս

բնակություն էին հաստատել Սիրիայում և Լիբանանում ու նախ և առաջ հենց սուլթանի մայրաքաղաքում՝ Ստամբուլում (նախկին Կոստանդնուպոլսում), որը 19-րդ դարում դարձավ թուրքա-հունա-հայկական կուլտուրական մեծ կենտրոն: Ըստ որում հայկական տարրը գերակշռում էր մտավոր ասպարեզում: Այստեղ է հենց զարգանում արևմտահայ հոյակապ գրականությունը՝ Մերձավոր Արևելքի ամենահետաքրքիր գրականություններից մեկը:

Ստամբուլը տարբեր պատճառներով դարձավ արևմտահայերի հոգևոր կենտրոնը, բայց գլխավորապես նրա համար, որ այն ժամանակ Թուրքահայաստանում ավելի մեծ քաղաք չկար: Մնացած քաղաքները ոչնչացված էին վայրենիների տիրապետության 800 տարիների ընթացքում՝ սկսած ամենավաղ՝ սելջուկ-թուրքերից մինչև ամենաուշ՝ օսման-թուրքերը:

Այնուամենայնիվ, երկու մեծ քրիստոնեական գաղութների առկայությունը Ստամբուլում փուշ էր թուրքական կառավարության աչքում, մանավանդ որ օտար պետությունները օգտագործում էին այդ փաստը ոչ թե ազգային փոքրամասնություն կազմող հայերին և հույներին օգնություն ցույց տալու նպատակով, այլ Թուրքիայի վրա ազդելու նպատակով, ստիպելով նրան, որ թույլ տա կոնցեսիաներ իր երկրում եվրոպական կապիտալի համար: Գնալով թուրքերի մեջ աճում էր ատելությունը քրիստոնյաների նկատմամբ... Սկսվեցին կոտորածները: Միայն թե այդ ատելությունը դրդողներն ու գրգռողները օտարերկրացիներ էին, իսկ զոհ էին դառնում այն անմեղ քրիստոնյաները, որոնց միայն կարելի էր անպատիժ սպանել: 19-րդ դարի առաջին կեսին դա գլխավորապես հույներն էին, իսկ 1876 թվականից՝ հայերը:

Հայերի անտանելի կյանքը թուրքական տիրապետության ներքո 1915 թ. հասել էր իր գագաթնակետին, երբ տանջալի մահվան դատապարտվեց համարյա ամբողջ արևմտահայ ժողովուրդը: Իրենց անկախությունը կորցնելուց հետո 870 տարի (1045—1915) տառապում էին նրանք այնպիսի տանջանքների մեջ, ինչպիսիք չի ճանաչել աշխարհիս ոչ մի ժողովուրդ: Բացի գուցե միայն հրեաներից: Բայց հրեաները Երուսաղեմի անկումից անմիջապես հետո լքեցին հայրենի հողը, հնարավորություն ունենալով գոնե իրենց համար բնակավայր ընտրել: Եվ ամեն տեղ չէ, որ վատ էր նրանց համար:

Այսօր, ճիշտ է, աշխարհով մեկ ցրված են գաղթած հայերը: Բայց 1915 թ. առաջ թուրքահայերի ճնշող մեծամասնությունը մնում էր իր հայրենիքում: Դրանք գյուղացի հողագործներ էին: Եթե գաղթում էր այդ գյուղացին, ապա դեպի Ստամբուլ կամ դեպի Լիբանանի քաղաքները՝ նույն թուրքական կառավարության սահմաններում: Քաղաքներում նրանք աշխատում էին որպես բանվորներ կամ արհեստավորներ: Ոմանք զբաղվում էին առևտրով և հակառակ տարածված բամբասանքների, եղել են ազնիվ առևտրականներ: Համենայն դեպս այդպիսի համբավ վաստակել են նրանք իմ հայրենիքում՝ Լեհաստանում:

Շատ հայեր իրենց նվիրեցին մանկավարժական և մշակութային ստեղծագործ աշխատանքին: Նրանք մեծ արտիստներ են եղել արվեստի յուրաքանչյուր ճյուղում. նրանցից դուրս են եկել հանճարեղ բանաստեղծներ ու արձակագիրներ, մեծ երաժիշտներ, ակնառու նկարիչներ, հոյակապ շինարարներ, իսկ ամենից առաջ ազնիվ աշխատավորների և հմուտ, բարեխիղճ արհեստավորների հսկայական մի զանգված: Ժամանակակից աչքի ընկնող հայ բանաստեղծ Պարույր Սևակը իրավամբ ասում է.

Իսկ երբ ստիպված մեր հողն ենք թողել,
Ուր էլ հասել ենք, որտեղ էլ եղել՝
Ջանացել ենք մենք ամենքի համար,
Շինել ենք կամուրջ, կապել ենք կամար...

Խնդրում եմ միշտ հիշել, որ Թուրքահայաստանի կազմում էր պատմական Հայաստանի 9/10 մասը: Դրա համար էլ, ահա, ոչ թե Պարսկական Հայաստանում (ուր վերաբերմունքը հայերի նկատմամբ անհամեմատ ավելի լավ էր), այլ հենց այստեղ բյուրեղացավ այն, ինչը որ 19-րդ դարի հրապարակախոսությունը անվանել է հայկական հարց:

Այս տերմինը կյանք առավ Թուրքիայի սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի գահակալության ժամանակից (1876 թ.), որը 33 տարվա ընթացքում, այսինքն համարյա մինչև իր գահընկեցությունը (1909 թ.) հասցրեց իրագործել ութ մեծ կոտորած. դրանցից ամենամեծի ժամանակ սպանվեց մոտ 300 հազար հայ: Հայերին կոտորում էին թուրք կառավարության կողմից գրգռված քրդերը՝ թուրք հասարակության տականքների հետ միասին: Թուրք գյուղացիները հիմնականում կոտորածներին չէին մասնակցում. հասարակ թուրք ժողովուրդը բնավ

չար չէ և ընդհանրապես կարողանում էր խաղաղ ապրել քրիստոնյա ժողովուրդների հետ: Եվ ընդհակառակը, սարսափելի չարացած էին այն մարդիկ, որոնք դրանից առաջ և դրանից հետո կառավարում էին Թուրքիան:

Հենց նոր նշեցի, որ եղել է 8 կոտորած, որոնցից ամենամեծի ժամանակ սպանվել է շուրջ 300 հազար հոգի: Որքան հեշտ է գրել այդ մասին: Բայց ինչ սարսափելի բովանդակություն են պարունակում այդ խոսքերը: Այսպես, եթե գիշերը նայենք աստղալից երկնքին, ապա հասարակ աչքով ամբողջ երկնակամարում կարող ենք տեսնել շուրջ 4000 աստղ...

Եթե դրանք միայն մեկ կոտորածի ժամանակ սպանված հայ տղամարդկանց, կանանց ու երեխաների մարմինները լիներին, ապա 75 անգամ ավելի պետք է լիներին, քան երկնքում մեր տեսած աստղերը: Ու հիշիր միաժամանակ, որ այն ժամանակ արդեն դա փոքրաթիվ, հազիվ մի քանի միլիոնանոց քրիստոնյա ժողովուրդ էր, որը հարյուրամյակների ընթացքում հրաշքով պահպանում էր իր կյանքը՝ ապրելով ու պայքարելով հավատքի, լեզվի, մշակույթի և ամեն տեսակետից իրեն օտար մուսուլման միջավայրում:

Վերևում հիշատակեցի արդեն, որ եվրոպական տերությունները խառնվում էին հայկական հարցին, միջամտում էին նաև այն ժամանակ, երբ նրանց միջամտությունը բնավ հարկավոր չէր ու միայն գրգռում էր թուրքերին հայերի դեմ: Բայց այդ հարցին խառնվող ոչ մի պետության կառավարություն այդ խնդիրը չդրեց ճիշտ հողի վրա, այսինքն չպահանջեց, չառաջարկեց անգամ թուրքական Հայաստանը վերածնել անկախ, սուվերեն պետության: Մինչդեռ այն ժամանակ կային արդեն անկախ պետություններ՝ Հունաստանը, Սերբիան, Չեռնոգորիան, Բուլղարիան և Ռումինիան, հետո շուտով նաև Ալբանիան, որոնք առաջ պատկանում էին Թուրքիային: Գուցե չէի՞ն ուզում բարկացնել ցարական Ռուսաստանին, որը հույս ուներ մոտիկ ապագայում գրավել այդ տերիտորիաները, ընդհուպ մինչև արաբական սահմանը: Կամ գուցե ինչ-որ ա՞յլ պատճառներ կային: Բավական է, որ աշխարհը մոռացավ երեսուն հարյուրամյա հայկական պետության ավանդության մասին: Եվ դա նրա տասնմեկերորդ մոռացությունն ու անհեռեի սխալն էր:

Չեմ կարծում, թե աշխարհիս երեսին գտնվեր որևէ ուրիշ

ժողովուրդ, որը ի վիճակի լիներ այդքան երկար դիմանալու անընդհատ շարունակվող արյունահեղությանը, ինչպես դիմացան հայերը 9 դարերի ընթացքում, տանելով միաժամանակ մշտական արհամարհանքը: Չէ՞ որ վայրենի արշավողները (բացի մոնղոլներից) եղել են մոլի մուսուլմաններ և քրիստոնյաներին ավելի վատ էին նայում, քան շներին: Հոգու ինչպիսի տոկունություն էր պետք այդպիսի պայմաններում կրոնափոխ չլինելու համար: Չէ որ դա այնքան հեշտ բան չէր: Ու միանգամից կարելի էր ունենալ հանգիստ կյանք, և նույնիսկ արտոնյալ պաշտոն սերնդից սերունդ մուսուլմանների մեջ: Չնայած դրան կրոնափոխության դեպքերն այստեղ այնքան հազվադեպ են պատահել, որ գրեթե նշումներ չկան նրանց մասին:

Սակայն կոտորածները միակ ջրանցքը չէր, որով արտահոսում էր հայ արյունը: Երկրորդը ենիչերական այն զորագնդերն էին, ուր տանում էին ամեն տասներորդ հայ տղային, և այդ տղաները, պարզ բան է, արդեն մեկընդմիշտ կորած էին ժողովրդի համար: Եվ, վերջապես, երրորդ ամենալայն ջրանցքը եղել է ամենագեղեցիկ աղջիկների փախցնելը համարյա 1000-ամյակի ընթացքում:

Իսլամը տղամարդուն ոչ մի սահմանափակում չի անում կյանքի ընկերուհի կամ ընկերուհիներ ընտրելու մեջ: Իսկ քանի որ Թուրքահայաստանում չի եղել մի անկյուն, ուր չպըտըտվեին գոնե մի քանի մուսուլմաններ՝ քրդեր կամ թուրքեր՝ միշտ լավ զինված ու կռիվների պատրաստ, ապա սպառնալիքներով, թե զենքի ուժով քրիստոնյաներից ամենագեղեցիկ կանանց խլելը օրակարգի խնդիր էր: Հայ մորից և թուրք հորից ծնված տղան դաստիարակվում էր որպես թուրք՝ հպարտանալով իր «ասպետական» ծագումով և արհամարհելով խաղաղ տրամադրված մոր ժողովուրդը: Սակայն դա հսկայական ազդեցություն է ունեցել նոր սերունդների ռասսայական պատկանելության վրա: Այդ նոր սերունդների մայրերը, հաճախ նաև տատերն ու նախատատերը հայուհի են եղել: Չէ որ թուրքերը, երբ Աստված նրանց ստեղծեց և բերեց Անատոլիա, ունեին շեղ աչքեր և դուրս ցցված լայն այտոսկրներ: Իսկ այսօր բավականին գեղեցիկ ժողովուրդ են, որովհետև հայերից խլեցին նրանց սեփական արյունն անգամ:

Սակայն հակառակ բազմաջրանցք հուներով հայկական

արյան անընդհատ արտահոսքին, հակառակ մեծամեծ կոտորածներին և մշտական արհամարհանքին, հայ ժողովուրդը ջղաձգորեն իր սպառվող ուժերի մնացորդներով ամուր կառչում էր իր հավատքին ու իր լեզվին: Մեկ ուրիշ ժամանակակից հայ բանաստեղծ Գևորգ Էմինը համեմատում է նրան խաղողի վազի հետ, որն իր արմատները խրել է կարծր ժայռի մեջ ու սնվել այդ ժայռով:

Աբդուլ Համիդի արյունարբու կառավարության անկման պահին, այսինքն 1909 թ., հակառակ ամեն բանի, ամբողջ աշխարհում դեռ կար 5 միլիոն հայ (Թուրքիայում մոտ 4 միլիոն): Բայց մոտալուտ պատերազմի մթնոլորտում աշխարհը դադարել էր նրանցով հետաքրքրվելուց՝ թողնելով նրանց երիտ. թուրքերի կուսակցության «պրոգրեսիվ ու լիբերալ» փոքրամասնության հոգատարությանը. այն կուսակցության, որն այն ժամանակ խոստանալով «միություն և առաջադիմություն» անցավ իշխանության գլուխ: Եվ **դա եղավ իր հետևանքներով ամենասարսափելի 12-րդ սխալը:** Նրա ողբերգական հետևանքների մասին կխոսենք այս նամակաշարի երկրորդ մասում:

ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿ ԻՄ ԱՆԾԱՆՈԹ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ*

(որի մեջ պատմում եմ նրան այնպիսի փաստեր, որոնք խայտառակեցին ամբողջ մարդկությանը)

Կան տարբեր առաջադիմություններ. կա մշակութային առաջադիմություն, բայց կա նաև անդամալուծության առաջադիմություն:

Թուրքերը հաճախակի գործածում են այնպիսի բառեր, ինչպես «առաջադիմություն», «ազատություն», «համերաշխություն» և «արդարություն», որոնք օգտագործում էին այս դարի սկզբին, օգտագործում են և այժմ որպես իրենց կուսակցությունների անուններ, թեև մանավանդ Աբդուլ-Համիդի անկումից սկսած, այնտեղ ոչ ազատություն կա, ոչ համերաշխություն, ոչ արդարություն, իսկ առաջադիմությունը գրեթե անկատելի է, թեև այդ ժամանակամիջոցում լատինական այբուքեն մտցվեց այնտեղ և արգելվեց ֆես կրելը:

Այդ «նոր ժամանակներն» սկսվեցին երիտթուրքերի՝ իշխանության գլուխ անցնելուց հետո: «Միություն և առաջադիմություն» խոստմնալից անվան տակ նրանք 1909 թ. գարնանը գահընկեց արին արյունարբու սուլթան Աբդուլ-Համիդ Երկրորդին և գահ բարձրացրին Մուհամեդ Հինգերորդին, որը ամեն ինչում կատարում էր նրանց կամքը: Ու պարզվեց, որ գործնականորեն հայտնի չէր, թե առաջադիմությունը ինչով է արտահայտվում, որովհետև նոր կառավարությունը ավելի էր սեղմում օղակը ազգային փոքրամասնությունների վզին ու հոչակում շովինիզմի, պանիսլամիզմի և պանթուրքիզմի լոզունգներ:

1912 թ. գարնանը երիտթուրքական կառավարությունը կարճ ժամանակով տապալվեց մրցակից կուսակցության կողմից, որը կրում էր ավելի գեղեցիկ անուն՝ «Ազատություն և համերաշխություն» և նախորդից տարբերվում էր նախ և առաջ նրանով, որ անգլիական կողմնորոշում ուներ, մինչդեռ նախորդը՝ գերմանական: Բայց 1913 թ. հունվարին երիտթուրքերը նորից կառավարության ղեկն իրենց ձեռքն առան, ըստ որում նոր մինիստրները անձամբ՝ իրենց ձեռքով սպանեցին նախորդներին: Որպես հաղթանակած կուսակցության ղեկավար մարմին՝ կազմվեց մի եռիշխանություն, որը կառավարում էր պետությունը՝ առանց հաշվի առնելու սուլթանին: Եռիշխանության մեջ մտան Էնվեր փաշան, Թալյաթ փաշան և Ջեմալ փաշան: Լավ հիշիր այս անունները, ընթերցող, որովհետև այդ երեք ջենտլմենները առաջին դերը կատարեցին մեծ խայտառակության պատմության մեջ:

Երիտթուրքերի կրկին վերադարձը իշխանության գլուխ՝ ազգային փոքրամասնությունների համար բերեց կարծես լարվածության որոշ թուլացում և առերևույթ լիբերալություն: Նույնիսկ փոխադարձ հասկացողություն տեղի ունեցավ հայերի հետ: Կառավարությունը խոստացավ նրանց քաղաքական և մշակութային լայն ինքնօրինություն, բայց միաժամանակ սկսեցին գաղտնի պատրաստություններ տեսնել հայերին իսպառ բնաջնջելու «համարձակ» նախագիծը մշակելու:

Քաջության, ինչպես և առաջադիմության, տարբեր տեսակներ են լինում: Քաջություն պետք է ունենալ կյանքը մահվան վտանգի ենթարկելու. քաջություն պետք է ունենալ նաև երե-

* Տպագրվել է «Խորհրդային Հայաստան» թերթի 1990 թ. մայիսի 20-ի համարում:

խա սպանելու համար: Երիտթուրքական կառավարությունն օժտված էր այս երկրորդ տեսակի քաջությամբ:

1914 թ. համաշխարհային առաջին պատերազմի անակնկալ պայթյունը հիանալի պայմաններ էր ստեղծել այդ նախագիծն իրագործելու համար: Հենց սկզբից էլ տարակույս չկար, որ Թուրքիան մասնակցելու է պատերազմին Գերմանիայի կողմից: Փաստեր կան, որ գերմանական գերագույն շտաբը տեղյակ էր այդ գաղտնի դավին, թեև հայերի մեծ բարեկամ, ավստրիական գրող Ֆրանց Վերֆելը ասում էր, թե այդպես չէր: Համենայն դեպս կասկածից դուրս է, որ գերմանացիները այնքան էլ չէին միջամտի Թուրքիայի այդ «ներքին գործին», իսկ Անտանտի երկրների հասարակական կարծիքը կարելի էր հաշվի չառնել, քանի որ Թուրքիան պատերազմում էր նրանց դեմ:

Արտաքուստ կյանքն ընթանում էր նորմալ: Հայերին, ինչպես և թուրքերին, կանչեցին բանակ, իսկ ավելի տարիքավորներին՝ ռազմական ամրություններ և ճանապարհներ կառուցելու համար: Կային գրեթե բացառապես հայերից կազմված գնդեր, որոնք լավ էին կռվում: 1914—1915 թթ. ձմռանը նրանք շրջապատումից ազատեցին գեներալիսիմուս Էնվեր փաշային, որը հատուկ հրամանով շնորհակալություն հայտնեց «մեր հավատարիմ հայ ժողովրդին»...

Այդ նույն ժամանակ տեղի էին ունենում կուսակցական ղեկավարների գաղտնի նիստեր: Ստույգ հայտնի է համընդհանուր կոտորածի նախագիծը: Սակայն նույնիսկ այստեղ՝ կուսակցության գերագույն կոմիտեում, կային հակադրվողներ: Ահա 1914 թ. հոկտեմբերի 15-ի նիստի սղագրությունը.

Թալեաթ բեյ.— Մի խոսքով վախենում եմ, որ Գերմանիան, պատերազմում հաղթանակ տանելուց հետո, կապվի ամենից ավելի ամուր և ընդունակ հույն ու հայ տարրերի հետ:

Զիա Գյոք-Ալփ.— Հույները կասկածելի են: Վաղ թե ուշ ստիպված կլինենք պայքար մղել նրանց դեմ: Իսկ հայերի կոտորածը կվախեցնի նրանց: Հունաստանը չի համարձակվի նոր պատերազմ սկսել՝ վախենալով Թուրքիայում ապրող հույների համար:

Զավիդ.— Գուցե դուք իրավացի եք, բայց ինչ կլինի, եթե այս պատերազմում պարտվենք: Ես լավ եմ ճանաչում հայերին: Բավարարելով նրանց հինգ պահանջներից միայն մեկը՝ կարող ենք մեր կողմը գրավել նրանց: Պետության ապահովության համար կարելի է վերաբնակեցնել նրանց, բայց պետք չէ սպանել. չէ որ այդ ձևով կկորչեն նաև նրանք, որոնց հնարավոր է ստիպել իսլամություն ընդունել և հետո օգուտ քաղել նրանցից:

Դոկտ. Նազիմ.— Զարմանում եմ, որ ոմանք պաշտպանում են նրանց: Չէ որ նրանք խանգարում են մեզ կովկասյան ռազմաճակատում՝ անհնարին դարձնելով մեր մուտքը Ռուսաստան: Այնտեղի հայերը կամավոր են մտնում բանակը, իսկ մեզ մոտ դասալիք են լինում: Անհրաժեշտ է հիմնովին լուծել հայկական հարցը՝ բոլոր հայերին իսպառ բնաջնջելով: Կարծում եմ, որ արտահայտում եմ այստեղ եղողների ընդհանուր համոզմունքը՝ հաստատելով, որ միանգամից կլուծենք այս խնդիրը, հենց որ որոշումն ընդունվի:

Թալեաթ բեյ՝ ներքին գործերի մինիստր.— Իմ անձնական պատասխանատվությամբ հայերի դեմ կգործադրեմ այն ամենը, ինչ անհրաժեշտ համարեմ, քանի որ թեև առայժմ ցույց են տալիս, **թե մեր կողմն են**, բայց վաղը կարող են փոխել իրենց վերաբերմունքը:

Ձայների մեծամասնությամբ ընդունվեց հետևյալ բովանդակությամբ, որոշում՝ հայերի վերաբնակեցում կատարել, միաժամանակ ոչնչացնել նրանց անապատում:

Խնդրում եմ ուշք դարձնել Թալեաթ բեյի՝ իմ ընդգծած խոսքերին: Հայերը լոյալ էին տրամադրված թուրքական պետության նկատմամբ և իրենց վերաբերմունքով (չհաշված դասալքության սակավաթիվ դեպքերը, որոնք պատահում էին ամեն տեղ) ռեպրեսիաների համար հոգեբանորեն պատճառաբանված ոչ մի առիթ չէին տալիս թուրքերին:

Համենայն դեպս այդ օրվանից սկսվեցին պլանավորված, մանրակրկիտ նախապատրաստությունները՝ մի ամբողջ ժողովուրդ սպանելու համար, օգտագործելով աշխատանքի կազմակերպության նորագույն մեթոդները: Պարզվում է, որ կազմակերպված ցեղասպանության հնարողները գերմանացիները չէին: Թուրքերը նրանցից առաջ էին անցել:

Սաստիկ ձմեռվանից հետո, երբ խրամատներում անշարժ մնացած զինվորների ցրտահար մատները, ականջներն ու քթերը ստիպված էին հեռացնել, վրա հասավ արտակարգ շոգ տարուանը: Ամբողջ Թուրքահայաստանում, Կիլիկիայում և բուն

Անատոլիայում ցրված հազարավոր հայկական գյուղերը թալանված էին այգեստանների փարթամ ծաղկած ծառերի ծովի մեջ։ Երիտասարդները քիչ էին. նրանք կռվում էին Թուրքիայի և սուլթանի համար։ Բայց չնայած դրան՝ գյուղերը թնդում էին երազի պես գեղեցիկ աղջիկների անզուգական երգից ու խաղով տարված մանուկների աղմուկից։

Ապրիլի վերջերին շոգը գագաթնակետին էր հասել։ Արևը կարող էր մարդ սպանել։

Եվ այդ ժամանակ սկսվեց այն, ինչ նախագծված էր։

Թուրքական պետության տարբեր մասերում տարբեր էր կոտորածի ընթացքը։ Բուն Անատոլիայում, ուր թուրք բնակչությունը կազմված էր գյուղացիներից, որոնք բնավորությամբ մեղմ էին և իրենց քրիստոնյա հարևանների նկատմամբ բարյացակամ, այդ սպանությանն արտաքուստ տրված էր օրինականության ձև։ Քաղաքներում ու գյուղերում միաժամանակ երևացին հայտարարություններ, որոնցով հայ բնակչությանը հրամայվում էր որոշված օրը, որոշված ժամին հավաքվել հրապարակում կամ գյուղի կենտրոնում միայն ձեռքի բեռով՝ նոր բնակավայր տեղափոխվելու համար։ Մշակված հողը, տները ու այն ամենը, ինչ կար այնտեղ, պետք է մնային նոր բնակիչներին՝ մահմեդականներին։ Արգելված էր վերցնել որևէ փոխադրամիջոց։ Երթը պետք է լիներ հետիոտն։

Այդ ամենը հիշեցնում էր ավելի ուշ պատմության թատերաբեմ իջած գերմանական զավթիչների կառավարման ձևերը, երբ նրանք ոչնչացնում էին հրեա ժողովրդին։

Նշված ժամին, նշված վայրերում հավաքվել էին սարսափահար կանայք ու մանուկներ, անչափահաս աղջիկներ, տղաներ ու ծերունիներ։ Ծաղկահասակ տղամարդիկ խիստ սակավաթիվ էին։

Հրապարակը նախօրոք շրջապատվում էր հրացաններով ու մտրակներով զինված ոստիկաններով։ Տեղացի թուրքերն սարսափով դիտում էին այդ տեսարանը իրենց տների ամուր փակված լուսամուտներից։ Նրանցից ոչ մեկը ոչ մի թշնամանք չուներ հայերի դեմ։ Խղճում էին նրանց, որովհետև թուրք ժողովուրդը ըստ էության բարի է, ինչպես ռուս ժողովուրդը կամ հնդիկը։ Գուցե դրանք են աշխարհիս ամենալավ ժողովուրդները։ Եվ թուրքերի կողմից ուրիշ ժողովուրդների նկատմամբ ցուցաբերված դաժանությունները այս տեսակետից կրկնակի ապշեցուցիչ են, որովհետև հոգեբանորեն անբացատրելի են։ Այդ նույն բարի ու մեղմ թուրք գյուղացին հրեշ էր դառնում, հենց որ ստանում էր ենթասպայի կամ ոստիկանի պաշտոն։ Իսկ համալսարանական կրթություն ստացած թուրքերը սառնասրտորեն նախագծում էին մի ամբողջ ժողովուրդ բնաջնջելու պլանը։ Ըստ երևույթին հասարակական զարգացման և նոր կադրեր կրթելու համակարգը Թուրքիայում չար է իր հիմքում, որովհետև վարակված է ատելության թույնով։ «Արդարությունը պարտավոր եմ ամրացնել իմ թրի սայրին, քաղաքակրթությանը խփել իմ ձիու պայտերին։ Ես պարտավոր եմ ոչնչացնել ամեն բան՝ չթողնելով քարը քարի վրա, ոչ էլ կանգնած ծառ և ոչ իսկ մի կանաչ տերև նրա վրա։ Իմ ետևից պարտավոր եմ թողնել այնպիսի ավերակներ, որ դրանք տեսնող ամեն ոք իրավունք ունենա ասելու. «Այստեղով թուրքն է անցել»,— հայկական ջարդերի ճիշտ նախօրյակին գրում էր երիտթուրքերի կոմիտեի նիստի մասնակից Զիա Գյոք-Ալփը, որի խոսքը մենք բերեցինք վերևում։

Ակամա անզուսպ ցանկություն ունեմ պատասխանելու նրան հիսուն տարի հետո. «Տխմար մարդ, դրանով ուզում ես հարգանք ներշնչել մարդկությանը քո հանդեպ։ Քանդել ու ոչնչացնել ի վիճակի է ամեն մի անասուն մինչև որ նրան շրջապատող կապեն և ամեն մի խելագար, մինչև որ զսպաշապիկ հագցնեն նրան։ Դրանից հետո թուրքը արդեն երբեք չի սպառնա աշխարհին։ Դուք, թուրքերդ, պետք է հաշտվեք աշխարհում նորմալ երկրորդական պետության դերը կատարելու հետ։ Եվ այդ նորմալ աշխարհում թուրքի անունը կարող է փայլատակել ավելի, քան մի անգամ, բայց ոչ կոտորածների կապակցությամբ»։

Սակայն այդ անպիտան մարդը այն տրամադրությունների հիանալի արտահայտիչն էր, որոնցով դաստիարակվում էր և շարունակում է դաստիարակվել թուրք երիտասարդությունը։ Այդ տխուր փաստի ապացույցները բերեցին ինձ իմ ծանոթները, որոնք Իզմիր քաղաքում էին հույների հայտնի կոտորածի տարեդարձի օրերին։ Այդ կոտորածը թուրքերը կատարել են իրենց վերջին պատերազմի ժամանակ՝ ջարդելով բուն Իզմիրում միայն 100 հազար հույն, հրեա և հրաշքով մինչ այդ կենդանի մնացած հայերին։

Ամեն տարի այդ արյունահեղ տարեդարձը հրճվանքով

ու հպարտությամբ են նշում տեղի համալսարանի ուսանողները, որոնք ենիչերիների զգեստով, յաթաղաններն ատամներին, մեծ խմբերով անցնում են փողոցներով՝ սպանելով կամ ծովը նետելով ճանապարհին պատահած հույներին ու հայերին: Եվրոպացիները այդ արյունահեղ դիմակահանդեսը տեսնելիս հիվանդանում են:

Անատոլիայի, Միջագետքի, Սիրիայի և Լիբանանի բոլոր մեծ ու փոքր քաղաքներից, ընդարձակ կայսրության բոլոր գյուղերից ու բնակավայրերից միևնույն ժամին շարժվեցին հայ ծնված լինելու համար մահվան դատապարտված մարդկանց շարասյուները՝ մեծ մասը աղջիկներ, կանայք ու երեխաներ:

Ասես ջեռուցվող վառարանի միջով գնում էին նրանք օրեր ու շաբաթներ, իսկ կայսրության արևմտյան սահմաններից՝ նույնիսկ ամիսներ, ուղղություն ունենալով սիրիական անապատը: Գնում էին առանց ուտելիքի, առանց ջրի, սոված ու ծարավ, մտրակների հարվածների ներքո... հաճախ սվինահար արվում: Իսկ նրանց երթի ամբողջ ընթացքում ետևից կրնկակոխ հետապնդում էին չեչենների ու տեղական տականքների հրոսակախմբերը, կողոպտում ճանապարհին մնացածների զգեստների մնացորդները: Ուժասպառ ընկնողներն սպանվում էին հրացանների խզակոթով կամ տրորվում ձիերի ամբակների տակ: Այդպես էր արվում, որպեսզի ոչ ոք պատահաբար կենդանի չմնա ու չփախչի: Ամենագեղեցիկ աղջիկներին դուրս էին քաշում շարքերից, նրանց բռնաբարում էին ոստիկանները, հետո հանձնում չեչեններին: Եվ մնում էին նրանք ճանապարհնորին՝ փորը ճեղքված, կրծքերը կտրատված:

Քո դստերը կամ նշանածիդ նայելիս, սիրելի ընթերցող, մտածիր, որ այն աղջիկներն էլ նրա պես գեղեցիկ էին, դեռատի ու կենսաթրթիռ: Գուցե և իրենց բնավորությամբ նման էին նրան: Եվ կհասկանաս, թե ինչու եմ ես այն ամենը հիշատակում, ինչ արեցին թուրքերը:

Անատոլուի ամռան սոսկալի շոգին հազիվ էին ոտքերը փոխում ստվերների անվախճան շարանները: Մայրերը ջղաձգորեն իրենց ցամաքած կրծքերին էին սեղմում սառչող դիակներն իրենց մանկիկների, որոնց այլևս չէին կարող կերակրել: Երբեմն մի սրտացավ թուրք գյուղացի ճարպկությամբ անցնելով ոստիկանական ձիերի արանքներով ու ժամանակին խուսափելով մտրակի հարվածներից՝ ջուր էր տալիս նրանց, եթե ոստիկանը ոտքի հարվածով չէր թափում նրա ամանը: Երթի ետևից ու կողքերից, փոշու ամպերի միջից, մերթ երևում, մերթ նորից անհետանում էին շարունակ հետամուտ չեչենների ուրվականները:

Քանի հոգու էին քշում այդպես, ստույգ չգիտեմ: Հավանաբար մոտ երկու միլիոն, քանի որ կայսրության արևելքում՝ բուն Թուրքահայաստանում, այդ նույն օրերին կատարվում էր հայ բնակչության ամբողջական կոտորած՝ առանց գոնե արտաքուստ օրինականության որևէ ձև բանեցնելու: Այնտեղ քիչ էին թուրք գյուղացիները, մուսուլմանական տարրերը գլխավորապես քրդերն էին, որոնք թուրքական կառավարությունը շատ անգամ էր օգտագործել հայերին կոտորելու համար: Այս անգամ ևս քրդական ցեղերի մեծ մասը համաձայնեց օգտագործվել որպես ոճրագործության գործիք: Քրդերի հրոսակները սովորաբար գործում էին թուրք սպաների գլխավորությամբ և հրամանատարությամբ: Բացի դրանից, քրդերին օգնության էր ուղարկված հետևակ զորքի երկու զորամաս և որոշ թվով թնդանոթներ:

Այդտեղ կոտորածի ընթացքը հետևյալն էր. լուսաբացից առաջ քաղաքը կամ գյուղը շրջապատում էին այնպես, որ ոչ ոք չկարողանա փախչել: Մոտակա բարձունքների վրա տեղադրում էին թնդանոթներ: Նախ թնդանոթներով հրակոծում էին փողոցներն ու տները, որից հետո հրոսակախմբերը խուժում էին բնակավայրերը և մեծ մասամբ դաշույններով լիովին ջարդում հայ բնակիչներին: Այնուհետև խուժանը կողոպտում էր բոլոր տները, հետո միայն շարժվում առաջ՝ ճանապարհին մարդասպանների ավելի փոքրաթիվ խմբեր ուղարկելու հայկական մանր գյուղերը՝ բնակչությանը բնաջնջելու համար:

Ստույգ լինելու համար պետք է նկատեմ, որ ոչ բոլոր քրդերն էին մասնակցում այդ կոտորածներին: Հայերի նկատմամբ բարյացակամորեն տրամադրված որոշ ցեղեր ոչ միայն հրաժարվում էին մարդասպանությանը մասնակցելուց, այլև հարձակվում էին նրանց վրա կամ, որ ճիշտ է, հազվադեպ էր պատահում, կրակ էին բացում հայերի դեմ ուղարկված զինվորների շարասյուների վրա:

Հայերն իրենք էլ էին պաշտպանվում: Որոշ փոքր քաղաքներում կազմակերպվում էր ուժեղ դիմադրություն, որին եր-

բեմն մասնակցում էին տեղացի թուրքերը: Լեռներում կազմվեցին հայ պարտիզանների խմբեր: Այնտեղ ապաստան էր գտել նաև կանանց ու երեխաների մի մասը: Թուրքերը կատաղի կռիվներ մղելով՝ մեծ դժվարությամբ էին կարողանում սար սարի ետևից գրավել՝ գործադրելով հրետանին ու հետևակ զորքը: Այս դիմադրության մի քանի կետերից մի քանիսը փրկվեցին վրա հասած ռուսական, ֆրանսիական կամ անգլիական զորամասերի շնորհիվ: Այդպես դիմադրած ու փրկված կետերից մեկի պատմությունը նկարագրել է ավստրիացի գրող Ֆրանց Վերֆելը իր «Մուսա լեռան քառասուն օրը» գրքում: Երկու պատերազմների միջև ընկած ժամանակաշրջանում ամերիկացիները կինոֆիլմ պատրաստեցին ըստ այդ վեպի, բայց թուրքերը գնեցին այն և անմիջապես ոչնչացրին: (Լսել եմ, որ նորից են նկարահանում այդ ֆիլմը. գուցե և արդեն պատրաստ է):

Կոտորածներին կողմնակից չէին ոչ միայն թուրք գյուղացիները (իհարկե ոչ բոլորը, որովհետև այստեղ էլ կային տխուր բացառություններ), այլև երիտթուրքերի վայրի շովինիզմից վախեցած հին ազնվականությունը, ինչպես նաև մուսուլման հոգևորականության նշանակալի մասը, դրաց հետ նաև կուսակրոն դերվիշները: Սակայն այդ կոտորածներին դեմ լինելը երբեք չի ընդունել գործնական հակադրության ձև: Շատ-շատ թաքցնում էին առանձին հայերի կամ ուտելիք էին հասցնում նրանց: Պատահել են նաև դեպքեր, երբ թուրքական բարեգործական կազմակերպությունները սենդամթերք են հասցրել հայկական դիմադրության կետերին: Այդ ժամանակի թուրքերի արարքները առակի կարգ էին անցել ոչ միայն ծայրահեղ ստորություններով, այլև սրտահույզ մեծահոգությամբ ու բարությամբ: Բայց, ափսոս, որ բարի կամքի մարդիկ դրժբախտաբար չէին կարող ազդել իրադարձությունների ընթացքի վրա:

Կոտորածից զերծ չմնացին նաև պոլսահայերը, այդ թվում նաև հայ գրողների, նկարիչների ու երաժիշտների այն պանծալի աստղաբույլը, որը փառաբանեց սուլթանական Թուրքիայի անունը ամբողջ աշխարհում: **Նրանցից ոչ մեկը կենդանի չմնաց:** Տեղահան արվեցին հայկական որբանոցները, նույնիսկ մանկամսուրները՝ ամբողջ սպասարկող անձնակազմի հետ միասին, հայկական հիվանդանոցները՝ առանց խնայելու մահամերձներին, ծերանոցները: Բոլորին էլ քշում էին նույն ուղղությամբ՝ դեպի սիրիական անապատը: Ով ուժ չուներ հասնելու, սպանվում էր ճանապարհին: Հանճարեղ հայ կոմպոզիտոր և ժողովրդական երգեր հավաքող Կոմիտասը տեսնելով իր շուրջը կատարվածը՝ խելագարվեց... և սկսեց երգել: Խելագարի աննման ձայնը գրավեց մոտով անցնող դեսպանի ուշադրությունը և նա հիվանդին խլեց դահիճների ձեռքից: Դժբախտը ապրեց ևս 20 տարի, բայց որպես խելագար: Նա մահացավ 1935 թ. Փարիզի հոգեբուժական հիվանդանոցներից մեկում: Հետևաբար այս տարի նշում ենք նաև նրա ողբերգական մահվան հոբելյանը:

Իսկ անմեղ դատապարտվածների խառնիխուռն բազմությունները շարունակ գնում էին, գնում... Եվ ահա մի օր էլ անջատեցին նրանցից չափահաս տղամարդկանց և անչափահաս, բայց արդեն բավական մեծ տղաներին, իսկ կանանց ու երեխաներին քշեցին առաջ՝ մինչև Դեր-Զորի ու Մեսքենեի միջև գտնվող զարհուրելի ճամբարները: Այդ տղամարդկանցից կազմեցին «աշխատանքային ջոկատներ» ռազմական ճամբարներ կառուցելու համար: Հետո էլ ճանապարհի որոշված հատվածը կառուցելուց հետո մեկիկ մեկիկ ոչնչացնում էին այդ ջոկատները:

Նույն բախտին արժանացան թուրքական բանակի հայ զինվորները, որոնք այնպես հերոսաբար փրկեցին Էնվեր փաշային: Առանձին հայկական գնդեր նախօրոք զինաթափում էին, հետո քշում ճանապարհներ կառուցելու և աշխատանքն առաջ գնալու հետ մաս-մաս գնդակահարում էին:

Չնայած անլուր դժվարություններին ու տառապանքներին՝ կանանց մի մասը հասավ ճամբարները, ուր և մնաց մինչև շոգից, սովից ու ծարավից մեռնելը: Նրանց համար բարաքներ էին կառուցել չոր անապատում:

Այն ժամանակ, երբ սպան, որի մասին խոսում է Վերֆելը, մուսուլման հոգևորականների ժողովում պատմում է, թե ինչպես կմախքացած հայ կանայք իր ձիու թրիքից հանում էին գարու չմարսված հատիկներն ու ուտում, այդ նույն ժամանակ Թալեաթ բեյը պառլամենտում ասում էր իր հետևյալ կայենական խոսքը, որ ընդմիշտ կմնա պատմության մեջ:

Սակայն դեռ հայեր կային վերոհիշյալ դիմադրական կետերում և ռուսական ռազմաճակատից այն կողմ: Իսկ այդ

ռազմաճակատը առաջացավ դեպի Թուրքահայաստանի խորքը: Բայց ռուսական հեղափոխության ժամանակ այդ ճակատը ճեղքվեց և թուրքերը ներխուժեցին Ռուսահայաստանի խորքը և Ադրբեջան՝ անխնա կոտորելով հայ բնակչությանը, իսկ լեռնային գետեր անցնելիս հայերի դիակները նետում էին թընդանոթների անիվների տակ, ինչպես գրում է լեհ գրող Ստեֆան Ժերոմսկին: Նուրի փաշայի երեք դիվիզիայից կազմված բանակը առաջանում էր Բաքվի ու նավթահանքերի ուղղությամբ, ուր գտնվում էր հայկական ամենամեծ բանակներից մեկը:

Այստեղ խոսքը տալիս եմ կատարյալ թուրքամոլ Ստեֆան Ժերոմսկուն, որին ոչ մի դեպքում չի կարելի կասկածել, թե համակրում է հայերին: Ահա Բաքվի պատկերը՝ քաղաքը թուրքերի կողմից նվաճելուց հետո ըստ Ժերոմսկու. «Առանց չափազանցության և որևէ փոխաբերության պետք է ասել, որ արյունը հոսում էր ոչ միայն առուներով, այլև գետնի երեսին. ասես բազմաճյուղ մի գետ հոսում էր դեպի ծով ու ներկում ջինջ ալիքները: Մորթոտված հայերի դիակները նետում էին ծով. բեռնատար մեքենաներն ու սայլերը դիակները հասցնում էին ծովափ: Կասպից ծովի հեռավոր ափերից այդտեղ էին շտապում հեշտ սնունդ ճարելու հոտն առած ձկները: Իսկ ծովը չէր ուզում ընդունել ու պահել մարդկային զոհերը: Ջինջ ալիքները իրենց անդադար ծփանքով դիակները նորից ու նորից ափ էին շպրտում: Հարկ եղավ թաղել դրանք հողի մեջ՝ վարակից խուսափելու համար... Ցեզարի Բարիկային (վեպի հերոսին) և ուրիշներին քշել էին անհաշիվ դիակները թաղելու համար...

Երկու եզ լծած հսկայական սայլը դանդաղ բարձրանում էր բլուրն ի վեր հարյուրավոր այլ սայլերի ետևից՝ գնալով հեռու, Բաքվի արվարձաններից էլ հեռու... Սայլերը լի էին սպանվածների դիակներով: Սայլերի շարանների կողքով դանդաղ քայլում էր մի թուրք զինվոր՝ հրացանն ուսին, կարգ պահպանելով այդ մի քանի տասնյակ հազար մարդկանց թաղման թափորում...

Օրեր շարունակ Բարիկան ստիպված էր կատարել սայլապանի ու գերեզմանափորի պարտականությունը: Դիակները չոր խոտի կամ գոմաղբի նման երկաթե եղաններով շպրտում էր նա խոր սայլերի մեջ... միայն թե ջանում էր չնայել... չտեսնել...

... Եվ սակայն մի օր էլ, որի մասին այժմ խոսելու ենք, երիտասարդ սայլապանը չկարողացավ չնայել մի դիակի: Սայլի խորքից կարծես տղամարդկանց անհամեստ դիակներից սեղմված՝ երևում էր մի դեռատի կնոջ դիակ, որ բեռնված սայլի բարձունքից կախվել էր ձախ անիվի վրա: Թվում էր, թե աղջկավարի, ինչպես կյանքում է լինում, նա աշխատում էր դուրս պրծնել օտար մարմինների մոտիկությունից կամ գուցե նրանց գրկից: Փարթամ, սև վարսերը հասնելով գետնին՝ քսվում էին ճանապարհի արյունոտ փոշուն: Աջ ձեռքը հենված էր ձախ անիվին և գերլարվածությունից ուժասպառ՝ հասել էր անիվի խիտ ճաղերին... Թվում էր, թե հանգուցյալը մատներով խաղացնում է ոչ թե անիվի ճաղերը, այլ մի անհայտ նվագարանի նուրբ լարերը... Նրա մարմինը, այտերը, կզակը, շրթունքներն ու վիզը ներդաշնակության հրաշալիք էին: Փոքրիկ բերանը բաց էր, իսկ լեզուն սարսափելի ճիչի քարացած պատկերն էր կարծես... ու թվում էր, թե այդ ճիչը շարունակվում է դեռ թռչել այդ բերանից... թեև այլևս լսելի չէր: Անեծքի նույն ճիչը կարծես պարունակում էին և բաց պարանոցը, և փոքր, աղջկականորեն նրբակերտ մերկ կրծքերը: Ասես ճչում էր ամբողջ մարմինը. «Ինչո՞ւ համար նահատակեցիք ինձ, ստոր մարդիկ»:

— Զգիտեմ,— տնքաց սայլապանը: Դպրոցում սովորեցնում էին անունները այն բռնակալների, որոնք իրենց արարքներով խայտառակեցին մարդկային բնությունը և որոնց անցնելու տեղում խոտն անգամ չէր բուսնում: Բայց եղել է արդյոք երբևէ ավելի ստոր մի սերունդ, քան իմն ու քոնն է, նահատակ աղջիկ: Եղե՞լ է արդյոք երբևէ, որ չորս օրվա մեջ ոչնչացվի յոթանասուն հազար մարդ: Աշխարհը երբևէ տեսե՞լ է արդյոք գետնի վրա դիզված սպանված մարդկանց այսպիսի կույտեր:

«Մի մոռացիր, երիտասարդ կառապան, իմ վիրավորանքը, իմ դժբախտությունը: Լավ դիտիր մարդկանց ոճրագործությունը: Զգուշացիր, հիշիր»:

Բայց չէ որ Բաքվի կոտորածը, որ այնպես ցնցեց հայերի նկատմամբ անբարյացակամորեն տրամադրված Ժերոմսկուն, որը 75 հազար մարդկային էակներ լափեց, հայ պատմիչները

համարում են լոկ մի փոքր միջադեպ մարդկային պատկերացման սահմանները գերազանցող հայոց ողբերգության ընդհանուր ֆոնի վրա:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում (Էգեյան ծովի Լեմպոս կղզի) Թուրքիան անձնատուր եղավ: Արաբական երկրների տերիտորիայի վրա ուրվագծվեցին նոր պետություններ և ապագա մանդատային երկրներ, որոնք հետո բաժանվեցին Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի միջև: Պատմական Հայաստանի տերիտորիայի վրա սկսեց ստեղծվել անկախ հայկական պետություն, որն ուժեղ հովանավորներ գտավ հանձինս ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի և Ֆրանսիայի բարձրաստիճան պետական գործիչ Ժորժ Կլեմանսոյի:

1920 թ. օգոստոսի 10-ի ստորագրված Սևրի պայմանագրով, որի տակ իրենց ստորագրություններն են դրել Անգլիան, Ֆրանսիան, Ճապոնիան և Իտալիան, իսկ մանր պետություններից՝ Հայաստանը, Բելգիան, Չեխոսլովակիան, Հունաստանը, Հիջազը, Հարավսլավիան, Լեհաստանը, Պորտուգալիան և Ռումինիան մի կողմից, մյուս կողմից էլ՝ սուլթանական Թուրքիան, Հայաստանին հատկացվեց մի ընդարձակ տերիտորիա՝ պատմական Հայաստանի գրեթե ամբողջ հողերը, որը փոքրաթիվ, այնքան սոսկալիորեն արյունաքամ եղած ժողովուրդը ի վիճակի չէր ոչ իրացնելու, ոչ էլ պաշտպանելու: Դա միևնույն էր, թե մատն անգամ շարժել չկարողացող մահամերձին մեկը նվիրի մեկ միլիոնանոց բանկային չեկ: Բախտի մի չար հեգնանքով թուրքերը պարգևատրվեցին ազգասպանության համար, իսկ հայերը պատժվեցին կոտորված լինելու համար:

Սևրի դաշնագիրը մնաց թղթի վրա: Փաստորեն Հայաստանը չտիրեց իրեն հատկացված ընդարձակ հողերին: 1920 թ. Կլեմանսոն հեռացավ քաղաքական ասպարեզից, իսկ ԱՄՆ-ի կոնգրեսը, որ երբեք չէր լսել Հայաստանի անունը, չհաստատեց այդ պետությունը վերածնելու համար իրենց պրեզիդենտի կազմած նախագիծը և նույնիսկ չճանաչեց Հայաստանը որպես պետություն: Ֆրանսիան այն դարձրեց հեղափոխական Ռուսաստանի դեմ ուղղված իր հարձակումների ելակետ, դադարեց հետաքրքրվել նոր պետությամբ, հենց որ քաղաքացիական պատերազմի ճակատը Ռուսաստանում շարժվեց դեպի հյուսիս: Ու դարձյալ մի բուռ հայեր կանգնեցին արևմուտքից եկող կատաղած թուրքերի ու արևելքից շարժվող նրանց մուսուլման դաշնակից ադրբեջանցիների դեմ առ դեմ: Մոտենում էր հայկական անկախ պետության կարճատև պատմության վերջին գործողությունը, երբ կարմիր զորքերը գրավեցին Բաքուն և ամբողջ Ադրբեջանը, իսկ թուրքերը Սևրի դաշնագրից հրաժարվելով՝ գրավեցին Թուրքահայաստանի բոլոր հողերը՝ սպառնալով նույնիսկ Ռուսաստանի, Ղարսի ու Արդահանի մարզերին: Այդ ժամանակ Թուրքիայում տեղի էր ունենում Քեմալ փաշայի «ժողովրդական հեղափոխությունը» և թուրքական նոր կառավարությունը շահագրգռված էր Ռուսական ֆեդերացիայի հետ բարեկամություն հաստատելով, որովհետև օգնություն էր սպասում այնտեղից, իբր թե միջազգային իմպերիալիզմի ու համաշխարհային կապիտալիզմի դեմ պայքարելու համար, ինչպես հեղինակավորապես հավատացնում էր:

Ստանալով այդ օգնությունը՝ Թուրքիան նորից հարձակվեց Հայաստանի վրա... որովհետև, թուրքերի կարծիքով, այդ անկախ Հայաստանը որպես համաշխարհային իմպերիալիզմի ամրոց և միաժամանակ ամբողջ աշխարհի հակահեղափոխության բույն, իբր թե պիտի խանգարեր հեղափոխության տարածումը Արևելքում և Արևմուտքում: Հայկական պետության ոչնչացումը Երևանում, ըստ թուրքերի, պետք է ապահովեր համաշխարհային հեղափոխության հաղթանակը կապիտալի նկատմամբ: Եվ... գրոհն սկսվեց:

Ուժ չունենալով դիմադրելու Կարա-Բեքիր փաշայի «հեղափոխական բանակի» (թուրքական) հարվածներին և 11-րդ կարմիր բանակի (ռուսական) վերջնագրերին՝ միջազգային իմպերիալիզմի խեղճ «ամրոց» մանրադիտակային Հայաստանը անձնատուր եղավ, իսկ համաշխարհային իմպերիալիզմի գլխից մազ անգամ չընկավ:

Ճիշտ է, խորհրդային իշխանության շնորհիվ, հայ ժողովրդի բախտից, Հայաստանի մի փոքրիկ մասը փրկվեց ազգասպանությունից: Բայց Խորհրդային Ռուսաստանը անհասկանալի առատաձեռնության պոռթկումի պահին միանգամից իր նոր դաշնակից Թուրքիային նվիրեց Ռուսահայաստանի կեսը՝ թուրքերի կողմից նոր գրավված Ղարսի ու Արդահանի մարզերը՝ Արարատ լեռան հետ միասին, որը պատմության մեջ երբեք թուրքերին չի պատկանել: Այսպիսով դրանից հետո, Սուրբ լեռը, որը պատկերված է Խորհրդային Հայաստանի

գերբի վրա, և երևում է մանրադիտակային հանրապետության ամեն մի անկյունից, գտնվում է նրա սահմաններից դուրս:

Զարհուրելի վեցամյակից հետո (1915—1921) հայ ժողովուրդը 5 միլիոնից հասել է 2 միլիոնի, իսկ իրենց ձեռքը մնացած փոքրիկ, անբերրի ու լեռնային հողապատառը, որի տարածությունը Բելգիայից էլ փոքր է, ի վիճակի չէ տեղ տալու մեծ ժողովրդի հրաշքով ողջ մնացածներին: Այսօր աշխարհում կա 4 միլիոնից ավելի հայ: Եթե չլիներ 1915 թ. մեծ եղեռնը և դրան նախորդող մյուս ջարդերը, ապա հիմա ավելի քան 10 միլիոն հայ կլիներ: Չէ որ թուրքերը ոչ միայն 3 միլիոն կենդանի հայ սպանեցին, այլև նրանց հետ միասին տակավին սաղմնավորվելուց առաջ չծնվաց 6 միլիոնի կյանքը:

Հայկական հարցը ահա 50 տարի է մոռացության է տրված:

ԵՐՐՈՐԴ ՆԱՄԱԿ ԻՄ ԱՆԾԱՆՈԹ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ*

(որի մեջ էստաֆետը հանձնում եմ նրա ձեռքը)

Իմ երկու նախորդ նամակներում պատմեցի քեզ այն մասին, թե մարդիկ ինչ չարիքներ կարող են հասցնել ուրիշ մարդկանց կամ ուժեղ ժողովուրդը՝ ավելի թույլ ժողովրդին: Հիմա կասեմ, թե ինչի համար և ինչ նպատակով եմ գրում քեզ այս նամակները և ինչ եմ սպասում քեզնից:

Եթե համբերությամբ կարդացիր առաջին երկու նամակներս՝ սկզբից մինչև վերջ, ուրեմն դրանով իսկ արդեն մի բան արեցիր հայկական հարցի համար, որովհետև դրանով ճանաչեցիր այն ու կյանքի տարբեր պարագաներում վկայելու ես ճշմարտության օգտին:

Իսկ եթե այդ նամակներս կարդալուց-վերջացնելուց հետո մտածեցիր. «Այդպիսի բաները մոռանալ չի կարելի» և ուրիշներին տվեցիր կարդալու, ուրեմն արդեն շատ բան ես արել: Կամ գուցե կարդալուց հետո ամոթի զգացում ապրեցիր՝ մարդ լինելուդ ամաչեցիր, քանի որ նախ և առաջ քեզ են ուղղված այդ նամակները: Դա զարմանալի չէ և ոչ էլ պատահական, քանի որ 50 տարի հետո հայկական հարցը դադարել է սոցիալական քաղաքական հարց լինելուց և վերածվել է մեր բարոյական դարի առաջնակարգ մի խնդրի:

Եվ այդ բնորոշման մեջ է թաքնված հակիրճ պատասխանը բոլոր նրանց, ովքեր ինձ կառարկեն, թե հայերը իրենք պետք է փոխհատուցում պահանջեն իրենց կրած վիրավորանքների համար և իրենք պայքարեն իրենց հայրենիքի անկախության համար: Վիրավորանքներ են լինում, որոնց համար տուժած կողմը ինքը դիմում է դատարան և հասնում արդարության: Բայց կան նաև այնպիսի ոճրագործություններ, մեծ մասամբ մարդասպանություններ, որոնց արդար փոխհատուցման համար աշխատում է սպանվածին ու նրա ընտանիքին բոլորովին օտար մարդը՝ դատախազը: Նա հանդես է գալիս որպես ոտնատակ արված բարոյական օրենքի պաշտպան: Դրանք այսպես կոչված հասարակական մեղադրանքի հարցեր են:

Եթե մի մարդու տանջամահ անելու համար գոյություն ունի հասարակական մեղադրանքի արդար իրավունք, ապա ինչու այդ իրավունքը մերժվում է ամբողջ նահատակված ժողովրդի՝ հրաշքով կենդանի մնացածների ժառանգներին:

Ոտնատակ արված բարոյական օրենքների դատապաշտպանն ենք մենք, ու կլինենք այնքան ժամանակ, մինչև որ թուրքական կառավարությունը չփոխհատուցի հայերին 50 տարի առաջ կատարված ժողովրդասպանության համար, այսինքն տիեզերային մասշտաբով ոճրագործության համար, կամ մինչև որ դատապարտվի հատկապես դրա համար ստեղծված միջազգային դատարանի կողմից: Իսկ այն փաստը, որ մենք հայ չենք, թույլ է տալիս մեզ դատապարտել առանց կողմնապահության՝ մեղքի ու վիրավորանքի կշեռքի ստույգ ցուցումների հիման վրա:

Իրավունք չունեմ հուշելու քեզ, հարգելի ընթերցողս, որևէ կոնկրետ անելիք: Հավանական է, որ դու ավելի մեծ նախաձեռնությամբ ես օժտված, քան ես, և անպայման ունես ավելի բարենպաստ օբյեկտիվ պայմաններ:

Իսկ եթե դու քահանա ես կամ հոգևոր առաջնորդ, ապա պատմիր գոնե քո հավատացյալներին այդ ցավոտ հարցի մասին, որը խայտառակեց մեր հայրերի սերունդը ու ամենավեհ խնդիր է դարձել մեր սերնդի համար: Ու սովորեցրու նրանց

* Տե՛ս «Դպրություն» թերթի 1990 թ. ապրիլի 20-ի և 24-ի համարները:

այս պարզ աղոթքը, որը պարունակում է իր մեջ հայկական հարցի իրական բովանդակությունը իր ամբողջությամբ.

«Ով Տեր Աստված, ողորմածությունդ ցույց տուր Արևմտյան Հայաստանի տարաբախտ ժողովրդին, որպես պարգև նրա կրած անչափ չարչարանքների համար և թույլ տուր, որ նրա հաջորդ սերունդները խաղաղ ու ապահով ապրեն և աշխատեն իրենց հայրենի հողում»:

Այս աղոթքը ես ժամանակին ուղարկեցի Ամերիկա 900 00 մատյաններին... (անընթեռնելի)..., բայց գուցե չեն ստացել, քանի որ պատասխան չստացա նրանցից:

Եթե ուսուցիչ ես դու, սիրելի ընթերցող, պատմիր գոնե մանուկներին այդ հարցի մասին, պատմիր աննման գեղեցկությամբ ծաղկող երկրի մասին, որը հետո վերածվեց ածխացած ավերակների, պատմիր հնագույն հոյակապ քաղաքների մասին, որոնք մշակույթի մեծ կենտրոններ են եղել, իսկ այսօր հիշեցնում եմ պղծված գերեզմանոցներ. պատմիր գեղեցիկ և իմաստուն ժողովրդի մասին, որն այդքան շատ բան է տվել մարդկությանը, պատմիր, որ այսօր ապրող սերնդի աչքի առաջ նրանից բարբարոսաբար խլեցին իրենց հայրենի հողը 3 միլիոն մարդկանց կյանքի հետ միասին. խլեցին նրա համար միայն, որ դարձնեն ավերակ, աղբանոց, անապատ:

Եթե կին ես, ապա ինքդ գիտես, թե ինչ կարող ես անել. ու կկարողանաս անհամեմատ ավելի շատ, քան մենք՝ տղամարդիկս:

Եթե գրող ես կամ հրապարակախոս, արա այն, ինչ որ ես եմ անում, միայն թե արա շատ ավելի, շատ ու շատ ավելի լավ, քան ես եմ անում:

Իսկ եթե հասարակական գործիչ ես, հիմնիր հայ ժողովրդի բարեկամների տեղական ընկերություն, որովհետև այդպիսի ընկերության հնարավորության սահմանները շատ մեծ են՝ անկախ նրանից, թե որտեղ է գտնվում նա: Պատմությանը հայտնի են դեպքեր, երբ փոքրիկ քաղաքը դառնում էր մեծ իրադարձությունների կենտրոն, այնպիսի իրադարձությունների, որոնք խորը հետք են թողել պատմական նշանակություն ունեցող շատ հարցերի բախտի վրա: Քո կուսակցության միջոցով կամ քո ընտրական տեղամասի պատգամավորների միջոցով, պատմության մեջ ամենամեծ ոճիրներից մեկի 50-ամյա հոբելյանը անպայման պետք է օրակարգի քննարկման հարց դառնա քո բարձրագույն ներկայացուցիչների ժողովում՝ լինի դա համայնքների պալատ, կոնգրես թե պառլամենտ:

Աշխատիր, որ կինոնկարը ըստ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» գրքի, անպայման ցուցադրվի քո տրամադրության տակ եղող կինոթատրոններում, հեռուստացույցով: Ձեռնարկիր այս իմ նամակների տպագրությունը քո տպարաններում ու ֆիլմի և այս նամակներիս հիման վրա կազմակերպիր հարցաթերթեր հետևյալ թեմայով.— Արևմտյան Հայաստանը պետք է անկախ դառնա և ինչ պետք է անել այդ ուղղությամբ: Մի խոսքով, ինքդ ավելի լավ գիտես, թե ինչ ճանապարհներով ամենից ավելի հեշտ ու արդյունավետ կարելի է հասնել քո նահանգի, դեպարտամենտի կամ ամբողջ երկրի հասարակական պայծառ կարծիքին՝ հաշվի առնելով պրոֆեսիոնալ, կուսակցական և կանանց կազմակերպությունները: Անհրաժեշտության դեպքում անձամբ դիմիր ամեն տեղ, ուր որ հարկավոր է, ընդհուպ մինչև երկրի պետության ամենաբարձր օրգանները:

Հիշիր, որ նախ և առաջ ինչ գնով էլ լինի անհրաժեշտ է խախտել կարծես պայմանավորված լռությունը հայկական հարցի շուրջը, անհրաժեշտ է նորից տեղից շարժել այն, գոնե մի քիչ, գոնե մի քանի սանտիմետր: Այսօրվա հանգամանքներն ու ժամանակները նպաստում են լավաների գոյացմանը, իսկ լավայի առաջացումը միշտ էլ սկսվում է այդպիսի գրեթե անկատելի տեղաշարժերից: Այսօր աշխարհի բարի կամքի տեր բոլոր մարդկանց սրբազան պարտքն է ինչ գնով էլ լինի, թույլ չտալ, որ նորից մոռացության մատնվի հայկական հարցը, և աշխատել ավելի ակտուալ դարձնելու այն թե նրա բարեկամների և թե թշնամիների գիտակցության մեջ:

Եթե կարողանաս հուզել հասարակական կարծիքը քո տերիտորիայում, դա չի վրիպի կենտրոնական կառավարության ուշադրությունից և նա առնվազն գաղտնի կզգուշացնի Թուրքիայի դեսպանին, որ հասարակությունն անհանգստացած է նրանով, որ Թուրքիան 1915 թ. ամենաողբերգական իրադարձությունների 50-րդ տարեդարձին, ոչ մի քայլ չի անում հայերի հետ հաշտվելու ուղղությամբ և միաժամանակ համաշխարհային մասշտաբով հասարակական կարծիքը հանգստացնելու համար:

Զարհամարհես բողոքի ձևերից ոչ մեկը: Քո կառավարու-

թյան ամեն մի, նույնիսկ ամենաքաղաքավարի միջամտություն, կտիպի Թուրքիային որոշակի, թեկուզ և խուսափողական դիրք բռնել:

Չգիտեմ, թե արևմտաեվրոպական լեզուներով թարգմանվելուց հետո ինչ լեզվով և որ երկրում ամենից առաջ լույս կտեսնեն իմ այս նամակները: Այս իմ «Ճանապարհորդությունը անհայտի մեջ» **(թե՝ դեպի անհայտը— Մ. Գ.)** մեծ ինտելեկտուալ արկածի հմայքն ունի ինձ համար, բայց միաժամանակ զրկում է հնարավորությունից խոսելու և գրելու տվյալ կոնկրետ երկրի կոնկրետ լեզվով: Կանխատեսում եմ սակայն, որ դա կլինի Արևմտյան աշխարհի մեծ և հարգելի տերություններից մեկը, որն այս կամ այն կերպ Թուրքիային դաշնակից է: Գուցե կասկածելի թվա, թե արդյոք այդպիսով մի տերություն կկամենա՞ թեկուզ ամենագաղտնի ձևով իր դաշնակցին հիշեցնել նրա կողմից այդպես սոսկալի վիրավորված ժողովրդի իրավունքի մասին:

Այս հարցը պահանջում է մանրակրկիտ և խորաթափանց բացատրություն: Այս նամակներս հայկական հարցի շուրջը տպագրված իմ առաջին գործերը չեն: Դրանց նախորդել են երկու հոդված: Դրանցից մեկը «Նամակ իմ հին թուրք ծանոթին» 1961 թ. աշնանը լույս է տեսել լեհական պարբերական մամուլում, իսկ հետո թարգմանվել է հայերեն ու անգլերեն: Այսուը՝ հենց նոր գրված «Բաց նամակ Ու Տանին» հոդվածն է, որի մեջ Ու Տանին ներկայացնում եմ հայկական հարցի լուծման կոնկրետ նախագիծը, որի մասին մանրամասն խոսելու եմ ուրիշ տեղ, իսկ այժմ վերադառնում եմ «Նամակ իմ հին թուրք ծանոթին» հոդվածիս:

Այդ հոդվածում առաջարկում եմ թուրքերին, որ իրենք լինեն իրենց դատավորը, այսինքն իրենք գնահատեն իրենց հայրերի կողմից կատարված ժողովրդասպանության ամբողջ զարհուրանքը և տղամարդուն վայել ձևով դրանից հանեն համապատասխան եզրակացություններ: Ըստ որում, ենթադրում էի, թե իրենք կգտնեն անգեն ժողովրդի 60 տոկոսի սպանության համար փոխհատուցման համապատասխան ձևեր. ըստ որում այդ խայտառակության բիծը մաքրելու նախաձեռնությունը պետք է, իմ կարծիքով, պատկաներ հենց իրենց՝ թուրքերին՝ առանց համաշխարհային հասարակական կարծիքի ճնշման:

Վերոհիշյալ նամակս լի էր հավատքով թուրք ժողովրդի պատվի ու ազնվության նկատմամբ: Բայց ինչ օգուտ, քանի որ մինչև օրս այդ նամակիս չպատասխանեց ոչ մի թուրք: Սակայն գուցե ոստիկանական խոչընդոտների պատճառով այդ նամակը չի հասել Թուրքիայի լայն հասարակությանը: Ավաղ, այլ ճանապարհներով նրան հասցնելու հնարավորություն չունեմ:

Համենայն դեպս, այդ նամակիս նպատակն էր հիմնավորել այն տեսակետը, թե այսօրվա թուրքական Հայաստանի գոնե մեկ մասի ժողովրդական ազատագրումը պատմական անհրաժեշտություն է, որը Թուրքիան ներկա իրադրության մեջ չի կարող անտեսել, քանի որ դա մեր աչքի առաջ ամբողջ աշխարհում տեղի ունեցող **ապագաղութացման** օջախներից է **(մեջբերում «Իմ հին թուրք ծանոթին» նամակից՝ անգլերեն— Մ. Գ.)**:

Ինչպես վերոհիշյալից երևում է, թուրքական Հայաստանի գեթ աննշան մասի ազատագրման համար պայքարը բնավ չի հանդիսանում թուրք ժողովրդի կամ թուրք կառավարության դեմ ուղղված որևէ թշնամանք: Դա ուղղակի պատմական արդարության պահանջ է: Ըստ որում, այստեղ կշեռքի երկու նժարների վրա դրվում են միանգամայն անհամեմատելի արժեքներ. հայերի համար դա կյանքի խնդիր է, թուրքերի համար՝ միայն մի փոքր կտոր գրեթե անմարդաբնակ ու վատ յուրացված հողի կորուստ, որի ընդհանուր մակերեսը, ըստ Ու Տանին ներկայացված իմ նախագծի, չի գերազանցում 50 հազ. քառ. կմ.: Ըստ որում, վերականգնված նոր Արևմտյան Հայաստանի սահմանները կանցնեին այնպես, որ Թուրքիային հնարավորություն կտրվեր առաջվա պես հասնել Վանա լճին և ընդհանուր սահման ունենալ Իրանի և նույնիսկ Խորհրդային Միության հետ, թուրքական տերիտորիայի վրա թողնելով Էրզրումը և երկաթուղային հանգույց Պասինները:

Հայերը այնքան քիչ են պահանջում, չնայած, որ իրենց կողմն են Աստվածային և մարդկային իրավունքը, **Նյուրնբերգյան Միջազգային դատարանի որոշումը**, որը ժողովրդասպանությունը ճանաչեց որպես ամբողջ մարդկության դեմ ուղղված ոճիր, ինչպես նաև Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 14. 12. 1960 թ. և 27. 11. 1961 թ. որոշումները գաղութակալության լիակատար վերացման մասին:

Քիչ են պահանջում հայերը, չնայած որ ունեցել են 2,5

հազարամյա սեփական պետականություն այժմ պահանջածից մի քանի անգամ ավելի մեծ տերիտորիայի վրա (իսկ նախահայկական Ուրարտու պետության հետ միասին լրիվ 3 հազար տարի):

Այդքան քիչ են պահանջում, չնայած որ աշխարհին մատուցված իրենց ծառայությունները անհամեմատ մեծ են, քան թուրքերինը, որոնք, թեև, անկասկած, ունեն իրենց դրական կողմերը, այնուամենայնիվ աշխարհին բերում էին միայն մահ և ոչնչացում:

Քիչ են պահանջում հայերը, չնայած, որ թուքերը իրենց տիրապետության մի քանի դարերի ընթացքում դուրս քաշեցին հայ ժողովրդի համարյա ամբողջ արյունը: Այնուամենայնիվ, եթե 50 տարի առաջ թուրքերը չիրագործեին հայերի կոտորածը, հայերի ընդհանուր քանակը այսօր կանցներ 10 միլիոնից, իսկ եթե դրան նախորդող կոտորածներն էլ չլինեին ու թուրքերը չգողանային հայ աղջիկներին ու տղաներին, որ նրանք անում էին երկու դարի ընթացքում (ինչի մասին վերևում արդեն խոսվեց), ապա հայերը այսօր կլինեին ոչ թե չորս, այլ տասը միլիոնանոց ժողովուրդ:

Այդքան քիչ են պահանջում, չնայած որ իրենց կողմն է բոլոր նոր ազատագրված ժողովուրդների համակրանքը, որի հետ Թուրքիան ուզած-չուզած ստիպված է հաշվի նստելու:

Այդքան քիչ են պահանջում, չնայած որ աշխարհի բոլոր գաղութների և բոլոր ճնշված ժողովուրդների ազատագրման ժամը հասել է:

... Իսկ կա՞ արդյոք ուրիշ այնպիսի ժողովուրդ, որն այդքան անարգված լիներ: Եթե Թուրքիան ցուցաբերի գոնե մի քիչ բարի կամք, ապա հայերի տերիտորիալ պահանջները բավարարելը ոչ մի դժվարություն չի հարուցի, մանավանդ որ հայերը չեն խուսափում վճարելու իրենց պահանջած տերիտորիայում թուրքերի կողմից ստեղծած անշարժ արժեքների և տեխնիկական կառուցումների համար: Խոսք չի կարող լինել նաև այն մասին, թե Արևմտահայկական պետությունը երբևէ կսպառնա Թուրքիային ռազմական իմաստով: Չէ որ այդ պետության հիմքում հենց դրված է չեզոքության հիմունքը: Նա չի կարող և երբեք չի մտնի որևէ երկրի դեմ, այդ թվում նաև Թուրքիայի դեմ, ռազմական նպատակներով ուղղված որևէ միության մեջ:

Թող Թուրքիան չարդարանա նրանով, որ գոյություն ունի արդեն Խորհրդային Հայաստան ու իբր ուրիշ Հայկական պետության ստեղծումն ավելորդ է: Հայկական հանրապետությունը փոքրիկ, անբերրի, լեռնային երկիր է (29.800 քառ. կմ.), որն ի վիճակի չէ ավելի շատ բնակիչներ տեղավորել, քան ունի այսօր (1,9 միլիոն, որոնցից 1,5 միլոն հայ):

Թող Թուրքիան չարդարանա նաև նրանով, թե հայ պանդխտությունը այնքան մեծ չէ, որ իրավունք ունենար հուսալու որևէ տերիտորիայի մասին: Իսկապես որ 50 տարի առաջ տեղի ունեցած ժողովրդասպանության պատճառով այժմ հայերի ընդհանուր քանակը 6 միլիոնով պակաս է, քան պետք է լիներ: Այնուամենայնիվ Խորհրդային Հայաստանի սահմաններից դուրս՝ ԽՍՀՄ-ի այլ հանրապետություններում և արտասահմանում նրանք կազմում են 2,5—3 միլիոն և այդքանը բավական է պահանջվող տերիտորիայի՝ 50 հազ. քառ. կմ.-ի վրա բնակեցնելու 50—60 հոգի մեկ քառ. կմ.-ի վրա: Վատ յուրացված և վատ ոռոգված տերիտորիայի համար դա նույնիսկ մեծ խտություն կլիներ, մի քանի անգամ ավելի մեծ, քան այդ տերիտորիայում կա այսօր: (1950 թ. Վանի վիլայեթը ուներ ամբողջ Թուրքիայում գրեթե ամենափոքր խտությունը՝ 8 հոգի մեկ քառ. կմ.-ի վրա, այսօր էլ հավանական է նույնը):

Այն դեպքում, եթե թուրքական կառավարությունը՝ պատասխանելով մեր այս պահանջներին, օգտագործի մաշված, բայց նման դեպքերում հաճախ գործածվող արտահայտությունը, թե «ասպետական» ժողովուրդը թրով ձեռք բերված հողերը կամովին չի զիջում, ես ստիպված կլինեմ պարզաբանելու: Նախ տվյալ դեպքում ոչ այնքան թրով, որքան դանակով, այսինքն ոչ ազնիվ զենքով, որն օգտագործվում է գերազանցապես անզեն մարդկանց վրա հարձակվելիս: Երկրորդ. եթե ասպետական ժողովուրդը ասպետական ոգևորության նոպայի պահին միանգամից ոչնչացրեց 3 միլիոն իր սեփական քաղաքացիների (դրանց մեջ առնվազն 1 միլիոն չափահաս կանանց ու այդքան էլ երկու սեռի մանուկների), ապա գոնե թող հիմա էլ հանգի ասպետական եզրակացության և վճարի 50 տարի առաջվա շվայտության համար, որը կատարելիս ոչ ոք չէր խանգարում նրան: Հապա ո՞վ, գրողը տանի, պետք է վճարի դրա փոխարեն: Տուժած կո՞ղմը: Այսօր Թուրքիայում ղե-

կավարության ղեկին նստած է Արդարության կուսակցությունը: Թող արդար լինի:

Բայց զգում եմ, որ շեղվում եմ բուն թեմայից: Պետք է խոսեի այն մասին, թե կարելի է արդյոք հուսալ, որ այժմ Թուրքիային դաշնակից տերությունները կամենան փչացնել իրենց հարաբերությունները՝ բարձրացնելով նորից այդ արյունալի խնդիրը:

20-րդ դարի երկրորդ կեսին տեղի ունեցավ բազմաթիվ հասկացողությունների վերագնահատում: Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը բոլոր տերությունների համար պարտադիր էր սուրբ եսասիրության օրենքը, որի հիման վրա նրանցից յուրաքանչյուրը պարտավոր էր պաշտպանել միայն և միմիայն իր սեփական ակտուալ շահերը: Այժմ դա արդեն պատմության գիրկն է անցել, եթե, իհարկե, հավատանք նրանց պաշտոնական հայտարարություններին: Ու դրա հիման վրա մարդկությունը լիազորում է նրանց և նրանց ձեռքն է տալիս իր ապահովության բանալիները: Իսկ դա պարտավորեցնում է: Ում պետք է դիմի վիրավորված, նահատակված ժողովուրդը, եթե ոչ նրանց: Իսկ հայկական հարցը այնքան պարզ է: Խլել են անզեն ժողովրդից ամենը, ինչ նա ուներ՝ նրա ամբողջ վաստակը, տները, հողը և ավելին՝ ավելի քան գազանաբար, ուղղակի դիվային ձևերով նահատակել են բոլորին անխտիր, առանց խնայելու սեռ ու տարիք: Անխնա կկոտորեին առհասարակ բոլորին, եթե իրոք որ հրաշքով չփրկվեր չնչին մասը (մոտ մեկ միլիոն թուրքահայերից, որոնք Ռուսաստանի և արտասահմանյան հայության հետ կազմեցին երկու միլիոն): Ու հետո հափշտակված հողը դարձրել են մոխիր ու ավերակ: Բայց խնդիրը այնքան պարզ է: Պատասխանատո՞ւ է արդյոք Թուրքիան իր կատարած ժողովրդասպանության համար: Նյուրընբերգյան Միջազգային դատարանի որոշումների լույսի տակ՝ այո՛: Հասնո՞ւմ են արդյոք հայերին ժողովրդասպանության ճանապարհով իրենցից կողոպտված հողերը: Նույն որոշումների լույսի տակ ու նախ և առաջ աստվածային ու մարդկային իրավունքով՝ այո՛: Եվ վերջապես հասնո՞ւմ է արդյոք Արևմտյան Հայաստանին, ինչպես և այլ գաղութներից յուրաքանչյուրին, լիակատար անկախություն (իհարկե ՄԱԿ-ի Միջազգային ուժերի պաշտպանության ներքո հայերի հայրենադարձությունից հետո), ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 14. 12.

60 թ. և 27. 11. 61 թ. գաղութակալության լիակատար վերացման մասին որոշումների լույսի տակ՝ իհարկե այո՛:

Սակայն ամենից առաջ ո՞ւմ պետք է դիմի աշխարհով մեկ ցրված հայ ժողովուրդը այդ սոսկալի կոտորածի 50-րդ հոբելյանի օրերին: Ո՞ւմ, կրկնում եմ, պետք է դիմի նա, եթե ոչ մեծ տերություններին, թեկուզ և նրանք լինեին Թուրքիայի դաշնակից: Եվ գուցե հենց դրա համար նա պարտավոր է դիմել հենց նրանց հատկապես նրա համար, որ դաշնակից են Թուրքիային, քանի որ միջազգային հարաբերությունների մեջ բարոյականությունն այսօր պարտավորեցնում է ավելի, քան երբևիցե: Վերջապես Գերմանական Ֆեդերատիվ Հանրապետության արդարադատության մինիստրը հայտարարեց, որ համաձայն է ապրել մարդասպանների հետ միևնույն պետության մեջ: Այդ հայտարարությունն առաջ բերեց ամբողջ աշխարհի վրդովմունքը: Արդյոք Արևմտյան տերությունները նույնպես համաձա՞յն են միևնույն շարքում կանգնել այնպիսի պետության հետ, որի վրա ծանրացել է ժողովրդասպանության ոճիրը: Թե իրենց դաշնակցից փոխհատուցում կպահանջեն, այն էլ շատ փոքր փոխհատուցում, որով ոչ միայն Թուրքիայի անունը կմաքրվեր ծանր մեղադրանքներից, այլ նույնիսկ կպայծառացներ այն անհաս փառքով:

Դրա համար հենց որոշեցի գրել քեզ, իմ հարգելի անծանոթ ընթերցող քեզ, որ հավանական է, Արևմուտքի մեծարգո տերություններից մեկի քաղաքացին ես, և հենց քեզ եմ խնդրում շարունակել այս գործը, որին ես նվիրեցի իմ կյանքը:

Իսկ այժմ ստիպված եմ պատմել, թե ինչպես եմ պատկերացնում ապագա Արևմտյան Հայկական պետությունը այն ձևով, ինչպես որ այն ներկայացրել եմ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Ու Տանին իմ գրած նամակում:

Արևմտյան Հայաստանը հնարավոր է միայն որպես միանգամայն ինքնուրույն պետություն, այսինքն անկախ ինչպես Թուրքիայից, այնպես էլ Խորհրդային Միությունից, մի ոչ մեծ հողակտորի վրա, քան պահանջվում էր Սևրի 1920 թ. օգոստոսի 10-ի պայմանագրով: Հիմնականում նրա միջուկը կկազմեին այն հողերը, որոնք մտնում էին Ցարական Ռուսաստանի կազմի մեջ, Խորհրդային Ռուսաստանի կողմից հանձնվեցին Թուրքիային 1920—21 թթ. (Ղարսի և Արդահանի վիլայեթները): Իսկ մինչև 1914 թ. Թուրքիայի կազմի մեջ մտնող

Արևմտյան Հայաստանի հողերից միայն երկու ոչ մեծ, քիչ բնակեցված և տնտեսական տեսակետից աչքաթող արված տերիտորիաները, մի եռանկյուն, որն ապագա պետության կենտրոնը կմիացնի ծովափին, որի լայնությունը կլինի 25 կմ. (15—16 անգլիական մղոն)՝ ունենալով միայն մեկ ծովափնյա բնակավայր՝ Ռիզեն և մի ուղղանկյուն, որը գտնվում է Թուրքիայի այժմյան արևելյան սահմանի հյուսիսային հատվածի և Վանա լճի ափի արևելյան մասի միջև: (Դրանք այսօրվա Թուրքիայի ամենաքիչ բնակեցված ու ամենավայրի տարածություններն են):

Հայերի կողմից պահանջվող ամբողջ տերիտորիան պետք է կազմի 50 հազար քառ. կմ. (20 հազար անգլ. քառ. մղոն), ըստ որում մինչև 1914 թ. Թուրքիային պատկանող հողերից միայն մոտ 30 հազար քառ. կմ., որ Սևրի պայմանագրով Թուրքիայից վերցված տերիտորիաներից 1/4-ից քիչ ավելին է կազմում:

Արևմտյան Հայկական պետության սահմանների այսպիսի ընդհանուր ուրվագիծը այն անհրաժեշտ մինիմումն է, որ նրա համար կապահովեր առնվազն սուվերենություն: Հակառակ դեպքում, այսինքն՝ ավելի պակաս տերիտորիայի դեպքում, նրա անկախությունը միայն ձևական կարող էր լինել:

Այդ սուվերենության առաջին պայմանն է մուտքը դեպի ծովը. չնայած, որ դա իր համար ավելի շուտ սիմվոլիկ նշանակություն է ունենալու: Այդ նոր պետության անկախության առաջին շրջանում դա պրակտիկ ոչ մի նշանակություն չի ունենալու, քանի որ Ռիզե բնակավայրը ոչ մի կապ չունի թիկունքի հետ, որից նրան բաժանում են բարձր ու վայրի լեռները: Միայն երկաթուղու համար այդ լեռների միջով թունել անցկացնելուց, խճուղի կառուցելուց, ինչպես նաև Ռիզեում նավահանգստային կառուցումներ անելուց հետո (որ այժմ չկա) այդ փոքրիկ բնակավայրը կկարողանա Արևմտյան Հայաստանի համար դառնալ, այսպես ասած, լուսամուտ դեպի աշխարհ:

Իսկ սկզբից նոր պետության գրեթե բոլոր շփումները արտասահմանի հետ պետք է տեղի ունենան հարևան Իրանի միջով: Դրա համար հենց նա պետք է երկար սահման ունենա այդ պետության հետ, որը, իմիջիայլոց, վաղուց ի վեր մեծ բարյացակամություն է ցուցաբերում հայերի նկատմամբ: Իսկ մուտքը դեպի Վանա լիճը, որը հայկական առաջին պետությունների (Ուրարտուի հետ միասին) օրրան է եղել, հայերի համար ունի ավելի շուտ սիմվոլիկ նշանակություն:

Ինչպես երևում է կցված քարտեզից, Ղարսի ու Արդահանի նահանգները ծովափի հետ միացնող եռանկյունը՝ Արդվինի նահանգի հետ միասին կազմում են Թուրքիայի անդրծովյան տերիտորիաները, որոնց նկատմամբ Հայաստանը ոչ մի հավակնություն չունի: Խճուղիների և երկաթուղիների բացակայության պատճառով այժմ այդ տերիտորիաները Թուրքիայի հետ հաղորդվում են միայն առափնյա նավարկության միջոցով: Նույն դրությունը կպահպանվի և հետո, երբ այդ տարածությունը կդառնա Թուրքիայի Անդրծովյան տերիտորիա:

Իմիջիայլոց պետք է ավելացնեմ, որ Արևմտյան Հայկական պետության մեջ մտնող հողերի տնտեսական կյանքի ինտենսիվությունը պարտադրաբար տնտեսական ծաղկում առաջ կբերի հարևան թուրքական տերիտորիաներում, որոնք հայերի համար առևտրի լավ պարտնյոր (ընկեր) կդառնա:

Բացի դրանից Անդրծովյան տերիտորիայի միջով Թուրքիան կպահպանի իր դրացիական կապերը Խորհրդային Միության հետ: Իսկ թուրք-իրանական սահմանի արևմտյան հատվածը առաջվա պես կապահովի նրա կապը Իրանի հետ: Եվ վերջապես լայն մուտքը դեպի Վանա լիճը, որը թուրքերի համար չունի այն սիմվոլիկ նշանակությունը, ինչ հայերի համար, այնուամենայնիվ ունի որոշ նշանակություն իրենց հեղինակության համար: Դա նույնպես նկատի է առնված՝ Արևմտյան Հայաստանի սահմանները գծելիս:

Սրանով վերջացնեմ իմ երկար զրույցը քեզ հետ, իմ անծանոթ ընթերցող: Երանի այս խնդիրը այնքան թանկ դառնա քեզ համար, ինչպես թանկ էր ինձ համար 1961 թվականին, երբ ես հանում էի նրան մոռացությունից: Երանի նա լիակատար իրագործում ստանա՝ անկախ այն բանից, թե մեզնից ով կհասցնի նրան երջանիկ վախճանի:

Վարշավա 86
փ. Ստոլեչնա № 14, բն. 184

Վարշավա
Մայիս, 1977 թ.

ՎԵՀԱՓԱՌ ՏԵՐ*

Ձեզ, որպես ամենամեծ հեղինակությանը, ուղարկում եմ իմ հոդվածը, որ որոշում կայացնեք՝ պե՞տք է, թե պետք չէ տպագրել այն հայկական մամուլում**: Պարզ է, որ հայկական հարցի իմ առաջարկած լուծումը այլ բան չէ, եթե ոչ տակտիկական խաղ, որը հնարավորություն է տալիս Թուրքահայաստանի խնդիրը վերջապես մեռյալ կետից շարժելու: Մինչև որ արևմտահայերի ազատագրական շարժումը, այսինքն՝ թուրքերի ձեռքից իրենց հայրենի հողի ազատագրման համար մղվող պայքարը, միանգամայն չանջատվի, թեկուզ միայն ձևականորեն,— արևելահայերի հանրապետությունից, ՄԱԿ-ը չի ճանաչի նրանց որպես ինքնուրույն սուբյեկտ, չի ճանաչի նրանց լիազորությունը Թուրքիայից իրենց հողը պահանջելու իմնդրում:

Շատ լավ հասկանում եմ, որ առաջարկածս մանևրը նույնիսկ տողերիս արանքում կարդացողների համար հոգեբանորեն դժվար ընդունելի կլինի: Բայց ինչ արած, քանի որ հայկական շրջանի քաոսակուսին այլ լուծում չունի:

Գլուխս հնազանդորեն իջեցնելով Ձեր առջև, Վեհափառ Տեր, համարձակվում եմ խնդրել, որ օրհնեք այդ մեծ ձեռնարկությունը, որը— հավատում եմ անկեղծորեն— պետք է ելակետ դառնա, ու դրանից հետո կսկսվի առանց որևէ ձևական կաշկանդումների մեծ պայքարը՝ Վանի շրջակայքի հողերը ազատագրելու համար:

Ձեր հնազանդ ծառա,
հայերի անկեղծ բարեկամ՝

Բոգդան Գեմբարսկի

---

* Նամակը հոդվածի հետ միասին 1989 թ. աշնանը Վարշավայում Անահիտ Տեր-Ղազարյանին է տրամադրել Գեմբարսկու այրին՝ հայերեն ձեռագիր թարգմանությամբ (հավանաբար թարգմանել է Մ. Գ.-ն):

** Խոսքը վերաբերում է սփյուռքահայ մամուլին:

ՇՐՋԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՌԱԿՈՒՍԻՆ ՈՒՆԻ ԻՐ ԼՈՒԾՈՒՄԸ

Վերջին երեսուն տարիների ընթացքում աշխարհն ապրում է մեծ հատուցումների դարաշրջանը, այն էլ միանգամից այնպիսի մասշտաբով, որ անցած սերունդների ամենամեծ լավատեսներն անգամ երազել չէին համարձակվի: Հնդկաստանի ազատագրումից սկսած այդ հեղեղը առաջ է անցնում Ասիայի, Աֆրիկայի և Խաղաղ օվկիանոսի կղզիների միջով՝ ազատություն վերադարձնելով ոչ միայն ազատության կարոտ ժողովուրդներին, այլ նաև այնպիսիներին, որոնք բոլորովին չգիտեն, թե ինչ անեն իրենց այդ ազատության հետ: Դրա հետևանքով գաղութարարների կողմից թողած հողերում երբեմն առաջանում են պետությունների և նրանց առաջնորդների ուղղակի սարսափելի ծաղրանկարներ: Սակայն այդ կեղծ ակորդները չեն նվաստացնում ամբողջ կոմպոզիցիայի վեհությունը: Նրանք մտնում են պատմության «սեփական արժեքների» մեջ և մարդկության կողմից նախօրոք կանխատեսված են:

Մեր ուշադրությունը գրավում է մի այլ հանգամանք, ուղղակի չարախինդ առատաձեռնությունը նրանց, ովքեր լավ տրամադրության նոպայի պահին անկախություն են բաշխում արմատական անուղղելի մարդակերներին՝ Նոր Գվինեայի պապուասներից սկսած, առանց նկատելու, որ այդպիսի անկախության համար վաղուցվանից հերթի են կանգնած ժողովուրդներ, որոնք ոչ միայն արդեն հասունացել են անկախության համար, այլև ունեցել են սեփական պետություն այն ժամանակ, երբ այսօրվա ազատություն բաշխողները դեռևս քարայրներում էին ապրում և անիվը ինչ է՝ չգիտեին:

Արևմտահայություն՝ թուրքահայությունը, միակ կուլտուրական ժողովուրդը չէ, որ մնացել է աչքաթող արված նոր իրականությունը սարքողների կողմից: Բայց այն փաստը, որ հենց նրանց չեն նկատել Միացյալ Ազգերը, հատկապես ցավալի է՝

նկատի ունենալով այդ ժողովրդի հայրենազուրկ մնալու հանգամանքներն ու պայմանները:

Մյուս կողմից՝ դարավոր «հայկական հարցի» լուծման նկատմամբ անբարյացակամությունը որոշ չափով արդարացված է յուրահատուկ իրադրությամբ, որ գոյացավ հայկական հողերում ավելի քան հիսուն տարի սրանից առաջ: Թուրքերի իրավունքները իրենց կողմից զավթած հայկական հողերի նկատմամբ այս պարագաներում ձևականորեն անձեռնմխելի են, քանի որ այդ իրավունքները հարցական նշանի տակ դնելու ամեն փորձի համար նրանք ունեն պատրաստի պատասխան. «Հայերը սեփական պետություն ունեն Խորհրդային Միության սահմաններում: Եթե Հայկական Խորհրդային Հանրապետությունը ունի որևէ պահանջ մեր արևելյան հողերի նկատմամբ, թող մեզ ասի»:

Պարզ բան է, որ ոչ Հայկական Խորհրդային Հանրապետությունը և ոչ էլ Խորհրդային Միությունը,— քանի որ միայն ինքը կարող էր հանդես գալ նման պահանջներով,— այդ քայլը չեն անի, որովհետև դա կհակասեր խորհրդային քաղաքականության գլխավոր գծին, որը տանում է դեպի համագործակցությունը Թուրքիայի հետ և բացառում է հարաբերությունների սրացում իրենց հարավային հարևանի հետ: Այս փոխհարաբերության մեջ թուրքերը կարող են շարունակել հանգիստ քնել:

Դատողություններս կարծեք սկսում եմ շատ հեռվից: Բայց դա անհրաժեշտ է:

Ես շատ բարձր եմ գնահատում հայկական գեղարվեստական գրականությունը, ինչպես այն, որ առաջացել է արևելքում՝ ցարական Ռուսաստանի ստվերում (իսկ հետագայում ԽՍՀՄ-ում), այնպես էլ արևմուտքում (Ստամբուլում, իսկ 1915 թվականից հետո հայգաղթաշխարհում՝ սփյուռքում): Երբեք համամիտ չեմ եղել այն հայերի հետ, որոնք զմայլվում են 19-րդ դարի առաջին կեսի իրենց կլասիկ գրող Խաչատուր Աբովյանի ստեղծագործությամբ: Գտնում էի, որ նա ավելի շատ մեծ վնաս է հասցրել «Վերք Հայաստանի» իր վեպով (բավականին ձանձրալի)՝ շատ վտանգավոր շեղում առաջացնելով հայոց աշխարհաբար գրական լեզվի մեջ: Մեղադրում էի նրան այն բանի համար, որ արևելյան բարբառներից մեկը՝ Քանաքեռի բարբառը, դարձրեց գրական լեզու, փոխանակ շարունակելու արևմտահայ բանաստեղծ Ղևոնդ Ալիշանի ընտրած ճանապարհը: Ղևոնդ Ալիշանը նոր գրական հայերենը դուրս է բերում անմիջապես գրաբարից: Սակայն դրանից առաջ այդ նույնը կյանքն ինքն արեց: Ստամբուլի հայերի խոսակցական լեզուն հիմնականում բավականին մոտ է եղել գրաբարին: Հասկանալի է ապա, որ այնտեղի ընթերցողները Ալիշանի, Պեշիկթաշլյանի և Դուրյանի նոր գրական լեզուն ընդունել են ինչպես իրենց սեփականը: Իսկ հայկական հեռավոր գավառները,— մտածում էի,— պարտավոր էին այդ նույն գրական լեզուն ընդունելու:

Սակայն ինձ տանջում էին որոշ կասկածներ. արդյոք ուշադրությունից չի՞ վրիպել որևէ անչափ կարևոր բան, որը կանխորոշել է Խաչատուր Աբովյանի հանդես գալը ու նրան դարձրել ժողովրդի համար նախախնամության կողմից ուղարկված մեկը, մի խոսքով՝ մեծության անկանխակալ իրավունք է վերապահել նրան: Երևի արևելահայ լեզուն այն ժամանակ արդեն այնքան էր հասունացած, որ կարող էր դառնալ առանձին ինքնուրույն լեզու՝ տարբերվելով արևմտահայերենից, ոչ պակաս, քան իսլանդերենը նորվեգերենից ու շատ ավելի շատ, քան մակեդոներենը բուլղարերենից: Չէ որ Հայաստանի վերջնական բաժանումը տեղի ունեցավ 1555—1639 թթ. ու այնուհետև շարունակվում էր անդադար. միայն ավելի ուշ Արևելյան (Պարսկական) Հայաստանի մեծ մասը հայտնվեց ցարական Ռուսաստանի սահմաններում:

Այդ երկար ժամանակաշրջանը բավական էր, որ լեզուն կիսվեր, և մեկ ժողովրդից առաջանային երկու եղբայր ժողովուրդներ: Չէ որ հին ռուսական բնից նույնպես շատ արագ առաջացել են երեք արևելասլավոնական ժողովուրդներ: Բավական եղավ, որ հյուսիսը՝ բուն Ռուսաստանը, մի քիչ ավելի երկար ժամանակ մնաց թաթարական օկուպացիայի ներքո, հարավ-արևմուտքը՝ Ուկրաինան, ընկավ լեհական տիրապետության տակ, իսկ հյուսիս-արևմուտքը՝ Բելոռուսիան, հայտնվեց Մեծ Լիտվական իշխանության սահմաններում... Ու արդյունքն այն եղավ, որ մեկ ռուս ժողովրդից սերվեցին նույնիսկ երեք ժողովուրդ: Երբ Իվան Կոտլյարևսկին պետերբուրգյան պալատը զվարճացնելու համար ուկրաիներեն գրեց «Էնեիդայի» կատակային պարոդիան, ամենևին չէր գիտակցում, որ

կատարում է դարաշրջանային գործ՝ լայն բաց անելով պոտենցիալ կերպով վաղուցվանից գոյություն ունեցող ապագայի դարբասը՝ իր ինքնուրույնությունը դեռևս չգիտակցող ուկրաինական ժողովրդի առջև: Փակագծերում պետք է ասել, որ անվանումները՝ Ուկրաինա, ուկրաինացի-լեհական ծագում ունեն:

Եթե Խաչատուր Աբովյանը եղել է արևելահայ Կոտլյարևսկին (ավելի ազնվական կերպարանքով), ապա նրա գործը հետագա հարյուր քանի տարիների ընթացքում դեռ իր ավարտին հասցված չէր: Ուղղակի ոչ իր օրոք և ոչ էլ մինչև 1915 թվականը, այդ պրոցեսի ավարտումը կարևոր չէր, պետք չէր: Ավելի շուտ՝ ընդհակառակը, արևմտահայ հայրենասերները՝ հանդես գալով որպես ռուսահայերի հետ միևնույն ժողովուրդ, խաբուսիկ մի հույս ունեին, թե ուղղափառ ցարը հանդես կգա իրենց արդար պահանջների պաշտպանությամբ, թեկուզ որպես պարգև ռուսահայերի նվիրվածության դիմաց: Դա բարենպաստ հանգամանք էր անշուշտ, որից, ավաղ, պատմությունը չօգտվեց: Եվ նույնիսկ ընդհակառակը, թե ռուսահայերի և թե թուրքահայերի հակումը ցարի կողմը անչափ վնասեց նրանց՝ ապագացնելով 1915 թվականի եղեռնը:

Սկսած այդ եղեռնից ու հատկապես դաշնակցական հանրապետության անկման ժամանակից, այսինքն՝ 1920 թվականից, մեկ միասնական հայ ժողովրդի հերյուրանքը եղավ անեծք հատկապես արևմտահայերի համար՝ անհնար դարձնելով նրա որևէ փորձ՝ Թուրքահայաստանը ազատագրելու ուղղությամբ:

Գիտեմ, որ ասածներս բավականին ճնշող են, և կարող է պատահել, որ շատ հայեր համաձայն չեն լինի ինձ հետ: Բայց դրա մեջ թաքնված է Վանի շրջակայքը ազատագրելու բանալին: Դրա համար համարձակություն ունեցա արտահայտելու այս միտքս: Ափսոսում եմ միայն, որ առաջ չկարողացա ձևակերպել այն: Գուցե դա օգներ արևմտահայ ազատագրման մարտիկներին մեռյալ կետից շարժվել ավելի քան տասը տարի սրանից առաջ: Նախքան կոնկրետ առաջարկությունների անցնելը, պարտքս եմ համարում ճշգրտել ողջ խնդիրը այնպես, ինչպես տեսնում եմ այն՝ այս հայեցակետի լույսի տակ:

Եթե արևմտահայ լինեի

Եթե լինեի արևմտահայ, ապա՝ առանց ժամանակ կորցնելու, բոլոր հնարավոր միջոցներով ի գիտություն ամբողջ աշխարհի կհայտարարեի հետևյալ չորս սկզբունքները.

1. Մենք՝ 1915 թվականին թուրքերի կողմից կոտորված ժողովրդի հետնորդներս, մինչև հիմա կոչված ուղղակի հայեր կամ թուրքահայեր, համարում ենք մեզ,— ճշմարտության համաձայն,— առանձին ժողովուրդ, արևելահայերից կամ խորհրդային հայերից տարբեր, ու սրանից հետո ընդունում ենք պարտադիր արևմտահայեր անունը (Nest Armenians vel Armeniens Oecidentals):

Այդ որոշումը ընդունեցինք այն փաստի հիման վրա, որ արևմտահայերը և արևելահայերը խոսում են տարբեր լեզուներով (տարբերությունը ավելի մեծ է, քան նոր նորվեգերենի և իսլանդերենի միջև), 19-րդ դարից ունեն տարբեր գրականություն, իսկ արդեն 16-րդ դարից նրանց պատմությունը հոսում է տարբեր հուներով. մի բան, որ իր արտահայտությունն է գտել այդ երկու ժողովուրդների ավանդություններում և հասարակական կառուցվածքի մեջ:

2. Հայկական Խորհրդային Հանրապետության բնակիչները, որ խոսում են առանձին, բայց մեզ համար մասամբ հասկանալի լեզվով, մեր եղբայրակիցներն են (ռուս. единоплеменники, անգլ. our tribes men, ֆրանս. les hommes de notre racl): Մենք և նրանք բառիս լայն իմաստով՝ հայ ենք (այնպես, ինչպես շվեդներն ու նորվեգները սկանդինավացիներ են, բայց դա ոչ շվեդներին է իրավունք տալիս նորվեգների ազգի բախտը որոշելու և ոչ էլ՝ ընդհակառակը): Նմանապես, ոչ Հայկական Խորհրդային Հանրապետության կառավարությունը և ոչ էլ միջազգային ֆորումում իրեն ներկայացնող ԽՍՀՄ-ի կառավարությունը պարտավորված չեն, իրավունք էլ չունեն որևէ հարցում հանդես գալ մեր անունից: Մենք հայրենի հողից զրկված ժողովուրդ ենք, բայց հոգեպես միանգամայն ինքնուրույն (սուվերեն):

3. Այդ ինքնուրույնությունը իրականացնելու նպատակով այս փաստաթղթով կյանքի ենք կոչում բոլոր կուսակցություններից վեր կանգնած Արևմտահայաստանը ազատագրող կազմակերպությունը, Արևմտահայաստանը որպես չեզոք պետու-

թյուն, որը ոչ երբևէ կմիանա ԽՍՀՄ-ին, և ոչ էլ որևէ պահանջ կներկայացնի ԽՍՀՄ-ի մեջ մտնող որևէ հողերի նկատմամբ:

Անկեղծորեն շնորհակալ ենք խորհրդային պետությունից այն բանի համար, որ հնարավորություն է տվել մարդկային գոյությունը պահպանելու մեր արյունակից և հատկապես մոտիկ արևելահայ ժողովրդին, և նույնիսկ ընդունել է մեր հայրենակիցներից շատերին, որոնք ապաստան են գտել Խորհրդային Հայաստանում՝ կամ թուրքերի ձեռքից սպառնացող մահից փախչելով, կամ ավելի ուշ՝ Սփյուռքում, որպես իրենց մշտական բնակավայրը հենց այդ երկիրը ընտրելով:

Անկեղծ շնորհակալ ենք նաև Իրանի կայսրությանը այն բարյացակամության համար, որ իրենց կառավարությունն ու հասարակությունը միշտ հանդես են բերել այնտեղ բնակվող բազմաթիվ հայերի հանդեպ: Հայ-իրանական փոխհարաբերությունների երկուսուկես հազարամյա պատմությունը համոզմունք մշակեց մեր մեջ, որ այդ տերությունը հիմնականում դրականորեն էր տրամադրված հայության նկատմամբ՝ լինելով ավելի շուտ նրա բարեկամը, քան՝ հակառակորդը:

Արևմտյան Հայաստանի ժողովուրդը մեկ թշնամի ունի միայն, որի հետ ստիպված է կյանքի և մահվան պայքար մղելու: Դա Թուրքիան է: Այլ թշնամի չունենք:

4. Որպես Արևմտյան Հայաստանի Ազատագրական Կազմակերպություն, մենք պետք է վճռականորեն մեզ համար ՄԱԿ-ից պահանջենք ամենաքիչը այնպիսի ձևական լիազորություններ, ինչպիսիները ձեռք է բերել արդեն Պաղեստինի Ազատագրական Կազմակերպությունը, թեև այդ երկրի արաբ ժողովուրդը մեկհազարերորդ մասն էլ չի ապրել այն սարսափների, որ վիճակվել էին Արևմտյան Հայաստանի ժողովրդին:

Հիմնավորում.

Թուրքերը բարոյական իրավունք չունեն տիրելու արևմտահայ հողերին, քանի որ դրանց տերը դարձան փաստորեն ժողովրդասպանության հետևանքով, ավելի քան երկուս ու կես միլիոն անզեն քրիստոնյա հայ կոտորելով 1915-ին և հաջորդ տարիներին: Այն փաստը, որ մինչև օրս թուրքերը տիրում են այդ հողերին, ծաղրուծանակ է արդարության տարրական սկզբունքների նկատմամբ, որովհետև դա կարծես պարգև է ժողովրդասպանության համար:

Այսօր միջազգային իրավունքը Արևմտյան Հայաստանի խնդրին կարող է մոտենալ երկու տարբեր տեսակետներից. ա) կոտորված ժողովրդի և բ) թուրքերի կողմից հայկական հողերին անօրեն տիրելու: Երկուսն էլ վերջիվերջո կհասցնեն միևնույն եզրակացությանը:

Առաջին տեսանկյունից՝ Նյուրնբերգյան Միջազգային դատարանի որոշման հիմա վրա Թուրքիան պարտավոր է փոխհատուցել կատարված ժողովրդասպանության համար: Երկրորդ տեսանկյունից՝ Թուրքիան իր կողմից անօրեն տիրված հողերը պարտավոր է վերադարձնել դրանց օրինական տերերի հետնորդներին, այսինքն՝ աշխարհովս մեկ ցրված (գաղութահայերին) արևմտահայերին:

Ի դեպս հիշեցնում եմ, որ ներկայումս պարտադիր իրավական նորմաներով մարդկության դեմ կատարված ոճրագործությունների համար պատասխանատվությունը և անցյալում թույլ տրված անարդարությունների համար փոխհատուցման պարտքը չեն հնանում: Բացի դրանից միջազգային իրավունքի մեջ մտնող Նյուրնբերգյան դատավարության որոշումների յուրահատկությունն այն է, որ նրանք ուժի մեջ են ոչ միայն ներկայի ու ապագայի, այլև անցյալի նկատմամբ: Չէ որ դատական պրոցեսով դատապարտված հիտլերյան ռեժիմի ոճրագործությունները տեղի են ունեցել այդ դատավարության առաջին նիստից առաջ, սակայն հենց դրա որոշումների հիման վրա են ձերբակալված ու պատժի ենթարկված գերմանական երրորդ կայսրության մարդասպանության ապարատի գլխավոր կազմակերպիչները, իսկ Պոտսդամի կոնֆերանսի որոշումով Լեհաստանին, որպես զավթիչների ձեռքից ամենաշատ տանջված ու տուժված ժողովրդի, փոխհատուցման կարգով վերադարձվել է հին լեհական հողերի 100 հազար քառակուսի կիլոմետր տարածությունը, որ վաղուցվանից գտնվում էր գերմանական կայսրության սահմաններում:

Այսօր հնարավոր չէ պատժի ենթարկել թուրքական ժողովրդասպանության ֆիզիկական կատարողներին: Սակայն նրանց կողմից զավթած հողերը վերադարձնել հնարավոր է և անհրաժեշտ:

Այդ խնդրին պետք է մոտենալ նաև Արևմտյան Հայաստանի տերիտորիայի տեսանկյունից, որը (այդ տերիտորիան) օսմանյան պետության տիպիկ գաղութն է եղել և գաղութն էլ

մնում է մինչև այժմ: Այդ գաղութի ժողովրդի կոտորման փաստը ոչ միայն չի խոսում ի օգուտ Թուրքիայի սուվերենության այդ տրիտորիայում, այլև էլ ավելի մեծ հարցական նշանի տակ է դնում այն: Այդ կոտորածի զոհերի սփյուռքում գտնվող հետնորդները հայրենիքից դուրս են ապրում ոչ թե նրա համար, որ այդպես են ուզում, այլ որովհետև ստիպված են: Սակայն անկախ նրանից, թե բախտը ուր է գցել իրենց, նրանք պահանջում են, որ իրենց հայրենիքի նկատմամբ իրականացվի ՄԱԿ-ի ընդհանուր ժողովի կողմից 14. 12. 1960 թ. և 27. 11. 1961 թ. հայտարարված գաղութակալության լիակատար վերացման մասին դեկլարացիան:

Ինչպես վերևում ասածներիցս երևում է, երկու տեսակետներից էլ հայկական հարցը հանգում է միևնույն վերջնական եզրակացությանը. Արևմտյան Հայաստանի սուվերենությունը հայկական հարցի միակ տրամաբանական լուծումն է թե Նյուրնբերգյան դատավարության որոշումների և թ ՄԱԿ-ի ընդհանուր ժողովի դեկլարացիայի լույսի տակ՝ գաղութակալության լիակատար վերացման խնդրում:

Արևմտյան Հայաստանի ազատագրման օգտին կան նաև այլ խոսուն փաստարկներ: Առաջին հերթին պետք է հիշատակել Սևրի (Sevres) միջազգային պայմանագիրը, որը ստորագրել է եվրոպական պետությունների մեծամասնությունը (իսկ ավելի ուշ նման բովանդակությամբ միջազգային պայմանագրերը այդ նույն պետությունների կողմից ընդունվում էին միայն ի գիտություն): Հետո գալիս են լուրջ վերապահումներ Ղարսի, Արդահանի մարզերի և Արարատի ստորոտների Թուրքիային միացնելու իրավազորության վերաբերյալ, քանի որ այդ միացումը կատարվել է այդ հողերի ժողովրդի և այն ժամանակվա հայկական կառավարության կամքին հակառակ:

Կանխատեսում եմ, որ Թուրքիան պաշտպանվելու համար առաջ կքաշի մի շարք ստեր ու հնարքներ, որոնք վաղուց հերքվում են պատմության և միջազգային իրավունքի կողմից կամ կհերքվեն այն վայրկյանից, երբ արևմտահայերը իրենց ճանաչեն առանձին ինքնուրույն ժողովուրդ: Ահա թե ինչ կարող է ասել թուրքական կառավարությունը.

1) Թուրքերը բնավ չէին սպանում հայերին 1915 թ., միայն տեղավորել էին նրանց ժամանակավոր ճամբարներում, որտեղից հետո նրանք ազատվել են:

2) Եթե անգամ ընդունենք, որ թուրքերը որոշ թվով հայեր սպանել են, ապա դա այնքան վաղուց է եղել, որ դրա քրքրելը իմաստ չունի:

3) Մեկ հայկական պետություն (այսինքն՝ Խորհրդային Հայաստանը) արդեն գոյություն ունի, ապա կարիք չկա երկրորդ հայկական պետություն ստեղծելու:

Սակայն այդ միամիտ հակափաստարկների կողքին կանխատեսում եմ երկու ավելի լուրջը.

1) Սփյուռքահայությունը այնքան էլ բազմաթիվ չէ, որ կարողանա հանդես գալ ամբողջ ժողովրդի անունից և պահանջ ներկայացնել այդքան մեծ տերիտորիայի համար:

2) Ինչպե՞ս վարվենք այն թուրք բնակիչների հետ, որոնք ծնվել են այդ մարզերում, երբեմն որպես երրորդ սերունդ: Չէ՞ որ նրանց համար նույնպես հայրենիք է դա:

Հերթով պատասխանում եմ այդ հակափաստարկներին.

1) Արևմտյան Հայաստանի Ազատագրման կազմակերպությունը Թուրքիայի կողմից գրավված հողերի համար պահանջ ներկայացնելով գործում է լիազորված արևմտահայ բոլոր կազմակերպությունների և քաղաքական կուսակցությունների կողմից: Իսկ այն դիտողությանը, թե սփյուռքահայությունը այսօր համեմատաբար փոքրաթիվ է, ունենք պատասխան: Եթե չլիներ թուրքերի ժողովրդասպանությունը 1915—1920 թթ. Արևմտյան և Արևելյան հայերի ընդհանուր թիվը, որ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին (չնայած ավելի վաղ կատարված կոտորածների) կազմում էր շուրջ 5 միլիոն, վաթսուն տարվա ընթացքում ամենաքիչը կկրկնապատկվեր. այնինչ մինչև հիմա նրանք կազմում են հազիվ չորս միլիոն: Իսկ չծնվածների վեց միլիոնը, որպես թուրքական ժողովրդասպանության կրկնակի արդյունք, ավելի քան բավական չափով պարզաբանում են, թե ինչու սփյուռքահայությունը այսօր այնքան էլ բազմաթիվ չէ:

Չնայած այդ ամենին այսօր Խորհրդային Հայաստանի սահմաններից դուրս (ԽՍՀՄ-ում և արտասահմանում) ապրում են 2,5—3 միլիոն հայեր, գերազանցապես արևմտահայեր: Իսկ իրենց պահանջած հողերը (եթե Թուրքիան համաձայնվի կոմպրոմիսային կարգով բավարարել իրենց պահանջը) կփակվեն եռանկյունու մեջ. ելք դեպի ծովը, դեպի Վան լիճը ու դեպի

Իրանը: Դա կազմում է պատմական Հայաստանի և Սևրի (Sevres) միջազգային պայմանագրում պահանջվող տերիտորիայի հազիվ աննշան մի մասը: Վերջին հաշվով խոսքը մի ինչ-որ 50 հազար քառակուսի կիլոմետրի (կամ մոտ 20 հազար անգլիական միլ.)[2] մասին է՝ 2,5-ից 3 միլիոն բնակչության համար. միջինը կկազմի 60 կամ 50 հոգի մեկ քառակուսի կիլոմետրի վրա: Որպես տնտեսապես թույլ զարգացած և ոչ բավարար չափով ջրով ապահովված երկրի համար դա կլիներ ավելի շուտ բարձր խտություն, համեմատելի դեպս այս հողերում ներկայումս եղածից մի քանի անգամ բարձր:

2) Այդ խնդիրը, մեր կարծիքով, այլ կերպ չի լուծվի, բացի այն, որ Արևմտյան Հայաստանի պահանջված հողերից եկվոր թուրք բնակիչներին վերաբնակեցնել (իհարկե թուրքական կառավարության հաշվին) մինչև հիմա էլ շատ թույլ բնակեցված հսկա Անատոլիայի այլ վայրերը: Անկեղծ համազգում ենք այն մարդկանց, որոնք ստիպված են նեղություն կրելու իրենց նախնիների կատարած ոճրագործությունների պատճառով: Բայց իրենց բնակատեղը փոխելու պայմանները անտարակույս փառահեղ կլինեն, համեմատած այն պայմանների հետ, որ վիճակվել էին դժբախտ արևմտահայերին, երբ 1915 թ. գարնանը մահվան երթով նրանց քշում էին դեպի բնաջնջում:

Եթե արևելահայ լինեի

Եթե լինեի արևելահայ, օրինություն կհամարեի այն պատմական պրոցեսը, որի հետևանքով հայկական ընդհանուր միասնությունից առաջացել են երկու հայ ժողովուրդ. այո, օրինություն կհամարեի, քանի որ առանց դրան չարաբաստիկ հայկական հարցը երբեք չէր գտնի իր լուծումը: Այդ պարագաներում, եթե սիամական եղբայրներին անխուսափելի մահ է սպառնում, պետք է նրանց որքան հնարավոր է արագ վիրահատությամբ բաժանել: Հակառակ դեպքում ամենաքիչը նրանցից մեկը կմեռնի, իսկ մյուսը՝ դիակը մահ կածի հետը. ու նույնիսկ երկար ժամանակ չի գիտակցի, որ մյուսը մեռած է վաղուց:

Արևմտահայերը այլ ժողովուրդների հետ լիակատար ձուլման նախօրյակն են ապրում, փաստորեն կանգնած են ազգային մահվան առջև: Հայերը դեռ գիտակցում են իրենց ով լինելը, որդիները արդեն համարյա ֆրանսիացիներ են կամ ամերիկացիներ, գերմանացիներ, լեհեր. երբեմն միայն ավելացնում են ամաչելով, այն էլ ամենամտերիմ բարեկամների շրջանում. «Ծագումով հայ եմ»: Արդեն ծնված թոռները դեռ կգցեն այդ «ավելացումը», որպես ավելորդ, գուցե նույնիսկ ամոթալի:

Եթե լինեի արևելահայ, ինքս ինձ կասեի. թող գոյություն ունենան երկու հայ ժողովուրդ և երկու հայկական պետություն, քանի որ այլ կերպ լինել չի կարող: Ավելի լավ է դա, քան թե երեք միլիոն եղբայրակիցներիս անհետ լուծումը այլ ժողովուրդների ծովում:

Թող այդպես լինի, միայն թե պատմական արդարությունը հատուցում ստանա, և թուրքերը ստիպված լինեն օրինավոր տերերին վերադարձնելու իրենց կողմից զավթած և անպատված հողը. միայն թե Մասիսից մինչև Վան հնչի հայոց լեզուն, թեև իմ արևելահայերենից մի քիչ տարբերվող, այնուամենայնիվ, հայոց լեզուն:

Ընդունում եմ այդ իրադրությունը մանավանդ նրա համար, որ երկու հայ ժողովուրդների ձևավորումը, որպես անխուսափելի պատմական պրոցես, սկսվեց 16—17-րդ դարերում, իսկ ավելի ուշ Խաչատուր Աբովյանի և Ղևոնդ Ալիշանի ստեղծագործություններում իր արտահայտությունը գտավ երկու տարբեր գրական լեզուների մեջ:

Ձայն բարբառոյ յանապատի

Վախենում եմ, որ վերևում շարադրված նախագիծը, որը արևմտահայերին՝ իրենց իրավունքների համար համաշխարհային ասպարեզում պայքարելու լիակատար իրավունք է տալիս, կմնա որպես ձայն բարբարոս հանապատե: Արդյոք երեք անկախ հայկական կուսակցությունները քաջություն կգտնե՞ն իրենց մեջ ստեղծելու համար Արևմտյան Հայաստանի ազատագրման գերպարտիական կազմակերպություն, այն էլ ոչ թե ի փառք սեփական կուսակցության, այլ հայրենիքի փրկության համար: Եվ արդյոք այդ կազմակերպությունը կլինի՞ այնքան գործունյա, որ կարողանա ում որ պետք է համոզել, հասկաց-

նել, թե ինքը հանդես է գալիս առանձին ինքնուրույն ժողովրդի կողմից, որը նույնը չէ խորհրդային հայերի հետ: Ու կկարողանա՞ արդյոք ՄԱԿ-ի ընդհանուր ժողովի օրակարգի մեջ մտցնել իր առաջարկությունը իրեն՝ ԱՀԱԿ-ին այնպիսի կանոնադրություն (status) հաստատելու, ինչպիսինն ունի Պաղեստինի Ազատագրման Կազմակերպությունը: Գուցե հարկավոր լինի գտնել երկու ոչ մեծ պետություն, որոնց ներկայացուցիչները համաձայնվեին առաջինը հանդես գալ այդ առաջարկությամբ: Լավ կլիներ գուցե ՄԱԿ-ի ընդհանուր ժողովի անդամների մեջ տարածել իմ «A Letter to my Turkish Friend»-ը անգլերեն հրատարակված Baikar Press-ի կողմից, 1968 թ.: Այդ նամակը ընթերցողին հիմնովին ծանոթացնում է թուրք-հայկական խնդրին:

Այս ամենը, իհարկե, ազատ դատողություններ են: Արևմտյան Հայաստանի Ազատագրման Կազմակերպությունը,— եթե իրոք կյանքի կկոչվի,— կազմված կլինի, անշուշտ, այնպիսի անձնավորություններից, որոնք պարզ կտեսնեն իրենց նպատակը և կիմանան, թե ինչի վրա կարող են հույս դնել նոր իրադրության մեջ, որը իրենց համար, որպես հայրենի հողից զրկված և Խորհրդային Հայկական Հանրապետության բնակիչների հետ ոչ մի կապ չունեցող ժողովրդի համար, ձևականորեն ավելի նպաստավոր է:

Համեմատած Պաղեստինի Ազատագրման Կազմակերպության հետ արևմտահայերը այնքանով ավելի լավ դրության մեջ կլինեն, որ արաբների հակառակորդները՝ հրեաները, օգտվում են ԱՄՆ-ի և այլ երկրների աջակցությունից, իսկ թուրքերը՝ ոչ մի աջակցություն չունեն, բայց այնքանով ավելի վատ դրության մեջ կլինեն, որ Իսրայելը Ատլանտյան դաշինքին չի պատկանում, իսկ Թուրքիան՝ պատկանում է: Դրա համար չի կարելի կարծել, թե պայքարը հեշտ կլինի: Այնուամենայնիվ, պայքարը պետք է սկսել և անընդհատ, չնայած հավանական առանձին անհաջողությունների, շարունակել և մղել մինչև որ Արևմտյան Հայաստանը ճանաչվի, թեկուզ միայն ձևականորեն, որպես Թուրքիայի կողմից անօրեն կառավարվող գաղութ: Սա ազատագրման ճանապարհի առաջին հանգրվանն է, պրակտիկորեն գուցե ամենադժվարը:

Դեռ ուշ չէ: Գաղութների ազատագրման տենդը դեռ շարունակվում է: Թեև արևմտահայ ժողովրդի ամենաջահել սերունդը արդեն բռնել է ուրիշ ժողովուրդների հետ ձուլվելու ճանապարհը, սակայն այդ ժողովուրդը դեռևս ձուլված չէ: Բավական է, որ ամենահայերի իրավունքը այդ հողերի նկատմամբ թեկուզ միայն ձևականորեն ճանաչվի և ՄԱԿ-ի համապատասխան նոտան ուղարկվի թուրքական կառավարությանը, ամբողջ արևմտահայությունը ուժեղ ցնցում կապրի, և դա միանգամից հայրենիքին կվերադարձնի նրանց, ովքեր սկսել են իրենից հեռանալ:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«ՆԱՄԱԿ ԻՄ ՀԻՆ ԹՈՒՐՔ ԾԱՆՈԹԻՆ»
հոդվածի նոր, ընդարձակված տարբերակի՝ «ՆԱՄԱԿ ԹՈՒՐՔ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻՆ»-ի վերջավորությունը

1965 թվականը հոբելյանական կլինի հայերի և այն թուրքերի նահատակմանը, որոնք իրենց կյանքը զոհեցին կործանվող ժողովրդի պաշտպանության, դրա հետ մեկտեղ իրենց սեփական ազգային պատվի պաշտպանության համար, թեև իրենք էլ թերևս լրիվ չէին գիտակցում իրենց հերոսության վիթխարիությունն ու կշիռը:

Պարզապես միայն մոռացությունից հանվելուց շատ ավելի մեծ բանի են արժանի Անատոլուի այն բոլոր հասարակ, անգրագետ թուրք գյուղացիները, որոնք զոհվեցին մահվան քշվող քրիստոնեաներին մի բաժակ ջուր տալու համար, ինչպես նաև նրանք, ովքեր գնդակահարվեցին՝ հայերին իրենց տներում պատսպարելու համար: Եվ այս՝ թեկուզ այն բանի համար միայն, որպեսզի աշխարհին ցույց տրվի ձեր ժողովրդի մեկ այլ պատկերը, տարբեր այն պատկերից, որ մի ժամանակ երևաց սարսափահար եվրոպացիների աչքին Ստամբուլի և Զմյուռնիայի փողոցներում:

Այդ անանուն հերոսներին ըստ արժանվույն մեծարելը կլինի միաժամանակ մեծարումն թուրք ժողովրդի, որի մեջ նման գոհարներ էլ են պարունակվում:

Սակայն դա կլինի մեծարման տարին նախ և առաջ նահատակված հայերի, չափահաս այրերի, որոնցից խլված էր զենքը ձեռքին մեռնելու վերջին հնարավորությունը. նաև մահից առաջ իրենց մարդկային և կանացի արժանապատվության մեջ անարգված կանանց ու նաև երեխաների, որոնց չվիճակվեց երբևէ դառնալ լիարժեք մարդիկ, որովհետև խլվեց նրանց մանուկ կյանքը:

Դա կլինի նաև մեծարման տարի սպանված, նահատակված կամ խելագարության հասցված ականավոր հայերի՝ սկսած Մեծն Կոմիտասից:

Դա միաժամանակ կլինի մեծարման տարին աշխարհի ամենաընդունակ ժողովուրդներից մեկի 6 միլիոն այն չծնված որդիների ու դուստրերի, որոնք ամենայն հավանականությամբ կյանքից չէին հեռանա առանց հետք թողնելու:

Դա կլինի մեծարման տարին խլված և անպատվված հայկական հողի, խլված և անպատվված այն մարդկանց կողմից, որոնց համար Հայաստանին տիրելու իրավունքի միակ հիմունքը այդ երկրի բոլոր բնակիչներին կոտորելու խայտառակ փաստն էր:

Դա կլինի, ի վերջո, զգուշացման տարի բոլոր հասարակությունների համար՝ քրիստոնյա, մուսուլման, թե անդավանանք, որպեսզի հետագայում խուսափեն մարդասպանության ճանապարհից, որը տանում է միայն դեպի... այդ ոճիրը թույլ տված ժողովրդի հավիտենական խայտառակություն:

Եվ երանի թե մարդկության աչքում դա լինի ձեր պատվի լիակատար վերականգնման տարի: Եվ երանի թե թուրք անունը այդ տարի ամբողջ աշխարհում շողշողա միանգամայն այլ փայլով՝ նախկինում ձեր տարած բոլոր հաղթանակներից առավել շլացիկ փայլով:

Այդ ճանապարհը դժվարին է, անշուշտ, քանի որ թուրք ժողովրդի ամենաազնիվ զավակներից պահանջվում է բարեկիրթ հոգու մեծ քաջություն և, թերևս, Մահաթմա Գանդիի նման ուժեղ բնավորություն:

Սակայն գաղութներին ինքնակամորեն ազատություն տալու և աշխարհի բոլոր պետությունների կողմից նախկին վիրավորանքների հատուցման ներկա ժամանակաշրջանում ձեր ժողովուրդը ևս պետք է որոշակի ընտրություն կատարի՝ կամ ճշմարիտ մեծություն, կամ թե չէ... տարիներ առաջ կատարած ժողովրդասպանության արդարացում, ժողովրդասպանություն, որ չբերեց ձեզ ոչ փառք, ոչ հարստություն, ոչ էլ, մանավանդ, հարգանքն այլ ժողովուրդների:

Այժմ աշխարհով մեկ ցրված երկուսուկես միլիոն հայեր 50 տարի է ինչ սպասում են ետ վերցնելու գոնե մի մասը ձեր կողմից արհեստականորեն անմարդաբնակ դարձած այն գաղութի, որ իրենց հայրենիքն է եղել դեռևս այն ժամանակ, երբ

աշխարհիս երեսին չկային ոչ անգլիացիներ, որ ֆրանսիացիներ, ոչ լեհեր, ոչ ռուսներ և ոչ էլ նույնիսկ հռոմեացիներ, այն հռոմեացիները, որոնք աշխարհին տվին արժեքավոր ասացվածք— աքսիոմ.

«Տուր՝ ինչ որ պարտք ես...»

Այս ընդարձակ նամակը լույս պիտի տեսնի չորս լեզուներով՝ անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, լեհերեն: **(Մանոթ. հեղինակի):**

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՍԻՐԻԱԿԱՆ ԱՆԱՊԱՏ*

Ստ. Ժերոմսկու «Գարնանամուտ» վեպում հիշատակված՝ Բաքվի կոտորածներին սպանվեց 75.000 հայ: Իսկ հինգ տարվա մեջ՝ 1915 թ. ապրիլի 24-ից սկսած, ընդհանուր առմամբ 3 միլիոն (այդ թվում 2 մլն. կին և երեխա), որ ամբողջ ազգի 60 %-ն էր:

Այն ժամանակ կատարվեց աննախադեպ ցեղասպանություն, թեպետ եզրույթը (տերմին) ի հայտ եկավ ավելի ուշ:

Ցեղասպանությունը ոչ մի նմանություն չունի զինված տղամարդկանց երկկողմանի ոչնչացման հետ, որ պատմության մեջ ընդունված է անվանել պատերազմ: Կազմակերպված ցեղասպանությունը մեր դարի գյուտն է, որի սկիզբը դրեցին թուրքերը 1915 թ. ապրիլի 24-ին. լոկ մի ազգի՝ թուրքահայությանը վերաբերող եղեռնը նշանակությամբ կարելի է համեմատել միմիայն եվրոպական հրեաների ոչնչացման հետ: Դա ողբերգության առաջին գործողությունն էր, որ իր հետագա պատկերներում աշխարհն հասցրեց խելահեղության:

***

Պատմական Հայաստանը փռված է այսօրվա Վրաստանի և Սիրիայի ու Իրաքի հյուսիսային սահմանների միջև. այդ տարածքի 9/10-ը անցավ Թուրքիայի տիրակալությանը, 1/10-ը՝ Պարսկաստանի (Իրանի). 1828 թվականին Պարսկահայքը գրեթե ամբողջովին անցավ ցարական Ռուսաստանին:

Ինչևէ. պատմական տարածքի ճնշող մեծամասնությունը մնում էր Օսմանյան կայսրության սահմաններում, իսկ դրանից դուրս հայկական բնակավայրերը սփռված էին Անատոլիայում և Լիբանանում, չխոսելով արդեն Ստամբուլի մասին: Հենց այդ

---

* Տպագրվել է 1965 թ. օգոստոսի 15-ին, Կրակովի «Տիգոդնիկ պովշեխնի» թերթում: Տե՛ս նաև «Դպրություն», 16 մարտի 1990 թ., Գ. Մաղոյանի հրապարակումը:

պատճառով Թուրքիայի տարածքում կազմավորվեց այն, ինչ XIX դ. հրապարակախոսության մեջ անվանվեց «հայկական հարց»:

Այս եզրույթը շրջանառության մեջ մտավ սուլթան Աբդուլ-Համիդ Բ-ի՝ իշխանության գլուխ անցնելու ժամանակից (1876), որը 33 տարվա ընթացքում 8 խոշոր ջարդ կազմակերպեց հայերի դեմ (ամենաակնառուի հետևանքով սպանվեց մոտ 300 հազար մարդ): Սակայն ոչնչացվող ժողովուրդը ամբողջ ուժով կառչել էր իր քրիստոնեական հավատից ու լեզվից:

Աբդուլ-Համիդի արյունոտ կառավարության անկման պահին, այսինքն 1909 թ., ամբողջ աշխարհում դեռևս մնացել էր 5 մլն. (Թուրքիայում մոտ 4 մլն.) հայ: Բայց հասունացող պատերազմի սպառնալիքի առջև աշխարհը դադարեց անհանգստանալ նրանց ճակատագրով, նրանց խնամքը թողնելով «լիբերալ և առաջադիմական» երիտթուրքերի կուսակցությանը: Վերջիններս տապալելով Աբդուլ-Համիդ Բ-ին, գահակալության հրավիրեցին Մեհմետ Ե-ին, որ այդ ժամանակ հլու-հնազանդ էր իրենց: Ի դեպ, իրականում պարզվեց, որ այսպիսի փոխատեղման հետևանքով ազգային փոքրամասնությունների պարանոցին օղակն ավելի ձգվեց՝ կապված կառավարող կուսակցության առաջ քաշած շովինիստական, պանիսլամական և պանթյուրքական կարգախոսների հետ:

1912 թ. ամռանը երիտթուրքական կուսակցությունը կարճ ժամանակով զրկվեց իշխանությունից և փոխարինվեց «Ազատություն և համաձայնություն» մրցակից կուսակցությամբ, որն իր նախորդներից տարբերվում էր առաջին հերթին անգլադավան ուղղությամբ՝ ի տարբերություն գերմանասիրականի: Սակայն 1913 թ. երիտթուրքերը կրկին անցան իշխանության գլուխ: Ուշագրավ է, որ նոր մինիստրները հենց իրենք սպանեցին նախորդներին: Հաղթանակած կուսակցության ղեկավարներն առանց սուլթանի հետ հաշվի նստելու կազմեցին եռապետություն. դրա մեջ մտան Էնվեր փաշան, Թալեաթ բեյը, Ջեմալ փաշան:

Երիտթուրքերի վերադարձը այս անգամ լիցքաթափման պատրանք ստեղծեց և հարաբերությունների լիբերալացման տպավորություն: Բանը հասավ նույնիսկ հայերի հետ համաձայնության, որ նրանց խոստանում էր քաղաքական ու մշակութային լայն ինքնավարություն, միաժամանակ հույժ գաղտնի պայմաններում սկսեցին ուրվագծվել հայերի բնաջնջման ծրագրերը:

Պատերազմի սկսվելը 1914-ին նպաստավոր պայմաններ ստեղծեց այդ ծրագրերի իրականացման համար: Հենց սկզբից կասկած չկար, որ Թուրքիան կմտնի պատերազմի մեջ, և հատկապես՝ Գերմանիայի կողմից: Նշաններ կան, որ գերմանական գլխավոր հրամանատարությունը տեղյակ էր բոլոր մտահղացումներին, չնայած հայ ժողովրդի մեծ բարեկամ Ֆրանց Վերֆելը ներշնչում է, թե դա ճիշտ չէ: Բոլոր դեպքերում կասկած չկար, որ գերմանացիները չեն խառնվի Թուրքիայի այս «զուտ ներքին հարցին»: Իսկ Անտանտի երկրների կարծիքը կարելի էր հաշվի չառնել, քանի որ պատերազմում թշնամի էին:

Կարծես ամեն բան ընթանում էր բնականորեն: Հայերին թուրքերի պես զորակոչում էին, իսկ տարեց տղամարդկանց օգտագործում ամրությունների և ճանապարհների շինարարության մեջ: Կային բացառապես հայերից կազմված գնդեր, որոնք լավ էին մարտնչում: Նույնիսկ 1914—15 թթ. ձմռանը նրանք շրջապատումից հանեցին գեներալիսիմուս Էնվեր փաշային, որը պաշտոնապես շնորհակալություն հայտնեց «մեր հավատարիմ հայ ժողովրդին»:

Այդ ժամանակ գումարվում էին կուսակցական ղեկավարության գաղտնի խորհրդակցություններ: Նույնիսկ այստեղ կուսակցության ղեկավարների միջև լինում են տարաձայնություններ: Սակայն ձայների մեծամասնությամբ ընդունվեց հայերի էվակուացման մասին որոշում, նախատեսելով նրանց ոչնչացնել անապատում:

Եվ այդ օրից ի վեր սկսվում է մանրակրկիտ ծրագրված պատրաստություն, աշխատանքի կազմակերպման բազմապիսի մեթոդների օգտագործմամբ, որպես նպատակ ունենալով ամբողջ ազգի ոչնչացումը:

***

Սառնաշունչ ձմռանը, որի ընթացքում հեռացնում էին խրամատներում մնացող զինվորներից շատերի ցրտահար վերջույթները, ականջները, քթերը, փոխարինեց զարմանալիորեն շոգ գարունը: Հազարավոր հայկական գյուղեր, ցրված ամբողջ

Թուրքահայաստանով, ինչպես Կիլիկիայում և Անատոլիայում, սուզվեցին ծաղկած այգիների օվկիանում: Երիտասարդ տղամարդիկ քիչ էին: Մեծամասնությունը մարտնչում էր Թուրքիայի և սուլթանի համար: Եվ ամեն բան սկսվեց հենց ապրիլի վերջին, երբ շոգը սաստկացավ:

Պետության տարբեր մասերում տարբեր էր հայերի ֆիզիկական ոչնչացումը: Անատոլիայում, ուր բնակչության մեծամասնությունը թուրք գյուղացիներն էին, հիմնականում խաղաղ և բարեկամ իրենց հարևան քրիստոնյաների նկատմամբ, ոչնչացման գործընթացն արտաքուստ սքողված էր կարգ ու կանոնով: Փոքր քաղաքներում ու գյուղերում ի հայտ եկան ոստիկանական շրջաբերականներ, նշումներով այն մասին, որ հայ բնակչությունը որոշակի ժամի ուսաբեռով հավաքվի հրապարակներում ու կենտրոններում՝ «նոր բնակավայր տեղափոխվելու նպատակով»:

Հողն ու տները ամբողջովին, բեռով-բարձով, պետք է թողնվեին «նոր, մուսուլման վերաբնակներին»: Չէր կարելի օգտվել սայլերից և այլ փոխադրամիջոցներից: Արշավը պետք է կատարվեր հետիոտն:

Նշված ժամին համապատասխան վայրերում հավաքվեցին մարդիկ. անհանգստացած կանայք, բազում երեխաների հետ, օրիորդներ և պատանիներ, ծերունիներ: Ուժերի ծաղկում ապրող տղամարդիկ շատ քիչ էին:

Հավաքակայանը նախօրոք շրջապատում էին ոստիկանները, զինված հրացաններով ու մտրակներով: Լուսամուտներից սարսափով նայում էին տեղի թուրքերը, որոնցից ոչ ոք հայերի հանդեպ թշնամանք չուներ: Նրանք խղճում, ափսոսում, կարեկցում էին:

Այլազգիների դեմ թուրքերի արած գազանությունները կրկնակի ահավոր են, եթե հաշվի առնվի դրանց հոգեբանական անբացատրելիությունը:

Գյուղացին, կարծես բարի և համեստ՝ դառնալով կապրալ կամ ոստիկան, իսկույն վերածվում է հրեշի, իսկ կրթվածները, համալսարան ավարտածները, սառնասրտորեն ծրագրում էին ամբողջ ժողովուրդների կոտորածներ:

«Արդարությունը ես պարտավոր եմ ամրացնել թրիս սայրին. քաղաքակրթությունը մեխել ձիուս պայտերին: Ես պարտավոր եմ ոչնչացնել ամեն բան, չթողնելով քարը քարի վրա, ոչ կանգուն ծառ և ոչ իսկ կանաչ տերև նրա վրա: Ես պարտավոր եմ այնպիսի ավերակներ թողնել ինձնից հետո, որ յուրաքանչյուր տեսնող իրավունք ունենա ասելու՝ «այստեղով թուրք է անցել»,— հայկական ջարդերի նախօրեին գրել է երիտթուրքերի ղեկավար կոմիտեի խորհրդակցության մասնակից Զիա Գյոք-Ալփը:

Անատոլիայի և Միջագետքի, Սիրիայի և Լիբանանի բոլոր քաղաքներից ու ավաններից, մեծ կայսրության բոլոր գյուղերից միաժամանակ շարժվեցին մարդիկ՝ դատապարտված մահվան լոկ այն բանի համար, որ հայ են ծնվել: Օրերով, շաբաթներով, իսկ արևմտյան ծայրամասերից՝ ամիսներով գնում էին շիկացած անապատներով: Ուղղությունը՝ Սիրիական անապատ: Գնում էին առանց հացի ու ջրի, խուսափելով մտրակներից և սվիններից: Նրանց հետևում էին չեչենների և տեղական թափթփուկների ավազակախմբերը: Ընկնողին սպանում էին ծեծելով: Գեղեցիկ աղջիկներին դուրս էին քաշում շարասյուներից: Անատոլիական ամռան անտանելի շոգին ձգվում էին ստվերների անվերջ շարքեր: Մայրերը տենդագին կրծքերին էին սեղմում ուտեստ չունեցող երեխաների սառած մարմինները: Երբեմն թուրք գյուղացիք, պտտվելով ձիերի ու ոստիկանների արանքում, խուսափելով ճիպոտի հարվածից, ջուր էին հասցնում, եթե ոստիկանը չհասցներ նրա ձեռքից վայր գցել ջրամանը: Հետևից և կողքերից, փոշու ամպերի միջից ուրվագծվում էին չեչենները:

Ինչքան մարդ էին քշում այն ժամանակ՝ անհայտ է: Ամենայն հավանականությամբ՝ մոտ 2 միլիոն: Քանի որ միաժամանակ երկրի արևելքում՝ բուն Թուրքահայաստանում, կատարվում էր քրիստոնյա բնակչության համընդհանուր կոտորած, առանց ոստիկանական շրջաբերականի և խաբուսիկ վերաբնակեցման: Թուրք գյուղացիներն այդտեղ համեմատաբար քիչ էին, մուսուլմանության հիմնական մասը քրդերն էին՝ բազմիցս ներքաշված հայերի նկատմամբ կիրառվող հաշվեհարդարին: Այս անգամ քրդական ցեղերի մեծ մասը թուրքերի ձեռքում բռնության գործիք դարձավ:

Որպես կանոն ավազակախմբի գլխին կանգնած էր թուրք սպան: Դրանից բացի քրդերին օգնության կարգով հատկացրել էին հետևակային մի քանի ջոկատ, որոշակի քանակությամբ թնդանոթներ: Այստեղ ոչնչացումը կատարվում էր հե-

տեսյալ կերպ: Արևածագին քաղաքը կամ գյուղը շրջապատում էին այնպես, որ ոչ ոք չկարողանար դուրս պրծնել օղակից: Մոտակա բլուրներին տեղադրելով թնդանոթները և կրակ բանալով, որից հետո հրոսակները ներխուժում էին և հիմնականում դանակներով ի կատար ածում սպանդը, հետո անշտապ զբաղվում էին տնային գույքի թալանով և վերջացնելով՝ շարժվում դեպի հաջորդ բնակավայրը, փոքր խմբեր ուղարկելով մոտակա գյուղերը՝ հաշվեհարդարի համար:

Հանուն արդարության պետք է նշել, որ ոչ բոլոր քրդերն էին մասնակցում կոտորածին: Որոշ քրդական ցեղեր, որ լավ էին տրամադրված հայերի նկատմամբ, ոչ միայն հրաժարվում էին մարդասպանների հետ գործակցելուց, այլև կրակում էին կոտորածի գնացող զինված շարասյուների վրա: Պաշտպանվում էին և իրենք՝ հայերը: Որոշ քաղաքներում ուժեղ դիմադրություն կազմակերպվեց, և երբեմն հայերի հետ հավասար մարտնչում էին նաև տեղի թուրքերը: Սարերում ստեղծվում էին պարտիզանական ջոկատներ, մասամբ այնտեղ էին ապաստանում կանայք և երեխաները: Այդպիսի դեպքերում թուրքերն ստիպված էին լինում առանձին բարձունքներ գրոհել հետևակի և հրետանու միջոցով: Որոշ կետեր դիմացան մինչև անգլիական, ֆրանսիական և ռուսական ջոկատների հասնելը: Այսպիսի բլուրներից մեկի պաշտպանության պատմությունն է ներկայացված Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպում:

Կոտորածին բացասաբար տրամադրված խավը ոչ միայն թուրք գյուղացիությունն էր (ցավոք, սրանք ևս ոչ բոլորը), այլև երիտթուրքական շովինիզմից զարհուրած հին ազնվականությունը և հոգևորականության մեծ մասը, այդ թվում դերվիշները: Բայց բռնության հանդեպ զզվանքը բողոքի կերպարանք չստացավ, լավագույն դեպքում թաքցնում էին որոշ հայերի, կամ ծայրահեղ դեպքում նաև կերակրում: Նույնիսկ այնպես էր պատահում, որ դիմադրություն ցույց տվող խմբերը սանդամթերք էին ստանում թուրքական բարեգործական կազմակերպություններից:

Դաժանությունների և ստորությանց այս ժամանակահատվածում թուրքերի պատմությունը զուրկ չէ լուսավոր էջերից: Ցավոք, նրանք ի զորու չէին ազդելու դեպքերի ընթացքին:

Տեղահանման ենթարկվեցին նաև ստամբուլաբնակ հայերը, նրանց մեջ՝ հայտնի գրողներ, երաժիշտներ և նկարիչներ, հասարակական գործիչներ: Նրանցից ոչ ոք չփրկվեց: Քշվեցին հայկական մանկատները (ամբողջ կազմով) և նույնիսկ մահամերձ հիվանդները, ծերունիները: Բոլորին, առանց բացառության, ոտքով քշում էին միևնույն ուղղությամբ՝ դեպի Սիրիական անապատ: Ում ուժերը հատնում էին՝ նրան սպանում էին ճանապարհին: Հանճարեղ երգահան և ժողովրդական երգերի հավաքող Կոմիտասը, տեսնելով, թե ինչ է կատարվում՝ ցնորվեց: Սկսեց երգել: Եվ նրա անմահ ձայնը գրավեց կողքով անցնող գերմանացի հյուպատոսի ուշադրությունը, որը կարողացավ փրկել նրան մահասփյուռների ձեռքից: Կոմիտասն ապրեց ևս քսան տարի, բայց հոգեկան հավասարակշռությունը չվերականգնվեց: Վախճանվեց 1935 թ. Փարիզի հոգեբուժարաններից մեկում:

Իսկ մահվան դատապարտվածների խմբերը գնում էին, գնում... Մի պահ նրանցից բաժանեցին տղամարդկանց և պատանիներին, իսկ կանանց ու երեխաներին շարունակեցին քշել ընդհուպ մինչև Դեր-Զորի և Միսխանեի միջև գտնվող սարսափազդու ճամբարները: Այդ ընթացքում տղամարդկանցից կազմավորում էին «աշխատանքային խմբեր»՝ ճանապարհների շինարարության համար: Հետագայում, տվյալ տեղամասի շինարարական աշխատանքների ավարտից հետո, աշխատանքային խմբերը ոչնչացվում էին պատժիչների ձեռքով: Նույն բախտին արժանացան թուրքական բանակում ծառայող հայ զինվորները՝ Էնվեր փաշային հերոսաբար պաշտպանողները:

Չնայած այս ամենին, կանանց մի մասը հասավ ճամբարներ, ուր և մեռան ծարավից, սովից ու անտանելի շոգից, քանզի բարաքները գտնվում էին անապատի հենց սրտում: Վերֆելը ցիտում է ճամբարներում եղած թուրք սպային. «Դրանք արդեն մարդ չեն՝ ... ուրվականներ են... ուրվականներ՝ մարդու քիչ նմանող... մեռնում են դանդաղ... խոտ ուտում... ոռնում սովից: Կանայք ձիուս կեղտի մեջ չմարսված գարեհատիկ էին որոնում»:

Նույն այդ ժամանակ, երբ սպան, որի մասին խոսում էր Վերֆելը, պատմում էր իր տեսածը մուսուլման հոգևորականությանը, Թուրքիայի ներքին գործոց մինիստր Թալեաթ բեյը պառլամենտում արտասանեց պատմության մեջ մնացած իր խոսքերը. «Հայոց հարցը արդեն չկա, քանի որ չկան հայերը»:

Բայց հայերը այնուամենայնիվ գոյատևում էին դիմադրության կետերում, ինչպես նաև ռուսական ճակատի մյուս կողմում, որ այդ ժամանակ հասել էր Թուրքահայաստանի խորքերը: Սակայն 1917 թ. ճակատը հանկարծակի ճեղքվեց, և թուրքական բանակը շարժվեց Հայաստանի ռուսական մասի խորքերը և Ատրպատական, ոչնչացնելով հայկական բնակավայրերի բոլոր բնակիչներին, դիերից լեռնային գետակների վրա անցուղիներ սարքելով հրանոթների համար. ըստ Ժերոմսկու՝ Նուրի փաշայի թուրքական բանակը՝ երեք դիվիզիա, նպատակամղված շարժվում էր Բաքու, դեպի նավթի ավազանը, ուր հայերի հոծ խմբեր կային: Իսկ չէ՞ որ հայ պատմաբանները Բաքվի ջարդերը համարում են սարսափելի, ոչ մարդկային ծավալի հայկական ողբերգության դրվագներից մեկը:

***

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոս նավահանգստում (Լեմնոս կղզի) Թուրքիան կապիտուլացվեց: Արաբական երկրների տարածքներում սկսեցին կազմավորվել նոր պետություններ և ապագա ենթամանդատային տարածքներ, որոնց պիտի բաժանեին իրար միջև Ֆրանսիան և Անգլիան: Պատմական Հայաստանի տարածքում սկսեց ձևավորվել հայոց անկախ պետությունը ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնի և ֆրանսիական հայտնի քաղաքական գործիչ Կլեմանսոյի հովանավորությամբ: 1920 թ. օգոստոսի 10-ին Սևրում կնքված խաղաղություն հաստատող փաստաթղթերի տակ ստորագրել էին Անգլիայի, Ֆրանսիայի, Ճապոնիայի, Իտալիայի, Հայաստանի, Բելգիայի, Չեխոսլովակիայի, Հունաստանի, Հիջասի, Հարավսլավիայի, Լեհաստանի, Պորտուգալիայի և Ռումինիայի պատվիրակությունները՝ մեկ և սուլթանական Թուրքիայինը՝ մյուս կողմից:

Հայաստանին հատկացվեց այնպիսի վիթխարի տարածք (գրեթե ամբողջ պատմական Հայաստանը), որ փոքրաթիվ ու այդ աստիճան արյունաքամ ժողովուրդը ի վիճակի չէր ո՛չ բնակեցնելու, ո՛չ կազմավորելու տնտեսությունը, և ո՛չ պաշտպանելու այն:

Ի դեպ, այդ պայմանագիրը մնաց լոկ թղթի վրա: Հայաստանն ընդհանրապես չմտավ իրեն հատկացված տիրույթները: Կլեմանսոն 1920 թ. հեռացավ քաղաքականությունից, իսկ ԱՄՆ-ի կոնգրեսը, որ երբևէ չէր լսել Հայաստանի մասին, չվավերացրեց պրեզիդենտի՝ այդ պետության վերածնման նախագիծը և չճանաչեց Հայաստանը: Ֆրանսիան հանեց իր բրոնատիրական (օկուպացիոն) զորքը Կիլիկիայից, իսկ Անգլիան, որ մտադիր էր Հայաստանը հենակետ դարձնել հեղափոխական Ռուսաստանի դեմ, դադարեց այդ երիտասարդ, քաղաքական կշիռ ձեռք չբերած երկրի ճակատագրով հետաքրքրվել այն պահին, երբ Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի գիծը տեղափոխվեց հյուսիս:

Եվ կրկին մի բուռ հայերը մնացին մեն-մենակ հարավից թուրքերի և նրանց ատրպատականցի մահմեդական դաշնակիցների դեմ՝ արևելքում: Մոտենում էր վերջին գործողությունը Հայաստանի անկախ պետության պատմության մեջ, երբ կարմիր զորքերը գրավեցին Բաքուն և ողջ Ատրպատականը, իսկ թուրքերը, ոտնահարելով Սևրի դաշնագրի որոշումները, գրաղեցրին Հայաստանին կցվելիք հողերը, սպառնալով Կարսին ու Արդահանին: Այն ժամանակ Թուրքիայում իրագործվում էր Քեմալ փաշայի (Աթա-Թուրք) «ժողովրդական հեղափոխությունը», և նոր թրքական կառավարությունը ջանասիրաբար չարչարվում էր ԽՍՀՄ-ի հետ բարեկամության համար, հուսալով այնտեղից օգնություն ստանալ միջազգային իմպերիալիզմի և համաշխարհային կապիտալիզմի դեմ պայքարում, ինչպես այն հանդիսավոր հայտարարվում էր:

Այդ հարցով ձայնը տալիս եմ խորհրդային հայտնի գիտնական Նիկոլ Կարապետյանին. «Ստանալով այդ օգնությունը, Թուրքիան (նորից) հարձակվեց Հայաստանի վրա... քանի որ թուրքերի կարծիքով, իբր, անկախ Հայաստանը պիտի խոչընդոտեր համաշխարհային հեղափոխությանը Արևելքում և Արևմուտքում, որպես «համաշխարհային իմպերիալիզմի և կապիտալիզմի ամրոց», ինչպես նաև համաշխարհային հակահեղափոխության բույն»: Թուրքերի խոսքերով, հայկական պետության ոչնչացումը Երևանում պետք է «ապահովեր համաշխարհային հեղափոխության հաղթանակը կապիտալի նկատմամբ»: Հնարավորություն չունենալով դիմանալու Բեքիր փաշայի «հեղափոխական բանակի» հարվածներին, XI կարմիր բանակի ֆանատների գրոհներին, խղճուկ «ամրոցը միջազգային իմ-

պերիալիզմի»՝ չափազանց փոքր Հայաստանը, կապիտուլացվեց, իսկ «համաշխարհային իմպերիալիզմի գլխից մազ անգամ չպակասեց»,— տրտմորեն եզրակացնում է հեղինակը:

Միայն Հայաստանի չնչին մասը մտավ Խորհրդային Միության կազմի մեջ, մնացածը տրվեց Թուրքիային: Այսպես, փոքրիկ երկրի ուզած կետից այդքան լավ երևացող Արարատը՝ բաղկացուցիչ մասը Խորհրդային Հայաստանի գերքի, մնաց նրա սահմաններից դուրս:



Ереван 26 IX 1968

Дорогой Паруйр!

У меня к Вам очень серьезная просьба.

Я приступил к созданию труда по истории Древней Армении — самое собой на польском языке. Основной сюжет этого произведения несколько иной чем в существующих учебниках по армянской истории, и я намеревался посвятить наше древнее племя древней истории Армении (до Арташеса). Между прочим я посвящаю целую главу библейским преданиям о древней Армении. Вот общее содержание отдельных глав:

гл. I Библейская предыстория

гл. II География др. Армении

гл. III Сирия и Найри до создания Ванского царства

Պարույր Սևակին հասցեագրված նամակից մի էջ

ՆԱՄԱԿ ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿԻՆ*
Վարշավա, 26. 09. 1968 թ.

Թանկագին Պարույր: Ես քեզնից մի շատ լուրջ խնդրանք ունեմ:

Ես ձեռնամուխ եմ եղել Հին Հայաստանի պատմության վերաբերյալ աշխատություն գրելուն. ինքնին հասկանալի է՝ լեհերեն: Այդ ստեղծագործության սյուժեն մի փոքր այլ է, քան հայոց պատմության գոյություն ունեցող դասագրքերում, քանի որ ես մտադիր եմ ինը գլուխներից հինգը նվիրել Հայաստանի վաղ շրջանի պատմությանը (մինչև Արտաշեսը): Ի դեպ, ես մի ամբողջ գլուխ նվիրում եմ Հին Հայաստանի մասին բիբլիական ավանդույթներին: Ահա առանձին գլուխների ընդհանուր բովանդակությունը.

Գլուխ 1-ին— Բիբլիական նախապատմությունը.

Գլուխ 2-րդ— Հին Հայաստանի աշխարհագրությունը.

Գլուխ 3-րդ— Նաիրի երկիրը մինչև Վանի թագավորության ստեղծումը.

Գլուխ 4-րդ— Ուրարտուի թագավորությունը.

Գլուխ 5-րդ— Ուրարտուի անկումից մինչև Արտաշես.

Գլուխ 6-րդ— Հայաստանը Արտաշեսյանների օրոք.

Գլուխ 7-րդ— Հայաստանը Արշակունիների օրոք.

Գլուխ 8-րդ— Հայաստանը պարսկական լծի տակ մինչև երկրորդ ապստամբությունը (481—484).

Գլուխ 9-րդ— Հին Հայաստանի մշակույթը:

Այդ ամբողջ աշխատանքը ես մտադիր եմ նվիրել լավագույն բարեկամիս՝ Մարիա Գրոխոլսկային:

Իսկ հիմա անցնեմ քեզնից ունեցած իմ խնդրանքին:

Ես կուզենայի յուրաքանչյուր առանձին գլխում զետեղել տվյալ պատմական թեմայով որևէ հայկական բանաստեղծություն կամ, համենայն դեպս, այնպիսի բանաստեղծություն, որը կարելի լիներ տրամաբանորեն կապել այդ գլխի հետ:

Օրինակ, երկրորդ գլխում ես զետեղելու եմ Էմինի բանաստեղծությունը Հայաստանի լեռների և ձորերի մասին (Վորոշիլսկու թարգմանությամբ):

Հինգերորդ գլխի համար ես կհարմարեցնեմ Հովհաննես Հովհաննիսյանի բանաստեղծությունը Վահագնի ծննդի մասին:

Յոթերորդ գլխի համար՝ Վահան Տերյանի «Նաիրի» բանաստեղծությունը:

Ութերորդ գլխի համար կարող է լինել Ավետիք Իսահակյանի՝ հայ գուսաններին նվիրված բանաստեղծությունը, թեև կգերադասեի այդ ստեղծագործությունը պահպանել երկրորդ հատորի համար («Միջնադարյան Հայաստան»):

Իններորդ գլխի համար ես նախատեսել եմ ձեր «Քիչ ենք, բայց հայ ենք» հրաշալի բանաստեղծությունը:

Հիմա Դուք, հավանաբար, արդեն կռահում եք, թե ինչի մասին եմ մտադիր խնդրել Ձեզ:

Եթե չկան համապատասխան բանաստեղծություններ, դրանք պետք է ստեղծել.

Գլուխ 1-ին— Նոյը հայ, այլ ոչ թե հրեա ժողովրդի նախահայրն է. լողալով լեռնային կիրճերով, որոնում ենք հայկական ուղի դեպի Սև ծով:

Գլուխ 3-րդ— Օրինակ, բանաստեղծություն Հայկի մասին.

Գլուխ 4-րդ— Բանաստեղծություն Արա Գեղեցիկի կամ պարզապես Հին Ուրարտուի մասին.

Գլուխ 6-րդ— Ինչ-որ բան Արտաշեսի կամ Տիգրան Մեծի մասին.

Գլուխ 8-րդ— Բանաստեղծություն Վարդանանց մասին:

Ինքնին հասկանալի է, որ կխնդրեի ուղարկել դրանց ռուսերեն տողացի թարգմանությունը, որ ես կարողանամ դրանք լեհերեն թարգմանել:

Հասկանալի է, որ ես չեմ կարող խնդրել, որ Դուք գրեք այդ բանաստեղծությունները, բայց գուցե այդ սյուժեներից մեկը Ձեզ բաժին ընկնի: Իսկ մնացածները գուցե հետաքրքրեն Ձեր գրչակիցներին (Նաիրի Զարյան, Սիլվա Կապուտիկյան, Հովհաննես Շիրազ, Աշոտ Գրաշի, Սարմեն կամ նույնիսկ երիտասարդներից մեկը): Բանաստեղծությունը պետք է թարգմանվի լեհերեն, իսկ քանի որ «Հին Հայաստանը» ամենայն

* Տպագրվել է «Երեկոյան Երևան» թերթի 1990 թ. մարտի 12-ի հավելվածում՝ Հ. Կարճիկյանի հրապարակմամբ: (Նամակը տրամադրել է Հրանուշ Դանիելյանը):

հավանականությամբ կթարգմանվի այլ լեզուներով, ուստի և դրա հետ մեկտեղ կթարգմանվեն նաև այդ բանաստեղծությունները:

Ներեցեք, սիրելի Պարույր, որ ես խլում եմ Ձեր թանկագին ժամանակը, բայց վստահ եմ, որ Հին Հայաստանի պատմությունը, պատկերազարդված հրաշալի հայ պոեզիայով, զգալիորեն ավելի վառ կամրապնդվի օտար ընթերցողի գիտակցության մեջ:

Բարի եղեք սրտագին ողջույններ հաղորդել մեր թանկագին Ստ. Գալուստին*:

Անկեղծորեն՝ ձեր **Բոգդան Գեմբարսկի:**

* **Գալուստ Ստեփանյան**, Բազմավաստակ մանկավարժ: Պատերազմի ժամանակ եղել է պարտիզանական շարժման մասնակից Ուկրաինայում և Լեհաստանում: 1964-ի վերջերին հյուրընկալվել է Վարշավայում և հանդիպումներ ունեցել Գեմբարսկու հետ:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ ՆԱՄԱԿԸ Բ. ԳԵՄԲԱՐՍԿՈՒՆ*

Սիրելի և սիրելի Աստվածատուր Գեմբարսկի:

Իրավ աստվածատուր... Կարդացի Ձեր նամակը իմ բազմաչարչար հայ ժողովրդի մասին, ուղղված մեր բազմադարյան, քթամիտ հարևանին: Արցունքով լցվեցին իմ սրտի վաղուց քարացած աչքերը: Ահա մի մարդ, որ նորից ձայն բարձրացրեց կեսից ավելին կոտորված ժողովրդի՝ նրանից խլված վիթխարածավալ հողերի, գրեթե ողջ խլված երկրի մասին: Ինչքան ազնիվ արդարություն կա Ձեր սրտի մեջ, կարծես Ձեր մեծ սրտում մի բազկատարած հայուհի է խոսում անիծյալ աստծո հետ, որ չկարողացավ հաղթել նզովյալ ալլահին... Եվ ինչպե՞ս չի ամաչում աշխարհը, լռում է ժայռեղեն լռությամբ, և ինչպես հոյակապ էիք վերլուծել 20-րդ դարի ամբողջ պատկերը, ինչպես մի աստվածային հայելու մեջ, թող ամաչեն, թող դժոխքը չքվեն արդարության անունից խոսող բոլոր սատանաները, որոնց ձեռքերը և հոգու բոլոր մատները արյունոտ են... հայկական, լեհական և հրեական արյունով:...

Խոսք չեմ գտնում Ձեզ գովաբանելու, և ինչպես իմ նախահայր, հավիտենական անմահ Մովսես Խորենացին է գրում հայ իշխան Սահակ Բագրատունուն, ուզում եմ ես էլ նրա խոսքը ուղղել Ձեզ, թե նախքան Ձեզ ծանոթանալը ես ծաթոնացա Ձեր հոգու մեջ եղած աստվածային ազնիվ շարժմանը, խղճի իմաստությամբ լի ծով արցունքին և օրհնում, և աղոթում եմ, որ միշտ այդպես մնաք ոչ միայն հայկական հարցի դատի պաշտպանը, որը ամենալլկված դատն է աշխարհի, այլ բոլոր ժողովուրդների համար: Ձեր նամակը Ձեր հոգու բոլոր էջերն են և բոլոր էջերի վրա գրած, ահա մեծ մարդը:

Հայ ժողովրդի բոլոր շուրթերով, որոնք մաքուր են ինչպես միայն երկնքի աստղերը, համբուրում եմ քեզ և քո ազ-

* Տպագրվել է «Երեկոյան Երևան» թերթի 1989 թ. դեկտեմբերի 15-ի համարում՝ Անահիտ Տեր-Ղազարյանի հրապարակմամբ:

գը: Եթե գիտենայի՝ աշխարհի բոլոր դաշտերի ծաղիկները նույնպես մաքուր են աստղերի նման, նրանցով էլ կհամբուրեի Ձեզ:

Հավատում եմ՝ հայոց դատը չի կորչի,
Անմեղ ազգը՝ անապատը չի կորչի,
Ամեն փոքր մեծերին է հավասար՝
Դժոխքում էլ Արարատը չի կորչի:

Ծանոթություն. մինչև Արարատի սուրբ ձյունի վրա համբուրվենք բոլոր ազգերի խաղաղության հավերժական հաղթանակով:

Հովհ. Շիրազ

ՈՎ ԷՐ ԲՈԳԴԱՆ ԳԵՄԲԱՐՍԿԻՆ

Այն ամենի համար, ինչ եղել է,
այն ամենի՝ ինչ կա
և
կլինի,
խոնարհվում եմ Ձեր առաջ,
թանկագին Գեմբարսկի,
ազնի՛վ ժողովրդի
ազնի՛վ որդի:

Գարուշ Սեակ
(14. 2. 65 թ. նամակից)*

I

Մարդկության արժանավոր որդիներից մեկը՝ լեհ ժողովրդի զավակ Բոգդան (Ալեքսանդր) Անտոնիի Գեմբարսկին ծնվել է 1905 թ. փետրվարի 27-ին, Պետերբուրգում: Տեղում դպրոցն ավարտելուց հետո երկու տարի ուսուցչություն է արել տարրական դասարաններում: 1924 թ. մշտական բնակության է տեղափոխվել Վարշավա: Ավարտել է Վարշավայի Արևելյան կենդանի լեզուների ինստիտուտը:

1935-ից սկսած կարդացել է դասախոսություններ հայ գրականության վերաբերյալ՝ հին օրերից մինչև ներկա օրերը:

Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ակտիվորեն պայքարել է ֆաշիզմի դեմ, եղել է 1944-ի Վարշավայի հակաֆաշիստական ապստամբության կազմակերպիչներից: Ընկել է համակենտրոնացման ճամբար: Պատերազմից հետո զբաղվել է հասարակական լայն գործունեությամբ. մասնակցել է տարբեր ճամբարներից անչափահաս լեհերին հայրենիք վերադարձնելու գործին: Խմբագրել է տարբեր թերթեր ու ամսագրեր:

1956 թ. կարճատև այցով եղել է Հայաստանում, «Գրական թերթում» տպագրել լեհացած անվանի հայերի մասին հոդվածը:

---

* Տե՛ս, «Երիտասարդ Երևան»-ի 1989 թ. դեկտ. 15-ի համարը:

Երկար տարիներ զբաղվել է հնդիկ և հայ գրողների երկերի թարգմանությամբ: Կազմել, թարգմանել ու խմբագրել է հայ գրողների երկերը երկու հատորով՝ գողթան երգերից մինչև ժամանակակից հեղինակները:

1961 թվականից սկսած մինչև կյանքի վերջը զբաղվել է հայկական հարցով, հայ ժողովրդի հանիրավի մոռացության տրված Արդար դատը բարձրացնելով միջազգային ասպարեզ՝ ապացուցելով հարցի լուծման կարևորությունն ու անհրաժեշտությունը ժամանակակից աշխարհի քաղաքակրթության ու ապագայի համար:

Գրել է վիպակ 1915 թ. մեծ եղեռնի թեմայով («Մահվան դատապարտվածները»)*: 60-ականներից սկսած նամակագրական կապեր է ունեցել ինչպես սփյուռքի, այնպես էլ Հայաստանի հայ մշակույթի և գրականության գործիչների հետ (Մ. Սարյան, Պ. Սևակ, Հ. Շիրազ, Ն. Զարյան, Գ. Էմին և ուրիշներ): 1969 թ. պարգևատրվել է ԼԺՀ-ի «Վերածնության խաչ» մեդալով: Մահացել է 1978 թվականի մարտի 20-ին, թաղված է Վարշավայի Բրուդնա գերեզմանոցում:

II

1961 թվականի նոյեմբերի 20-ին Վարշավայի «Կյորունկի» («Ուղղություններ») շաբաթաթերթում տպագրվեց Բ. Գեմբարսկու «Նամակ իմ հին թուրք ծանոթին» հոդվածը, որը արագ տարածվեց մեզանում՝ հայերեն և ռուսերեն թարգմանությամբ. թարգմանությունը կատարել էր Երևանում ապրող լեհուհի Մարիա Գրոխոլսկան՝ «համար մեկ հայուհին», ինչպես նրան դիպուկ գնահատել է Պարույր Սևակը:

Գեմբարսկու հոդվածի առթիվ նույն շաբաթաթերթում հանդես է եկել ոմն Հենրի Բատովսկի՝ «Նամակ խմբագրությանը Հայկական հարցի և Թուրքիայի ու ԽՍՀՄ-ի սահմանի մասին»: Բատովսկին ինչ-որ չափով հավանություն տալով Գեմբարսկուն, առարկում է սահմանային հարցերի վերանայման նրա դիրքորոշմանը, համարելով դրանք պատմության սրդյունք: Նույն շաբաթաթերթի 1962 թ. հուլիսի 1-ի համարում (№ 26) տպագրվում է Հայաստանի գիտությունների Ակադեմիայի պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պատմական գի-

* Մի հատված տե՛ս «Գրական թերթ»-ի 1990 թ. ապրիլի 20-ի համարում Ա. Տեր-Ղազարյանի թարգմանությամբ:

տությունների թեկնածու Նիկոլ Կարապետյանի «Հ. Բատովսկին իրավացի չէ» պատասխան հոդվածը՝ վեր հանելով Բատովսկու սխալները և պաշտպանության տակ առնելով Բոգդան Գեմբարսկուն*:

Ն. Կարապետյանը իր հոդվածը ավարտում էր հետևյալ ընդհանրացմամբ. «Հայկական հարցի արդարացի և վերջնական լուծումը նույնքան, եթե ոչ ավելի պատվավոր խնդիր է ժամանակակից պատմության, ինչպես լեհական, հրեական հարցերի լուծումը, ինչպես Ասիայի, Աֆրիկայի, լատինա-ամերիկյան ժողովուրդների օտարերկրյա լծից ազատագրելու հարցը»: (Ն. Կարապետյանը հետագայում հեռացվեց կուսակցությունից ու աշխատանքից, որը և նրա մահվան պատճառը դարձավ):

III

60-ական թվականներին, Եղեռնի 50-ամյակին նախորդող տարիներին, սկսեց արթնացում ապրել ժողովրդի մեջ «սպանված» հայրենասիրական գենը: Դրան նպաստեցին անհատի պաշտամունքի վերացման ուղղությամբ ծավալված խրուշչովյան համառ ջանքերը, ինչպես նաև աշխարհում գաղութատիրության փլուզումը: Մեզանում դրան մեծապես նպաստեցին նաև Գեմբարսկու առաջին նամակները:

Տեղի ունեցավ իմ սերնդի առաջին արթնացումը երկարատև լեթարգիական քնից: Առաջին շարքերում դարձյալ մեր երիտասարդությունն էր: (Այդ արթնացման գագաթնակետը դարձան 65 թվականի ապրիլի 24-ի հզոր ցույցերն ու երթերը):

Դեռ նոր էր ձեռքից-ձեռք շրջում Գեմբարսկու առաջին նամակը, երբ ինձ առիթ ներկայացավ մեկնելու Լեհաստան:

Արդեն ծանոթ էի Բոգդան Գեմբարսկու առաջին հոդվածին՝ «Նամակ իմ հին թուրք ծանոթին», ուր հեղինակը աշխարհով մեկ բարձրացնում էր հայոց դատի հարցը: Այն օրերին այս հոդված-նամակը ընթերցվում էր գաղտնի, զգուշորեն և հույսեր էր վառում երիտասարդության սրտերում:

IV

1962 թ. օգոստոսն էր: Զբոսաշրջիկներիս խումբը՝ երի-

* Տե՛ս Հ. Կարճիկյան, «Բոգդան Գեմբարսկու սխրանքը», «Հայրենիքի ձայն», 1990, ապրիլի 26:

տասարդական: Մոսկվայից գնացքով մեկնեցինք Բրեստ, Բրեստից՝ Վարշավա: Եղանք Պոզնանում: Հանգստացանք Բալթիկանի ափերին՝ Ծչեցինում, միջազգային ուսանողական ճամբարում: Նորից Վարշավա: Ես ընկերներիս և մեզ ընկերացած Վարշավայի համալսարանի ուսանող Յանոշ Ռուդկովսկուն պատմեցի Գեմբարսկու մասին, նրա հիշարժան հոդվածի մասին և խնդրեցի, եթե հնարավոր է հանդիպել նրան: Ընկերներս նույնպես ոգևորվեցին: Յանոշը քրքրեց հեռախոսագրքերը: Հեռախոսագրքում գեմբարսկիները շատ էին: Չէր պատասխանում միայն մեկի հեռախոսը: Մի քանի օր փորձելուց հետո, մեր մեկնելու նախավերջին օրը հեռախոսը պատասխանեց... Օգոստոսի 28-ի երեկոյան էր: Պարզվեց, որ Գեմբարսկին հենց նոր է վերադարձել ծովափից, հոգնած է, ընտանիքն էլ վերադառնալու է առավոտյան, հետևաբար հյուրեր չի կարող ընդունել: Ես խնդրեցի Յանոշին՝ բացատրի, որ մենք Երևանից ենք, հայեր ենք և վաղը մեկնում ենք և շատ ենք ուզում իրեն հանդիպել: Այդ իմանալով Գեմբարսկին իսկույն մեզ հրավիրեց տուն:

Հաջողությունը մեզ հետ էր և մեր ոգևորությանը չափ չկար: Բայց կար «խանգարող» հանգամանք. մեկ ժամ հետո մեր զբոսաշրջիկների խումբը ամբողջ կազմով (մեծ մասամբ բժշկականի և պոլիտեխնիկի ուսանողներ) մեկնելու էր համերգ լսել-դիտելու: Մենք կարողացանք տարբեր պատրվակներով հրաժարվել համերգից: Մեր ընկերները հետո մեզ պատմում ու նախատում էին, թե ինչից ենք զրկվել: Բայց մենք (ես, նկարիչ Ժորա Պարոնյանը, բանվոր-ուսանող Սարգիս Տիգրանյանը) Յանոշի ուղեկցությամբ վերջին մեր գլոտիներով գնելով մի շիշ լեհական գինի (վերջին օրը մեզ մոտ կոնյակ որտեղի՞ց), գաղտնիությամբ պարուրված, հայտնվեցինք Վարշավայի Ստոլեչնա փողոցի № 14 շենքի 184-րդ բնակարանում՝ դառնալով ծովափից մի քանի ժամ առաջ տուն վերադարձած Բոգդան Գեմբարսկու հյուրը:

Դա աստվածային ու երջանիկ օր էր: Դա մեր ապրած ու առավել ևս՝ ապրելիք կյանքի իմաստավորման օրն էր: Նրա գրասեղանին դրված էր Հայկական ԽՍՀ ատլասը: Պահարանում՝ հայկական կոնյակներ: Մի քանի ժամ տևեց մեր զրույցը: Մենք կախարդված էինք նրա մարդկային հմայքից, հայ գրականության ու պատմության նրա իմացությունից: Նրա մեծ

հավատից, թե մի օր կլուծվի հայ ժողովրդի Արդար դատը՝ ընդդեմ թուրք գաղութատիրության:

Ես նրան նվիրեցի «Մատենադարան» գիրքը (կարծեմ բոլորս մակագրեցինք գրքի վրա): Նա ձեռքն առավ, թերթեցնալեց հին ձեռագրերի գունավոր վերատպությունները, ժպտաց.

— Այսպիսի եզակի գանձեր ստեղծած ժողովուրդը իրավունք չունի իր պատմական հայրենիքից զրկված մնալու:

Հետաքրքրվեցի իր ծագմամբ:

— Հայկական ծագում չունեմ,— ասաց,— բայց Լեհաստանում ապրող հայ ընկերներ շատ եմ ունեցել:

Նա ինձ նվիրեց իր լուսանկարներից մեկը.

— Ռուսերե՞ն մակագրեմ...

— Ոչ, լեհերեն,— խնդրեցի ես:

(Այդ լուսանկարը տպագրվեց «Երեկոյան Երևան» թերթի 1989 թ. նոյեմբերի 27-ի համարում):

— Լուսանկարում կանգնած անձը հայ է,— ասաց,— Ստանիսլավ Դոնիկևիչ...

Նա մեզ ցույց տվեց նաև ափյուռքահայ թերթեր, ուր տպագրված էին իր հոդվածները, ցույց տվեց նամակներ, որոնք ստացվել էին արտասահմանից ու Հայաստանից: Գոհունակությունն հայտնեց Ն. Կարապետյանի պաշտպանական հոդվածի առթիվ: Մեզ խնդրեց կարդալ իր ստացած նամակներից մի քանիսը:

— Բովանդակությունը գիտեմ,— ասաց,— ուզում եմ լսել հայերեն հնչողությամբ:

Այսօր էլ աչքերիս առաջ է Մարտիրոս Սարյանի մարգարտյա ձեռագիրը, որը ընթերցեցի բարձրաձայն և մեծ հուզմունքով (նամակը տպագրվում է այս գրքի սկզբում): Կարծում եմ պետք է լիներ նաև Պ. Սևակի նամակը՝ ռուսերեն (լավ չեմ հիշում):

Մենք իրար հերթ չտալով հարցեր էինք տալիս և պատասխանում նրա հարցերին...

... Թերթեցինք Հայկական ԽՍՀ-ի ատլասը: Հատկապես կանգ առանք 58-րդ էջի «Հայ բնակչության տեղաբաշխումը 1914 թ.» և 108-րդ էջի «Հայաստանը... 1917—1921 թթ.» քարտեզների վրա, որոնք պարզ ցույց էին տալիս մեծ եղեռնի հետևանքները և Սևրի դաշնագրով (1920 օգոստոսի 10) գնծված Հայաստանի պատկերը:

— Իմ նպատակն է աշխարհին ապացուցել, որ հայերը իրավունք ունեն հետ ստանալու իրենց պատմական հայրենիքի գեթ մի մասը, որին Թուրքիան տեր է դարձել բռնաջնջման ապօրինի մեթոդներով...

... Գեմբարսկուն խնդրեցինք հյուր գալ Հայաստան:

Պատմեց, որ երբ կնոջ՝ Զոսյայի հետ բուժման է եղել Խորհրդային Միությունում (կարծեմ Հյուսիսային Կովկասում), այցելել է Հայաստան: Եվ նորից կգա այն ժամանակ, երբ շուտով հայերին կվերադարձվեն նրանցից անարդար ձևով խլված հողերը:

— Կգամ մի քանի տարի հետո, կգամ ձեր Մեծ տոնին,— ժպտաց հավատով:

(Այդպիսի ներազդող ժպիտ ես հետո տեսա Պ. Սևակի մոտ):

Իմանալով, որ աշխատում եմ ուսումնական հրատարակչությունում, խնդրեց հայոց լեզվի դասագրքեր, ինքնուսույցներ:

— Էմինը խոստացավ, բայց չուղարկեց...

Մեր հանդիպման գագաթնակետը եղավ այն, որ ոգևորված մեր ոգևորությունից, Գեմբարսկին ինձ տրամադրեց իր նամակներից մեկը՝ հասցեագրված Հնդկաստանի այն ժամանակվա պրեզիդենտ Ռադհակրիշնանին: Մեքենագիր օրինակ չուներ: Նամակի ձեռագիրը՝ ռուսերեն, 12 էջ՝ 6 թերթի զույգ էջերում, գրված կապույտ և կարմիր թանաքով, ես ինձ հետ բերեցի Երևան: Մեքենագրել տալուց հետո նրան ուղարկեցի մեքենագիր օրինակը, ձեռագիրը պահելով ինձ, որպես թանկագին մասունք:

... Երբ դուրս եկանք Գեմբարսկու բնակարանից, մեր ուրախությանը չափ չկար. պարում էինք աստիճանների վրա, փողոցում: Յանոշը՝ իրավաբանական ֆակուլտետի ուսանողը, որը կարճ ժամանակ անց հյուր եղավ մեզ՝ Երևանում, զարմացած մեզ էր նայում.

— Ձեզ հիմա՛ հասկացա...

Օգոստոսի 29-ի առավոտյան Գեմբարսկին ծովափից վերադարձած իր ուսանող որդուն՝ Կազիմիրին ուղարկեց մեզ մոտ՝ հյուրանոց, որը և մեզ ուղեկցեց երկաթուղային կայարան: Հիշում եմ, որ Կազիմիրը ցանկություն հայտնեց պրակտիկայի գալ Բյուրականի աստղադիտարան...

V

Ես նամակագրություն ունեցա և՛ հոր, և՛ որդու հետ:

... Վրա հասան դժվարին օրեր: Հետապնդվում էին Գեմբարսկու նամակները ընթերցող-տարածողները: Թուրքիան բողոքել էր Լեհաստանի արտգործմինիստրությանը: Գեմբարսկուն արգելվել էր լեհական մամուլում հանդես գալ հայկական հարցի վերաբերյալ: Ճնշում էր գործադրել նաև Մոսկվան:

Մոտենում էր մեծ Եղեռնի՝ հայկական ցեղասպանության 50-ամյակը: Գեմբարսկին, լինելով իր ժողովրդի խղճի ձայնը, չլռեց. նրա նորանոր հոդվածները տարածվում էին աշխարհում՝ տարբեր լեզուներով...

... Գեմբարսկին ենթարկվեց ավտովթարի (1965 թ. հուլիսի 16-ին): Զգոհվեց, բայց մնաց կաղ մինչև կյանքի վերջը:

... Այդ մթնոլորտում բարձրաձայն խոսել Գեմբարսկու մասին կամ շարունակել նամակագրությունը անհնարին էր...

VI

Արշակ Մադոյանը համալսարանի թերթում հոդված տպագրեց Գեմբարսկու մասին՝ իմ տված Գեմբարսկու և Էմինի լուսանկարով:

... Երբ 1965-ին նա մեկնում էր Լեհաստան, ես նրան խնդրեցի գրքեր տանել Գեմբարսկուն*:

Արշակը Գեմբարսկուն այցելել էր այն ժամանակ, երբ նա, ապաքինված ավտովթարից, հիվանդանոցից նոր էր վերադարձել տուն: Եվ պատմել էր իր վրա կատարվող ճնշումների մասին: Արշակը իր հետ բերեց լեհական թերթերից մեկերկու օրինակ, ուր Եղեռնի 50-ամյակի առթիվ տպագրված էր նրա «Սիրիական անապատ» հոդվածը:

Արշակն ու ես այցելեցինք Մարիա Գրոխոլսկային՝ Երևանի իր բնակարանում, ում և նա հանձնեց թերթերից մեկը:

Մարիան պատմեց, որ իմ «Ակրոստիքոս» բանաստեղծությունը Գեմբարսկին ուղարկել էր իրեն՝ թարգմանելու համար: Բայց քանի որ ինձ չէր ճանաչում և օրերն էլ խառն էին, չի կատարել նրա խնդրանքը...

---

* Տե՛ս Ա. Մադոյան, «Մեր սա Հայաստան», «Երեկոյան Երևան», 1990, մարտի 12:

Ահա այդ բանաստեղծությունը (որը նամակի հետ ուղարկել էի նրան).

ՁԿՐՈՍՏԻՔՈՍ*

Թող ողողվի նա արևի ամպի լույսով,
Ով կանգնել է մեր արքազան դատին պաշտպան,
Ողողանջելով թող արևը երգի այսօր.
Կա Մարդը դեռ՝ լցված լույսով իմաստության:

Երազների անհուսալի սահմաններում
Ցանեց սերմեր նա արևի ու արդարի,
Ցանեց հույսի պայծառ հունդը բյուր սրտերում
Եվ ողողանջեց ի լուր մարդկանց ցա՛վը դարի...

Գարնանային արևի պես պարզեց վառման
Երազների, արդարության դրոշը խենթ,
Մեր ցավերով միշտ տառապեց եղբոր նման,
Բացեց ճամփան, որով պիտի հաղթենք հավետ...

Արարատի սուրբ փեշերից այսօր ահա
Թանվիրային այդ բոցափայլ փառք եմ մաղթում,
Սեղմում նրա արդար աչքը որդիաբար,
Կանգնում հպարտ և հավատով Արարատավում...

Իմ արևը, կյանքը շահել, ով բնություն,
Նրան դու տուր և տուր նրան հավերժություն...

1965 թ.

... Մարիա Գրոխոլսկան, որ Գեմբարսկուն ծանոթ էր 1956 թվականից, մեծ ավանդ ունի Գեմբարսկու հոդվածները հայերեն և ռուսերեն թարգմանելու և տարածելու գործում: Ծնվել է Պետերբուրգում, սկզբնական կրթությունը ստացել այնտեղ: Սակայն շփվելով հայ գրականությանը ու պատմությանը, արևելագիտության ինստիտուտի 4-րդ կուրսը թողած, 1939 թ. եկել է Երևան: Ապրել է դժվարին կյանքով: Ավարտել է Երևանի պետական համալսարանը: Եղել հայոց լեզվի ասպիրանտ: Աշխատել է գիշերային պահակ՝ Ալյումինի գործարանում: Ռուսերենի դասեր է տվել Էջմիածնի հոգևոր ճեմարանում: Նրան մեղադրելով հայ նացիոնալիզմի մեջ՝ հեռացնում են ճեմարանից: Բայց միշտ Ամենայն Հայոց կաթողիկոսը նրան հովանավորել է: Նրան հովանավորել են նաև Մ. Սարյանը, Հ. Քոչարը: Ճեմարանից հետո նա հայերեն է դասավանդել Քանաքեռի ռուսական դպրոցում: 1968-ին Մարիան տեղափոխվել է Լենինական: Գրոնինկ քաղաքի ուսումնարանում դասավանդել է ռուսերեն: Ամեն տարի արձակուրդներին եկել է Հայաստան: Հայերեն է թարգմանել Ստանիսլավ Լեմի «Սոլյարիս», Սինկովսկու «Նապոլեոնի ատամը» վիպակները: 1978 թ., Գեմբարսկու մահից հետո Գրոխոլսկան շտապում է Երևան և սեպտեմբերի 10-ին Վազգեն Առաջինի միջոցով Էջմիածնի Սուրբ Առաքելոց եկեղեցում կազմակերպում նրա հոգեհանգիստը: Պատարագում էր Ամենայն Հայոց կաթողիկոսը: Գրոխոլսկան ձայնագրում է ողջ պատարագը և կաթողիկոսի նվիրած մարմարե խաչքարի հետ հասցնում Գեմբարսկու ընտանիքին:

Կաթողիկոսի նվիրած մարմարե հայոց խաչքարը այժմ զարդարում է Մեծ լեհի շիրիմը՝ Վարշավայի գերեզմանոցում: Վերջին անգամ Գրոխոլսկան Երևան է այցելել 1988 թ. հունիսին, տեսել ցույցերն ու միտինգները, Զվարթնոցի իրադարձությունները, իր սիրած հայ ժողովրդի համախմբվածությունը: Երևանից մեկնում է Լենինգրադ՝ հարազատների մոտ, որտեղ և հեռուստատեսության միջոցով ականատես լինում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1988 թ. հուլիսի 18-ի նիստին: Որից հետո նա զայրալից նամակ է ուղարկում Գորբաչովին՝ պաշտպանելով հայ ժողովրդի հազարամյա իրավունքը Ղարաբաղի նկատմամբ: Վերջին տարիներին Մ. Գրոխոլսկան եղել է իր հայրենիքի «Համերաշխություն» կազմակերպության ակտիվ անդամներից:

Մահացել է 1989 թ. փետրվարի 27-ին՝ Վարշավայի հիվանդանոցներից մեկում: (Հիշենք, որ փետրվարի 27-ը Գեմբարսկու ծննդյան օրն է): 1989 թ. մարտին Էջմիածնում հոգեհանգստի պատարագ է տրվել նրա հիշատակին՝ Վազգեն

* Տպագրվել է «Երեկոյան Երևան» թերթի 1990 թ. մարտի 12-ի համարում:

Առաջինի մասնակցությամբ, Մարիայի համակուրսեցիների, ընկեր-բարեկամների ներկայությամբ*:

Նրա կատարած հայասիրական անձնազոհ գործը չի մոռացվի մեր ժողովրդի սրտում՝ միշտ մնալով Բոգդան Գեմբարսկու պայծառ անվան կողքին:

VII

Երբ 28 տարի առաջ ինձ բախտ վիճակվեց այցելել Գեմբարսկուն, չէի կարող մտածել, թե երբևէ ինձ պատիվ կվիճակվի Հայաստանում հրատարակել նրա հոդվածները: Ես գիտակցաբար չեմ փորձում արժեքավորել նրա այս նամակ-հոդվածների տեղն ու դերը հայ ժողովրդի Արդար դատի պաշտպանության գործում: Չեմ ուզում նշել նրա որոշ մտքերի իրավացիությունն ու ոչ իրավացիությունը: Լինելով մեծ մարդասեր, արդարության հաղթանակի երդվյալ հավատացյալ, նա հույս էր փայփայում, թե թուրքերը, հանուն համաշխարհային ամոթը իրենց դեմքից մաքրելու, իրենք հայերին կվերադարձնեն նրանց հողերը: Հայոց դատը լուծելու համար նա նույնիսկ փորձեց արևմտահայությանը և արևելահայությանը ներկայացնել որպես առանձին ժողովուրդներ: Անում էր ամեն ինչ, միայն թե մեղյալ կետից շարժեր անարդար ու դիտավորյալ ձևով մոռացության տրված հայ ժողովրդի բռնադատված հայրենիքի ու ճակատագրի արդար լուծման հարցը:

Մի բան պարզ է միայն. իր ժամանակին Գեմբարսկու հոդվածներն ու բաց նամակները հսկայական լուսարձակի պես ճեղքեցին Թալեաթ-Աթաթուրք-Ստալին-Բերիա բանդիտների ու կեղծ հեղափոխականների կողմից Հայաստանի ու Հայկական հարցի շուրջը ստեղծված անթափանց խավարի պատնեշը...

... Ես ուրախ եմ, որ 1989 թ. աշնանը, երբ «Երեկոյան Երևան» թերթին տրամադրեցի Գեմբարսկու «Բաց նամակը» Ու Տանին, նշելով նրա վարշավյան հասցեն, առիթ դարձավ, որ խմբագրությունը խնդրի Վարշավա մեկնող Անահիտ ՏերՂազարյանին՝ այցելելու նրա ընտանիքին: Անահիտը բերեց Գեմբարսկուն հասցեագրված Մ. Սարյանի, Պ. Սևակի, Հ. Ծիրազի անզուգական նամակները, Ն. Զարյանի երեք նամակը, Վազգեն Առաջինին հասցեագրված նամակը (հոդվածով), «Մահվան դատապարտվածները» վիպակը՝ հայկական ցեղասպանության մասին, որոնք նրան տրամադրել էին Գեմբարսկու այրին՝ Զոսյան, որդին՝ Կազիմիրը, դուստրը՝ նույնպես Զոսյա:

Այսպես ասած, վերակառուցման ու բացխոսության այս օրերին՝ սառույցը տեղից շարժվել է...

Սույն ժողովածուն հայկական հարցի վերաբերյալ Գեմբարսկու հոդվածների մի մասն է միայն, այն՝ ինչ-որ կար մեր ձեռքի տակ: Կարծում եմ, նրա շատ հոդվածներ (նաև՝ Չերչիլին ու Ներուին հասցեագրված) կհրապարակեն ուրիշները:

Կապը Գեմբարսկիների ընտանիքի հետ կօգնի ի մի բերելու Հայկական հարցի վերաբերյալ Բոգդան Գեմբարսկու բոլոր հոդվածներն ու աշխատությունները, հարցի վերաբերյալ նրան հասցեագրված հայ և օտարերկրացի մտավորականության, հասարակական ու պետական գործիչների բոլոր արժեքավոր նամակները:

Գեմբարսկին Հայկական հարցի վերաբերյալ հանդես եկավ Մեծ եղեռնի 50-ամյակի առիթով: Այսօր, երբ լրանում է Եղեռնի 75 տարին, նրա նամակ-հոդվածները հնչում են նորովի, որպես կրակված սրտի բողոք ու զայրույթ՝ թուրքերի գործած անմարդկային ու անասնական ոճիրների և աշխարհի անտարբերության հանդեպ: Այսօր Գեմբարսկու նամակները ապտակ են բոլոր նրանց, անկախ ազգությունից, ովքեր դեռևս փորձում են փակել Հայկական հարցը, ովքեր դեռևս փորձում են խեղդել վերջին տարիներին Արցախյան շարժումից սկիզբ առած ու վերելք ապրող Հայոց ազատագրական շարժումները՝ հանուն արդարության, ինքնորոշման ու ազատության:

Այդ նամակները այսօր ապտակ են նաև բոլոր նրանց (Մոսկվայից մինչև Անկարա ու Բաքու), ովքեր կեղծելով ու Լդծելով սոցիալիզմը, քողարկված կեղծ ինտերնացիոնալիզմով, զոհել են Հայաստանը, վաճառել հայի պատմական հայրենիքը, և 70 տարուց ավելի շրջափակման ենթարկել նրա հազարամյա պատմությունն ու մշակույթը, այսօր էլ անցնելով տնտեսական ու քաղաքական շրջափակման:

* Սույն կենսագրական տվյալները Մ. Գրոխոլսկայի մասին տրամադրել է նրա մտերիմ ընկերուհի՝ Հրանուշ Դանիելյանը: Տե՛ս նաև «Գրություն» հայկական բարեգործական միության «Լուսավորիչ» պաշտոնաթերթի 1990 թ. փետրվարի № 2(3) և «Գրական թերթ», 11. 5. 90:

Վերջին տարիներին, երբ խորհրդային երկիրը փորձ է անում քայլ կատարել դեպի խոսքի (բայց ոչ՝ գործի) ազատություն, խաբված ու բռնադատված հայ ժողովուրդը ոտքի է ելել իր ազատության, իր հայրենիքի բռնադատված հատվածների ամբողջականության ու միասնության համար:

Մեր արդարացի, մեր բարոյաիրավաբանական ճշմարիտ պայքարում մեզ հետ են աշխարհի մեծ հումանիստները՝ Բայրոնն ու Բարբյուսը, Նանսենն ու Վերֆելը, Վեսելովսկին ու Բրյուսովը, Գորկին ու Սախարովը...

Մեզ հետ է լեհ ժողովրդի մեծ զավակը՝ Բոգդան Գեմբարսկին:

Համլետ Կարճիկյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մարտիրոս Սարյանի նամակը Բ. Գեմբարսկուն 3

Նամակ իմ հին թուրք ծանոթին (թարգմ. Մ. Գրոխոլսկա) . . 5

Բաց նամակ Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղար, նորին մեծություն պարոն Ու Տանին (թարգմ. Մ. Գ.) 19

Բաց նամակ Հնդկաստանի պրեզիդենտ Նորին գերազանցություն պարոն Սարվապալի Ռադհակրիշնանին (թարգմ. Կ. Ազարյան) . 33

Նամակ իմ հայ ընթերցողներին (թարգմ. Կ. Պապինյան) . . . 47

Երեք նամակ աշխարհի ընթերցողներին (թարգմ. Մ. Գ.)

ա) Առաջին նամակը իմ անծանոթ ընթերցողին (որի մեջ հիշեցնում եմ նրան 12 մոռացված ճշմարտությունները) 64

բ) Երկրորդ նամակ իմ անծանոթ ընթերցողին (որի մեջ պատմում եմ նրան այնպիսի փաստեր, որոնք խայտառակեցին ամբողջ մարդկությանը) 78

գ) Երրորդ նամակ իմ անծանոթ ընթերցողին (որի մեջ էստաֆետը հանձնում եմ նրա ձեռքը) 92

Շրջանի հայկական քառակուսին ունի իր լուծումը (նամակ Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին) (թարգմ. Մ. Գ.) . . 104

Հավելված 1

«Նամակ թուրք մտավորականներին»-ի վերջավորությունը (թարգմ. Մ. Գ.) 118

Հավելված 2

Սիրիական անապատ (թարգմ. Գ. Մաղոյան) 121

Հավելված 3

Նամակ Պ. Սևակին 132

Հ. Շիրազի նամակը Բ. Գեմբարսկուն 135

Ով էր Բոգդան Գեմբարսկին (Հ. Կարճիկյան) 137

ԲՈԳԴԱՆ ԱՆՏՈՆԻԻ ԳԵՄԲԱՐՍԿԻ
ԴԱՄԱԿՆԵՐ ԱՇԽԱՐՀԻՆ

Հրատարակության է ներկայացրել
համալսարանի հայագիտության
գիտահետազոտական լաբորատորիան

Հրատարակչության խմբագիր՝ **Գ. Գ. Բրուտյան**
Գեղարվեստական խմբագիր՝ **Ն. Ա. Թովմասյան**
Տեխնիկական խմբագիր՝ **Գ. Վ. Նալբանդյան**
Վերստուգող սրբագրիչ՝ **Ս. Ա. Ղալթախչյան**

ГЕМБАРСКИ БОГДАН АНТОНИЕВИЧ
ПИСЬМА МИРУ
(на армянском языке)
Издательство Ереванского университета
Ереван—1990

Հանձնված է շարվածքի 16. 03. 1990 թ.: Ստորագրված է տպագ
8. 05. 1990 թ.: ՎՖ 05076: Չափսը 84×108 1/32: Թուղթ № 1: Տառա
«Նորք»: Տպագրության եղանակը «Բարձր»: Հրատարակչական 7
Տպագրական 4,75 մամուլ=7,98 պայմանական մամուլի: Տպաքանակ՝
Պատվեր՝ 301: Գինը՝ 1 ռ. 10 կ.:
Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, Մռավյան փ.
Издательство Ереванского университета, Ереван, ул. Мравяна,

Երևանի համալսարանի տպարան, Երևան, Աբովյան փ. № 5
Типография Ереванского университета, Ереван, ул. Абовяна,

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ
ԼՈՒՅՍ Է ԸՆԾԱՑԵԼ

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԴՈՆՑ
Հայկական հարցի լուծման շուրջ

ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

ՔՐԻՍՏԱՓՈՐ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ,
Հեղափոխականի մտքերը

Գ. ՋԱՆՇԻԵՎ, Ա. ԱՄՖԻՏԵԱՏՐՈՎ,
Հայկական հարցը (ռուսերեն)

Ա. ՋԻՎԵԼԵԳՈՎ,
Հայկական հարցը